

1163

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ



ՈՒՍՄԱՆ ՍՈՒՎԵՆՆԵՐ

ԶՈՐՐՈՐԴ ԲԱՐԵՓՈՒԱԾ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱԶՄԵՑ Զ. ԵԼԻԲԵԿՅԱՆ

ՊԵՏՏՐԱՏ—ՈՒՍՄԱՆ ԿՅՐԱՏԲԱԺԻՆ

91(075)
5-28

Ա Ն

1932

91(075)

5-28


15 NOV 2011

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՄԱՆ III-IV ՏԱՐԻՆԵՐ

ՉՈՐՐՈՐԴ ԲԱՐԵՓՈՒԱԾ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ


ԿԱԶՄԵՑ Զ. ԵԼԻԲԵԿՅԱՆ



1008
34572

1163

ՊԵՏՏՐԱՏ - ՈՒՍՄԱՆԿԱԶՐԱՏԲԱԺԻՆ



1932

Հայպոլիգրաֆի սպարան
Հրատարակ. № 2323
Պատկեր № 2639
Գլ. № 7601(բ)
Տիրած 20000



27933-60 g

Արքագրեց՝ Ս. Ղիմոյան

Ա. Ռ. Ա. Ջ. Ա. Բ. Ա. Ն.

Այս գիրքը կազմված է Խ. Հայաստանի Լաստիճանի դպրոցի ծրագրի համաձայն և պարունակում է իր մեջ թե Գ. և թե Դ. խմբի աշխարհագրության նյութը:

Գ. խմբում անցնվում է շրջանը (վորտեղ դասնվում է տվյալ դպրոցը) Խ. Հայաստանը և Անդրկովկասը. իսկ Դ. խմբում՝ ԽՍՀՄ և կապիտալիստական չեղրները:

Այստեղ կուզիլինք ընկեր դասատուների ուշադրությունը հրավիրել մի շատ կարևոր խնդրի վրա: Դա շրջանի աշխարհագրության ավանդման խնդիրն է:

Շրջանի աշխարհագրությունը կազմում է այն հիմնաքարը, վորի վրա կառուցվելու չե հետագա դասընթացը: Շրջանի աշխարհագրության միջոցով չեքեխաները ծանոթանում են աշխարհագրության հիմնական խնդիրների հետ. հետևապես հետագա նյութի չուրացումը կախված կլինի նրանից, թե վորքան լավ են ըմբռնել չեքեխաները իրենց շրջանի աշխարհագրությունը: Դժվար եք, իհարկե, բոլոր շրջանների աշխարհ. նյութը մշակել և տեղավորել այս գրքի մեջ, բայց ուսուցչի աշխատանքը թեթևացնելու համար առաջարկվում են մի շարք հարցեր, վորոնցով կարող են ղեկավարվել նաև աշակերտները: Նյութը մշակվում է գլխավորապես եկակուրսիաների, գիտողությունների միջոցով:

Գրքի մյուս բաժինները մշակելու համար պետք է ձեռք բերել ա) Անդրկովկասի և ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզները, ԽՍՀՄ-ի քաղաքական քարտեզը:

բ) Գլորուս, կիսագեղերի և բոլոր աշխարհամասերի ֆիզիկական և քաղաքական քարտեզները:

գ) Խ. Հայաստանի, Անդրկովկասի, ԽՍՀՄ-ի և առանձին աշխարհամասերի համը քարտեզները:

դ) Աշխարհագրական ատլաս:

Առանց այս ոժանդակ ձեռնարկների ղժվար թե ուսուցիչը հաջողություն ունենա:

Հ. Ե.

Գ. ԽՈՒՄԲ

ՄԵՐ ՅԵՐԿԻՐԸ

Այն ընդարձակ լերկիրը, վորտեղ մենք ապրում ենք կոչվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն կամ համառոտ՝ ԽՍՀՄ:


Մենք ապրում ենք մեր ժողովրդական անտեսության ծավալուն սոցիալիստական վերակառուցման շրջանում: Խորհրդային իշխանության ջանքերով մեր լայնատարած լերկրի տարբեր մասերում կառուցվում են բազմաթիվ խոշոր գործարաններ, գիգանտներ, վորոնք արտադրում են և արտադրելու չեն մեծ քանակությամբ շոգեմեքենաներ, վագոններ, տրակտորներ, լերկրագործական մեքենաներ, ավտոմոբիլներ, էլեկտրաշարժիչներ, սուրբբիններ և այլն: Պրոլետարիատի ղեկավարությամբ միլիոնավոր չքավոր և միջակ գյուղացիներ միանալով իրար հետ կազմակերպել են խոշոր սոցիալիստական կոլեկտիվ անտեսություններ, վորոնք արտադրում են սննդամթերք բանվորության և հումուլյթ գործարանների համար: Որինակ, արարատյան գաշտի բամբակագործական կոլտեսությունները տալիս են բամբակ լենինականի տեքստիլային գործարանին, վորտեղ բամբակից բանվորները պատրաստում են զանազան գործվածքներ:

Վորպեսզի Խորհրդ. Միության ամեն մի պատանի քաղաքացի գիտակցորեն մասնակցի շինարարության մեծ գործին, նա պետք է լավ իմանա Խորհրդային Միությունը: Նա պետք է լավ իմանա թե ԽՍՀՄ-ի վճիռ մասերում կարելի չե գարգացնել ճակնդեղի կամ բամբակի մշակությունը, վճիռ մասերում պետք է կառուցել խոշոր գործարաններ լերկրագործական մեքենաներ պատրաստելու համար, վճիռ մասերում պետք է նոր լերկաթուղիներ անցկացնել, վորպեսզի մեր անտեսությունն ավելի արագ տեմպով զարգանա և այլն:

1. ՀՈՐԻՉՈՆԻ ԿՈՂՄԵՐԸ

Աշխարհագրության մեջ կարևոր նշանակություն ունի հորիզոնի կողմեր գտնելը՝ որինակ՝ յերբ մենք ցանկանում ենք գյուղից քաղաք զնալ, ամենից առաջ վորոշում ենք, թե դեպի վոր կողմը պետք է ուղևորվենք: Կողմերը կարելի չե վորոշել արեգակի կամ կողմնացույցի միջոցով:

Յերբ դաշտում կանգնած դիտում ենք մեր շորս կողմը, մեզ թվում է, թե հեռվում յերկինքն ու յերկիրը միանում են: Այն զիծը, վոր գոյանում է յերկնքի ու յերկրի միացումից, կոչվում է հորիզոն: Հորիզոնը մեզ յերևացող տարածության սահմանն է. հորիզոնի այն կողմը գտնվող վայրերը մենք չենք տեսնում:



Նկ. 1. Հորիզոն:

Արևն ամեն որ ծագում է հորիզոնի մի կողմում և, յերկնա-կամարի վրա շարժում կատարելով, մայր է մտնում հակառակ կողմում: Հորիզոնի այն կողմը, վորտեղ արևը ծագում է, կոչվում է արեվելք¹, իսկ այն կողմը, վորտեղ արևը մայր է մտնում՝ արեվմուտք: Յեթե յերեսներս դարձնենք դեպի արևելք,

¹ Արևելք կոչվում է իսկապես այն կողմը, վորտեղ արևը ծագում է մոտափորպես մարտի 21-ին կամ սեպտեմբերը 23-ին: Չմեռն արևը ծագում է այդ կետից փոքր ինչ հարավ, իսկ ամառը՝ փոքր ինչ հյուսիս:

այն դեպքում մեր ձախ կողմը կլինի հյուսիս, իսկ աջ կողմը՝ հարավ:


Արևելքը, արևմուտքը, հյուսիսը և հարավը հորիզոնի գլխավոր կողմերն են:

Հորիզոնն ունի և յերկրորդական կողմեր: Այդ յերկրորդական կողմերից հիշենք հյուսիս-արևելքը, հյուսիս-արևմուտքը, հարավ-արևելքը և հարավ-արևմուտքը:

Հյուսիս-արևմուտքը հորիզոնի այն կողմն է, վոր գտնվում է հյուսիսի և արևմուտքի միջև, հյուսիս-արևելքը գտնվում է հյուսիսի և արևելքի միջև, հարավ-արևելքը՝ հարավի և արևելքի միջև և այլն:

Յուրջ ավելք հորիզոնի գլխավոր և յերկրորդական կողմերը: Չեռքներդ մեկնեցեք դեպի հյուսիս, ձեռքներդ մեկնեցեք դեպի հյուսիս-արևելք և այլն:

Չեռ հարևան գյուղը վեր կողմն է գտնվում:




Նկ. 2. Հորիզոնի կողմերի վորոշելը սովորի ոգնությունով:

Առխառանք. — Գծեցեք մի շրջան: Յենթադրենք, թե դա ձեր հորիզոնն է և դուք ել գտնվում եք այդ շրջանի կենտրոնում: Նրա վերևի կողմնը նդունեցեք հյուսիս, ներքևի կողմը՝ հարավ, աջ կողմը՝ արևելք, իսկ ձախ կողմը՝ արևմուտք: Այդ շրջանի յեղերքին նշանակեցեք հորիզոնի գլխավոր և յերկրորդական կողմերը:

Հորիզոնի կողմերը կարելի չե վորոշել նաև սսվերի ոգնությունով: Յեթե մի հարթ տեղ ուղղաձիգ զրուկթյամբ մի ձող

մենք պետք է այդ հատակագիծը փոքրացրած գծենք: Յենթադրենք թե դասարանի յերկարությունն է 8 մետր, իսկ լայնությունը՝ 6 մետր: Մեկ մետրի փոխարեն վերցնենք 1 սանտիմետր: գծագրենք դասարանի հատակագիծը 6 մետրի փոխարեն



ՄԱՍՇՏԱՐ
0 2 4 6 8 10 12 14 ՄԵՏՐ
1 ՍԱՆՏԻՄԵՏՐԸ ԿԵՐՅՈՒՆ Ե՛ 2 ՄԵՏՐԻ ՓՈՒՍԻՐԵՆ

Նկ. 5.

վերցնելով 6 սանտիմետր, իսկ 8 մետրի փոխարեն՝ 8 սանտիմետր: Վորովհետև դասարանի յերկարությունը և լայնությունն փոքրացրինք 100 անգամ, ապա կարող ենք ասել, վոր մեր

հատակագծի մասշտաբն է 1:100 կամ հատակագծի մեկ սանտիմետրը հավասար է իրական մեկ մետրի:

Մասշտաբ կոչվում է այն պայմանական փոքր չափը, վոր վերցրած է մեծ չափի փոխարեն:

Հատակագծի վրա մասշտաբը գծվում է ուղիղ գծի ձևով, վորը բաժանվում է մասերի. այդպիսի մասշտաբը կոչվում է գծային մասշտաբ: Բացի այդ՝ մասշտաբը նշանակվում է նաև թվով, որինակ՝ 1:100 (մեկի դիմաց, հարյուր). այսպիսի մասշտաբը կոչվում է թվային մասշտաբ:

Կարելի չէ գծագրել ամբողջ դպրոցի, գյուղի, կամ քաղաքի հատակագիծը: Քաղաքի հատակագիծը գծելիս այնքան փոքր մասշտաբ են վերցնում, վոր առանձին տներն արդեն չեն նշանակում. գծում են թաղերը, փողոցները, այգիները և այլն:

Հատակագծի վերևի կողմը նշանակում են հյուսիս, ներքևը՝ հարավ, աջ կողմն արևելք, իսկ ձախ կողմը՝ արևմուտք: Գծեցեք դասարանի հատակագիծը նախ 1:100, ապա 1:200 մասշտաբով:

Չեք գյուղի կամ քաղաքի հատակագիծն ինչ մասշտաբով գծած:

Գծագրեցեք գյուղի կամ քաղաքի հատակագիծը մեծացրած դիրքով և դասարանում կախեցեք:

Ի՞նչ է պլանը կամ հատակագիծը:

Ի՞նչ է մասշտաբը:

Ի՞նչպիսի մասշտաբներ կան:

Ինչո՞ւ հատակագծի վրա պետք է անպայման նշանակված լինի մասշտաբը:

Ինչո՞ւ քաղաքի հատակագիծը նկարելու համար շատ փոքր մասշտաբ են վերցնում:

Քարտեզ. — Վորևե շրջանի կամ յերկրի հատակագիծը փարսեզ է կոչվում:

Քարտեզի վրա գտնազան պայմանական նշաններով նշանակված են լինում գյուղերն ու քաղաքները, լիճները, գետերը և այլն:


Յորդ նկարը ցույց է տալիս մի փոքրիկ վայրի քարտեզը:

Մասշտաբով իմացեք այգու յերկարությունը և լայնությունը, երկու գյուղի միջև հեռավորությունն ուղիղ գծով և ճանապարհով: Լճի յեղերքից մինչև այգին քանի մետր է:

Ճանապարհն ի՞նչ ուղղությամբ է անցնում:

Այգին լճի վճի կողմն է գտնվում: Գյուղերն այգու վճի կողմն են գտնվում:

Գունավոր քարտեզների վրա ջրերը սովորաբար նշանակում են կապույտ գույնով, դաշտավայրը՝ կանաչ (վորժա՜վայրը ցածր է լինում, գույնն այնքան ավելի մուգ են վերցնում), իսկ բարձրավանդակներն ու լեռները դարչինագույն (վորժա՜վայրը բարձր է, այնքան ավելի մուգ գույն են վերցնում)։



Նկ. 6.

Քարտեզի վերևի կողմն ընդունվում է հյուսիս, ներքևը հարավ, աջ կողմը՝ արևելք, իսկ ձախ կողմը՝ արևմուտք։

Քարտեզի տակ անպայման նշանակված է լինում մասաչատր, վորը ցույց է տալիս թե մի քաղաքից մինչև մյուսը քանի կիլոմետր է։ Իմանալու համար, թե մի քաղաքից մինչև մի վորեն գյուղ քանի կիլոմետր է, մենք պետք է գեռ չափենք քաղաքից մինչև գյուղը սանտիմետրերով։ հետո մասշտաբի միջոցով իմանանք, թե քարտեզի մեկ սանտիմետրն իրականության մեջ քանի կիլոմետր է։ Յեթե քաղաքից գյուղը 10 սանտիմետր է, իսկ մեկ սանտիմետրը համապատասխանում է 8 կիլոմետրի, ապա քաղաքից գյուղը կլինի 80 կիլոմետր։

II. ՇՐՋԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ՄԵՐ ՇՐՋԱՆԸ

Ի՞նչպես է կոչվում այն շրջանը, վորտեղ մենք ապրում ենք։ Մեր շրջանի գլխավոր վարչական կենտրոնը վորն է։ Հիշեցեք մեր հարևան շրջանները։ Մեր շրջանի մակարդակի մեծությունը վորքան է։ Հիշեցեք շրջանի գլխավոր գյուղերը։ Աշխատանք. — Գ ծ ա գ ը ե լ շ ը ջ ա ն ի ք ա ղ ա ե ղ ը։

2. ՇՐՋԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ

Մեր շրջանն ի՞նչպիսի մակերևույթ ունի. այսինքն, նա լեռնոտ է, թե հարթ։ Ի՞նչ է հարթությունը, բլուրը, սարը և լեռնաշղթան։ Թվեցեք շրջանի հարթությունները, առանձին աչքի ընկնող սարերը (լեռնագագաթները) և լեռնաշղթաները։

3. ՇՐՋԱՆԻ ՀՈՂԵՐԸ

Ի՞նչ է հողը։ Հողն ի՞նչ նշանակություն ունի գյուղատնտեսության համար։ Ի՞նչն է համար խորհանտեսությունները և կոլտնտեսությունները հողն աղբով կամ զանազան պարարտանյութերով պարարտացնում են։ Վոր տեսակի հողն է լավ բերք տալիս։ Կոլտնտեսություններում կամ խորհանտեսություններում ի՞նչպե՞ս, թե վորքան բերք է տվել այս տարի մեկ հեկտար պարարտացրած հողը և չպարարտացրած հողը։ Շրջանի տարբեր հողերից նմուշներ վերցրեք դպրոցի թանգարանի համար։

Խ. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌՈՒՑՈՒՄ Ե ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ. ՎՈՐՏԵՂ ՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՅԵՆ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ (ՂԱՐԱՔԻԼԻՍԱ)

ՊԱՐԱՐՏԱՆՆԵՔ ՀՈՂԸ, ՎՈՐ ՆՐԱ ԲԵՐՔԱՍՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՆԱ

4. ՇՐՋԱՆԻ ԳԵՏԵՐԸ ՅԵՎ ԼՃԵՐԸ

Մեր շրջանում ի՞նչ գետեր ու լճեր կան:
Ի՞նչ է նշանակում գետի հուն, ակունք, գետաբերան, վտակ
ըրբաժան գիծ:

Ի՞նչ է կղզի և թերակղզի, հովիտ, ձոր և կիրճ:

Մեր շրջանի գետերն ի՞նչ ոգուտ են տալիս ազգաբնակչությանը:

5. ՇՐՋԱՆԻ ԿԼԻՄԱՆ

Ողբ ձմեռն է տաք լինում, թե ամառը: Ողի բարեխառնությունն
ի՞նչ գործիքով են իմանում:

Ողն իր ջերմությունը վերաբերից և ստանում:

Ի՞նչու է կեսօրին ողն ավելի լի տաքանում, քան թե առավոտը
կամ յերեկոյան:

Ջերմաչափով չափեցեք ողի բարեխառնությունն առավոտը, կե-
սօրին և յերեկոյան: Հետևանքը գրեցեք ձեր տետրում:

Ողի միջի գոլորշիները վերաբերից են բարձրանում: Այդ գոլոր-
շիներից ի՞նչ է ստացվում: Ի՞նչ է նշանակում մթնոլորտային տեղում-
ներ:

Մեր շրջանի կլիման չճի է, թե խոնավ: Ի՞նչ է նշանակում չոր
կամ խոնավ կլիմա:

Ի՞նչ է նշանակում արհեստական վոտոզում: Մեր շրջանում վա-
րելահողերը վոտոզում են:

ՎՈՌՈԳՈՒՄԸ ԲԱՐՁՐԱՅՆՈՒՄ Ե ՇՈՂԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ:
Խ. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՐԱՆՅՔՆԵՐ Ե ԱՆՅԿԱՅՆՈՒՄ ՄԵՐ ՅԵՐԿՐՈՒՄ:

6. ՋՐԻ ՅԵՎ ՔԱՄՈՒ ԱՌԱՋԱՅՐԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՑԱՄԱՔԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ՎՐԱ

Գետն ի՞նչ փոփոխություններ է առաջացնում իր հունի մեջ:
Ի՞նչու է գետի միջի և յեզերքի քարերը հղկված են լինում:
Ի՞նչպես է առաջացել այն ձորը, վորի միջով գետը հոսում է:
Գետը յերբ և ավելի քայքայում իր հունը:
Քամին ի՞նչ ազդեցություն է անում յերկրի մակերևույթի վրա:

7. ՇՐՋԱՆԻ ԲՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի՞նչ է նշանակում անտառ, ձահիճ, տափաստան, ալպյան լեռ-
նային մարգագետին:

Ազգաբնակչության համար անտառն ի՞նչ նշանակություն ունի:
Ի՞նչ նշանակություն ունեն սալիաուսաններն անասնապահության
համար:

Կազմեցեք զպրոցի թանգարանի համար բուսական հերբարիում:
Մեր շրջանում ի՞նչ կուլտուրական բույսեր են մշակում:

8. ՇՐՋԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Մեր շրջանում ի՞նչպիսի վայրի կաթնասուն կենդանիներ, սո-
ղուններ (ոձեր, կրիաներ), թռչուններ, ձկներ, միջատներ կան:

Մեր շրջանի վորսորդներն ի՞նչ են վորսում:

Ի՞նչպիսի ընտանի կենդանիներ կան մեր շրջանում: Դրանցից վո-
րճի են շատ աարածված և ի՞նչ ոգուտներ են տալիս մարդուն:

Ի՞նչ է նշանակում ազնվացեղ անասուններ: Համեմատեցեք սով-
խողի կովը կամ խոզն անհատ գյուղացու կովի հետ: Դրանցից վճրն
է շատ արդյունք տալիս:

ՊԵՏՔ Ե ՊԱՅԵԼ ԱԶՆՎԱՑԵՂ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ, ՎՈՐՈՎԼԵՏԵՎ ՆՐԱՆՔ ԱՎԵԼԻ
ՄԵԾ ԱՐԴՅՈՒՆՔ ԵՆ ՏՁԼԻՍ:

9. ՇՐՋԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Մեր շրջանում վճրքան մարդ է ապրում:

Դրանք ի՞նչ ազդեթյան են պատկանում:

Շրջանում արհեստակցական միություններ կան: Ամեն մի միու-
թյան մեջ վճրքան անդամ կա:

Բնակչության վճր մասն է ապրում գյուղում և վճր մասը՝ քա-
ղաքում:

ԽՈՐՀՐԴ. ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԲՈԼՈՐ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՎԱԶԱՎԱՍՐ ԵՆ
ՅԵՎ ՀԱՄԵՐԱՇԽ:

10. ՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Մեր շրջանում ի՞նչ հացահատիկներ են մշակում: Դրանցից վճրն
է ավելի կարևոր:

Ի՞նչ է նշանակում տեխնիկական բույսեր: Մեր շրջանում ի՞նչ-
պիսի տեխնիկական բույսեր են մշակում:

Մեկ հեկտարից վճրքան հացահատիկ է ստացվում: Այս տարի
մեր շրջանում ընդամենը վճրքան տոնն հացահատիկ, բամբակ, ծխ-
խոտ, քունջուտ է ստացվել:

Շրջանում անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, շերամա-
պահություններ, մեղվաբուծությամբ պարապում են:

Ի՞նչպիսի անասնապահական Ֆիրմաներ կան: Մեր շրջանն ի՞նչ
անասնապահական մթերքներ է արտադրում:

Մեր շրջանում վճրքան անհատական անտեսություն կա, վճր-

քան կորանտեսություն (կորխոզ) և վճիռքան խորհանտեսություն (սովխոզ) Գետք և հետազոտել մեր շրջանի մեկ կորանտեսություն և մեկ անհատական (միջակ գյուղացու) տնտեսություն:

Հետազոտությունը կատարեցիք հետևյալ սխեմայով:

Ընդհանուր տեղեկություններ

1. Կորանտեսությունը յճրք և կազմակերպվել:
2. Վճիռքան անդամ ունի և նրանց սոցիալական կազմը (նախկին բաղադրանքներ, չքավոր գյուղացիներ, միջակներ):
3. Նոր անդամներ ընդունելու կարգը:
4. Կորանտեսությունից դուրս գալու կամ հեռացնելու կարգը:

Արտադրության միջոցներ

5. Հողի քանակն ամբողջ կորանտեսության մեջ և նրա տեսակները (վարելահող, արոտատեղ, խոտածարք, այգի, բանջարանոց, անհարմար հողեր և այլն):
6. Կորանտեսության շենքերը, նրանց տեսակները և քանակը:
7. Ի՞նչ մեքենաներ կան:

Առխառնակի կազմակերպությունը յեվ առխառնակարծ

8. Ի՞նչ աշխատանքի բաժանում և կատարվում կորանտեսության անդամների մեջ:
9. Որակյան քանի՞ ժամ են աշխատում:
10. Ի՞նչ աշխատավարձ և տրվում:
11. Կորանտեսության անդամներին իրավունք և տրվում զբաղվել կողմնակի աշխատանքով և ի՞նչ պայմաններով:
12. Հիվանդության պատճառով արձակուրդ տրվում և:
13. Կորանտեսության արդյունքն ի՞նչպես և բաժանվում:

Կոլտնտեսության տեխնիկան

14. Ի՞նչ մեքենաներ են աշխատում կորանտեսության մեջ. գյուղացիական տնտեսության մեջ այդպիսի մեքենաներ կան:
15. Կորանտեսության մեջ հողերը հանգստանում են, ի՞նչ նյութերով են պարարտացնում վարելահողը, սերմը դտում են, ազնվացեղ անասուններ կան, նրանց ի՞նչպես են կերակրում:

Կոլտնտեսության արտադրանք

16. Մեկ հեկտարից վճիռքան հացահատիկ և ստանում կորանտեսությունը և անհատական տնտեսությունը:

17. Կորանտեսությունը ի՞նչ բույսեր և մշակում. այդ նույն բույսերն անհատական տնտեսության մեջ մշակվում են:

18. Վճիռքան կաթ և տալիս կորանտեսության կովն ամեն անգամ: Վճիռքան կաթ և տալիս անհատական տնտեսության կովն ամեն անգամ:

19. Կորանտեսությունն ի՞ր արտադրանքը վերամշակում և, այսինքն հենի սեփական շրաղացներ, կաթնատնտեսական գործարաններ և այլն:

Այս հետազոտությունների հետևանքները ցույց տվեք դիագրամներով:

ՀԱՄԱՏԱՐԱՍ ԿՈՒԼԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ ԿՈՒԼԱԿՈՒՅՑԱՆ ՄԱՆ Ե

ԿՈՒԼԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒՅՑԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒՂԻՆ Ե:

27933-60 34512 100

Ուսումնասիրեցեք շրջանի խորհանտեսությունը հետևյալ սխեմայով. խորհանտեսությունը վճիռքան հեկտար վարելահող ունի: Միջին չափով մեկ բանվորին վճիռքան հեկտար և ընկնում:

Խորհանտեսությունը վճիռքան անասուն ունի: Համեմատեցեք խորհանտեսության անասունները անհատական տնտեսության անասունների հետ:

Խորհանտեսության կովը վճիռքան կաթ և տալիս ամեն անգամ. անհատական տնտեսության կովը վճիռքան կաթ և տալիս ամեն անգամ: Կազմել խորհանտեսության մեքենաների և գործիքների ցուցակը:

Խորհանտեսությունն ի՞նչ տիպի յե. այսինքն ի՞նչ և արտադրում հացահատիկ, բամբակ, խաղող, կաթնամթերք թե՛ մի այլ բան:

Բերքի վճիռ մասն և մնում խորհանտեսության մեջ (սերմացու, բանվորների սնունդ և այլն) և վճիռ մասն և հանձնվում պետության: Թվական տվյալներով ցույց տվեք թե՛ վճիռքան բերք և ստացել այս տարի անհատական տնտեսությունը, կորանտեսությունը և խորհորդնտեսությունը:

11) ՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Շրջանում ի՞նչ հանքեր կան: Նրանք արդյունահանվում են: Յեթե հանքեր արդյունահանվում են, այցելեք հանքավայրերը, ծանոթացեք բանվորների աշխատանքի հետ, իմացեք թե՛ այդ հանքերն ի՞նչ նշանակություն ունեն և այլն:



Շրջանում ի՞նչ գործարաններ կան: Գործարաններն ի՞նչ հում նյութ են ստանում և վերամշակելով ի՞նչ ապրանքներ են արտադրում:

12) ՇՐՋԱՆԻ ԵԼԵԿՏՐՈՖԻԿԱՅԻՄԱՆ

Շրջանում ելեկտրական կայարաններ կան:

Այդ կայարանը վճարող է կառուցված: Ելեկտրականությունն ինչո՞ւ համար է գործածվում:

Ի՞նչ է նշանակում սպիտակ ածուխ:

13) ՇՐՋԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Շրջանում լերկաթուղի կամ խճուղիներ կան:

Այդ ճանապարհներով մեր շրջանը վճար շրջանների հետ է կապվում:

Այդ ճանապարհներով ի՞նչ ապրանքներ են փոխադրվում:

Խորհրդ. իշխանությունն որով ի՞նչ նոր ճանապարհներ են շինվել մեր շրջանում:

Համեմատեցե՛ք հասարակ գյուղական ճանապարհը խճուղու և լերկաթուղու հետ: Դրանցից վճարն է հարմար. ինչո՞ւ:

Համեմատեցե՛ք յեղներով շարժվող սայլը ավտոմոբիլի կամ գնացքի հետ. դրանցից վճարն է հարմար. ինչո՞ւ:

14) ՄԱՐԴՈՒ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Մեր շրջանում ճահիճներ կան: Այդ ճահիճները չորացնվում են: Յեթե ներկայումս չեն չորացնվում, արդյո՞ք, ծրագրված չե՞ չորացնել:

Չոր տեղերը վտուցվում են:

Հեղեղների դեմ մեր շրջանում ի՞նչպես են պայքարում:

ՄԱՐԴԵ ԻՐ ԳՈՐԾՆԵՑՈՒԹՅԱՄՔ ՓՈՓՈԽՈՒՄ Ե ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

ՋԻՆՎԵՆՔ ԲԱՐՁՐ ՏԵԽՆԻԿԱՅՈՎ, ՎՈՐՊԵՍՁԻ ԱՎԵԼԻ ՏԻՐԱՊԵՏԵՆՔ ԲՆԱԿԱՆ ՈՒԺԵՐԻՆ

15) ՇՐՋԱՆԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Կոլխոզն ու քաղաքի գործարանն ի՞նչ կապ ունեն իրար հետ: Քաղաքն ի՞նչ է արտադրում գյուղի համար: Գյուղն ի՞նչ է արտադրում քաղաքի համար:

Մինչև նույնաբերյան հեղափոխությունն ո՞վ էր առևտրով զբաղվում, իսկ մյժմ:

Հետազոտեցե՛ք ձեր գյուղի կամ քաղաքի կոոպերատիվը և հետևանքը գրեցե՛ք հետևյալ անկետայի մեջ:

1. Կոոպերատիվի անունը և տեղը...
2. Կոոպերատիվի գլխավոր ապրանքները...
3. Ապրանքների գները...
4. Փայատերերն ո՞վքեր են և սրանց թիվը...
5. Փայավճարը և փայատիրոջ ոգուտները...
6. Փայատերն ի՞նչ մասնակցություն է ցույց տալիս կոոպերատիվի աշխատանքների մեջ...
7. Կոոպերատիվի որվա չելքն ու մուտքը...

Բացի կոոպերատիվներից ել ո՞վ է զբաղվում առևտրով:

ՍՊԱՌԿՈՊԵՐԱՑԻԱՆ ՅԵՎ ԿՈՆՏՆՏ-ԱՌԵՎՏՈՒՐԸ ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ՄԱՆ Ե

16) ՇՐՋԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Տեղեկացե՛ք, թե մեր շրջանում մինչև նույնաբերյան հեղափոխությունը քանի դպրոց կար, իսկ այժմ վճարան է:

Ո՞վքեր էլին սովորում այդ դպրոցներում:

Շրջանի դպրոցներում քանի աշակերտ է սովորում:

Հասակավորների դպրոցներ ել կան թե վոչ:

Յարական և դաշնակցական իշխանություններն ի՞նչ վերաբերմունք էլին ցույց տալիս դեպի լուսավորության գործը:

Խորհրդ. իշխանությունն ի՞նչ բարձրության վրա չե դրել լուսավորության գործը — դպրոցների լացն ցանց, կլինո, ուղի, խրճիթները և այլն:

Անգրագիտությունը վերացնելու համար խորհրդ. իշխանությունն ի՞նչ է արել:

Ի՞նչ բուժարաններ ու հիվանդանոցներ կան շրջանում:

Վճարան բժիշկ կաներկայումս մեր շրջանում, վճարան կար մինչև սկսանաբերյան հեղափոխությունը:

III, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ԽՈՐՀ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՍՀՄԱՆՆԵՐԸ.

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը քարտեզի վրա հարևան յերկրներից սովորաբար բաժանվում է կարմիր գծով:

Խորհրդային Հայաստանի հյուսիսային կողմը գտնվում է խորհրդային Վրաստանը (ցույց տվեք), արևելյան կողմը՝ խորհրդային Ադրբեջանը (ցույց տվեք), հարավային կողմը՝ Նախիջևանի սոցիալ. խորհրդ. հանրապետությունը և Պարսկաստանը (ցույց տվեք), իսկ արևմտյան կողմը՝ Թյուրքիան:

Քարտեզի վրա ցույց տվեք Խորհ. Հայաստանի բոլոր սահմանները:

Խորհ. Հայաստանի համը քարտեզի վրա Հայաստանի սահմանների վրայով կարմիր գիծ քաշեցեք:

Խորհ. Հայաստանի համը քարտեզի վրա Խորհ. Հայաստանի հարևան յերկրները՝ Խորհ. Վրաստանը, Խորհ. Ադրբեջանը, Խորհ. Նախիջևանը, Պարսկաստանը և Թյուրքիան ներկայացրեք տարբեր գույներով:

Այդ նույն քարտեզի վրա գրեցեք իրենց տեղերում Յերևանի, Անիի, Կապանի, Ղարաբաղի, Գյումրիի, Մեղրու, Սևանա լճի, Զանգի գետի, Արաքս գետի անունները:

Ամբողջ Խորհրդային Հայաստանի մակարդակի մեծությունը կազմում է 30.248 քառակուսի կիլոմետր:

ԽՈՐՀՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Դիտելով քարտեզը, մենք տեսնում ենք, վոր Խորհ. Հայաստանը շատ լեռնոտ յերկիր է: Այս ու այն ուղղությամբ անցնում են զանազան լեռնաշղթաներ, վորոնք յերկիրը բաժանում են առանձին-առանձին հովիտների և բարձրավանդակների: Այդ բազմաթիվ լեռներից հիշենք մի քանիսը:

Խորհ. Հայաստանի հյուսիսային սահմանով ձգվում են Վրահայոց լեռները, վորոնց ամենաբարձր գագաթը լայվարն է (ցույց տվեք): Վրահայոց լեռներից դեպի հարավ գտնվում է Բոզով-դալը, ավելի հարավ՝ փամբակի լեռնաշղթան, վորը համնում է միջև Սևանա լիճը (ցույց տվեք):

Սևանա լճի շուրջը բարձրանում են Շահ-դաղ և Ահման-գանի լեռները, իսկ դեպի հարավ և հարավ-արևելք ձգվում են Ղարաբաղի, Զանգիզուրի և Դարալագյազի լեռները:

Խորհ. Հայաստանի ամենաբարձր սարն Արագածն է, վորի բարձրությունը կազմում է 4095 մետր ծովի մակերևույթից:

Նրա ստորոտներում գտնվում են բազմաթիվ գյուղեր, իսկ լանջերում ամառվա ընթացքում արածում են անասունների բազմաթիվ հոտեր: Հայաստանը ընդարձակ հարթություններ չունի: Քիչ թե շատ աչքի լեն ընկնում հետևյալ դաշտերը:

Արագածից դեպի հարավ, մինչև Արաքսը ձգվում է Հայաստանի ամենամեծ դաշտը, վորը կոչվում է Արարատյան դաշտ: Այս դաշտում են գտնվում Յերևանը, Սարգարաբատը, Աշտարակը և այլն:

Արագածի ստորոտից մինչև Ախուրյանը (արփաշայը) ձգվում է Շիրակի դաշտը, վորտեղ գտնվում են Խ. Հայաստանի յերկրորդ մեծ քաղաքը՝ Լենինականը, Շիրշրանցքը, Անին (պեմգալի հանքատեղերը):

Վրահայոց լեռների և Բզովդալի միջև փոփում է Լոռու դաշտը, վորտեղ գտնվում են Ստեփանավանը և Վորոնցուկիան:

Վերջապես հիշենք նաև Աելալուա բարձրավանդակը, վորը ձգվում է լճի յեզերքով:

Խ. Հայաստանի լեռներում գտնվում են զանազան հանքեր, վորոնց մեջ առաջին տեղը բռնում է պղինձը: Նա մեծ քանակությամբ ստացվում է Ալլահվերդում և Ղափանում (Զանգեզուր):

Շինարարական նյութերի մեջ մեծ նշանակություն ունեն պեմգան և սուճը, վորոնք մեծ քանակությամբ փոխադրվում են Խ. Միության զանազան շրջանները: Տուֆն արդյունահանվում է Արթիկի շրջանում, Լենինականից մոտ 25 կիլոմետր հեռավորության վրա (ցույց տվեք Արթիկը):

Պեմզան տարածված է Շիրակում. նա նույնպես համա-
միութենական նշանակություն ունի և փոխադրվում է Միու-
թյան դանազան շրջանները:

- Ս. Հայաստանն ի՞նչպիսի լեռներ է:
- Ս. Հայաստանում ի՞նչ լեռներ և դաշտեր կան:
- Այդ դաշտերից ամենամեծը վճրն է:
- Հայաստանում ի՞նչ հանքային հարստություններ կան:

Ս. Հայաստանում կան և հանքային աղբյուրներ, վորոնց
շուրը բուժիչ նշանակություն ունի: Այդ հանքային աղբյուր-
ներից հռչակված են Արզնի և Իսխաուն: Արզնին գտնվում է
Չանգվի ափին և ներկայումս Ս. Հայաստանի ամենանշանավոր
կուրորտներից մեկն է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՏԵՐԸ ՅԵՎ ԼՃԵՐԸ

Սորհ. Հայաստանը լեռնոտ լինելու պատճառով մեծ գետեր
չունի. լեղաձևերը կարճ են և արագահոս: Բայց նրանք շատ
մեծ նշանակություն ունեն մեր լեռների տնտեսության համար,
վորովհետև նրանցով վտուցվում են այգիներն ու վարելահո-
ղերը. բացի այդ՝ գետերի վրա Սորհրդ. իշխանությունը կա-
ռուցել է ելեկտրական կայաններ, վորոնք լուսավորում են
մեր բնակարանները և եներգիտ տալիս գործարաններին:

Ս. Հայաստանի ամենամեծ գետը Արաքսն է, վորի ձախ
ափը պատկանում է մեզ, իսկ աջ ափը՝ Թյուրքիային և Պարս-
կաստանին:

Արաքսի մեջ թափվում են Ախուրյանը, Քասախը, Չանգին
և այլն:

Ախուրյանը հոսում է Լենինականի մոտով: Նրանից սկսվում
է Շիրշրանցքը, վորը վտուցում է Շիրակի դաշտը: Այդ
ջրանցքի վրա Ս. իշխանությունը կառուցել է մի մեծ ելեկ-
տրակայան, վորը լուսավորում է Լենինական քաղաքը և եներ-
գիտ տալիս Լենինականի տեքստիլ ֆաբրիկային:

Չանգին սկսվում է սևանա լճից և հոսելով Յերևանի մի-
ջով, թափվում է Արաքսը: Նրա վրա Ս. իշխանությունը կա-
ռուցել է Յերևանի I և II ելեկտրակայանները, վորոնք եներ-
գիտ լին տալիս Յերևանի գործարաններին և լուսավորում քա-

ղաքը: Ներկայումս կառուցվում է մի նոր ափերի խոշոր ելեկ-
տրակայան դա Քանաքեռի ելեկտրակայանն է:

Չանգին և Քասախն իրենց ջրերով կենդանություն են
տալիս Արարատյան դաշտին: Բազմաթիվ այգիներ և վարելա-
հողեր Չանգվի և Քասախի ջրերով են վտուցվում:

Մյուս գետերից հիշենք Փամբակ և Աղսեվ գետերը,
վորոնք թափվում են Կուր գետի մեջ:

Փամբակը հոսում է Ղարաքիլիսայի մոտով. ձախ կողմից
նա ընդունում է Զորագետը: Այնտեղ, վորտեղ Զորագետը թափ-
վում է Փամբակի մեջ կառուցվում է մի մեծ ելեկտրակայան,
վորը կոչվում է Զորագետ: Զորագետն այս տարի բոլորովին
չլատարաստ կլինի:

Աղսեվն սկսվում է Փամբակի լեռներից և անցնելով Դի-
լիջանի ու Իջևանի միջով թափվում է Կուրի մեջ (Աղբբեջա-
նում):

Հայաստանի ամենամեծ լիճը Սելանա լիճն է, վորը ծովի
մակերևույթից 1925 մետր բարձր է: Նրա լեռկարությունը
հավասար է մոտ 72 կիլոմետրի, լայնությունը (ամենալայն
տեղում) 27 կիլոմետր, իսկ խորությունը, մոտ 95 մետր: Լճի
ամբողջ մակարդակը հաշվում են մոտ 1400 քառ, կիլոմետր:

Սևանա լճի ջուրն անուշ է, վորովհետև նրանից սկիզբն
է առնում Չանգին: Վորքան աղ գետակները թափում են
Սևանա լճի մեջ, այնքան էլ Չանգին հեռացնում է:

Սևանա լիճը կարևոր նշանակություն ունի Ս. Հայաստա-
նի ազգաբնակչության համար: Նա հարուստ է գանուգան ձկնե-
րով, վորոնց մեջ իսխանն ու գեղարտունին հռչակված են
ամբողջ Անգրկովկասում: Սևանա լճի վրայով տեղի ունի նավա-
գնացություն, վորի շնորհիվ լճի շուրջը գտնվող բնակիչները
կապվում են իրար հետ:

Ս. Հայաստանի համր քարտեղի վրա գրեցեք ձեր սովորած գե-
տերի անունները:

Ձեր ուշուրի գետը վճրտեղից է սկիզբ առնում և ձեր է թափվում:
Ինչ՞ու Հայաստանի գետերը մահը են և արագահոս:

Ս. Հայաստանի ազգաբնակչության համար ի՞նչ նշանակություն
ունեն նրանք:

Վճր գետերի վրա լին կառուցված ելեկտրակայաններ:

Ի՞նչ նշանակութիւն ունի Սևանա լճիը և. Հայաստանի ազգաբնակչության համար:

Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱԲՆԱԿԻՍՈՒԹՅՈՒՆԸ

Խ. Հայաստանում (1931 թ. տվյալներով) ապրում է մոտ 1 միլիոն մարդ: Յեթե և. Հայաստանի բնակիչների թիվը բաժանենք մակարդակի մեծությամբ, այսինքն՝ քառ. կիլոմետրերի թիվով, կիմանանք, թե մեկ քառ. կիլոմետրի վրա միջին հաշվով վորքան մարդ է ապրում: Ասում ենք՝ պարզվում է, վոր մեկ քառ. կիլոմետրի վրա միջին հաշվով ապրում է 34 մարդ:

Խորհ. Հայաստանի ազգաբնակչության խտութիւնն է 34 մարդ մեկ քառ. կիլոմետրի վրա:

Խորհ. Հայաստանի ազգաբնակչութիւնը բաղկացած է հայերից, քուրդերից, թուրքերից, պարսիկներից, ուսններից և այլն: Սրանք համերաշխորեն, ձեռք-ձեռքի տված զբաղվում են գյուղատնտեսությամբ, աշխատում են գործարաններում, ծառայում են կոոպերատիվներում, պետական հիմնարկութիւններում և այլն: Ազգաբնակչության մեծ մասն ապրում է գյուղում, իսկ փոքր մասը քաղաքում:

Բանվորներն ու ծառայողները կազմել են արհեստակցական միութիւններ (արդյունաբերական, շինարարական, արւրանսպորտի և կապի, մտավոր աշխատանքի և այլն):

1928 թ. և. Հայաստանում կար մոտ 900 հազար մարդ, իսկ 1931 թ. մեկ միլիոնից ավել: Յերեք տարվա մեջ ավելացել է մոտ 115 հազար մարդ, հետևապես Խորհ. Հայաստանի ազգաբնակչութիւնը տարեկան ավելանում է մոտ 35 հազար հոգի:

Նկատի ունենալով այս աճը, հաշվեցեք թե 1941 թ. Խորհ. Հայաստանում վճրքան մարդ կլինի:

Խորհ. Հայաստանի ազգաբնակչության խտութիւնը վճրքան է Խորհ. Հայաստանում ի՞նչ ազգութիւններ են ապրում:

Ազգաբնակչության վճր տոկոսն է ապրում գյուղում, վճրը քաղաքում:

Խ. Հայաստանում վճրքան մարդ կար 1928 թ. և վճրքան 1931 թ. վին:

Ինչ՞ով բացատրել այն, վոր և. Հայաստանում քաղաքային ազգաբնակչութիւնն ավելի արագ տենպով է աճում, քան գյուղականը:

Խորհրդ. Հայաստանի բոլոր աշխատավորները, այսինքն՝ բանվորները, գյուղացիները, կարմիր բանակայինները և ծառայողներն իրենց միջից ընտրում են Խորհուրդներ: Կուլակները, վաճառականները, տերտերները իրավունք չունեն մասնակցելու վոչ ընտրութիւններին և վոչ էլ կառավարելու գործին:

Գյուղում գյուղացիներն ու բանվորները մեկ տարի ժամանակով ընտրում են գյուղխորհուրդ, վորը ամսական միջանի անգամ հավաքվում է և զբաղվում գյուղի կարևոր խնդիրներով: Գյուղխորհուրդն իր միջից ընտրում է նախագահ և մի քանի սեկցիաներ, վորոնք վարում են գյուղի ընթացիկ գործերը:

Ձեր գյուղի խորհուրդը քանի անգամից է բաղկացած: Ընթացիկ գործերը ո՞վ է վարում:

Շատ գյուղեր իրար հետ միանալով կազմում են շրջան: Շրջանը կառավարելու համար հրավիրվում է Երջանային խորհուրդ, վորն իր միջից ընտրում է Երջանային գործադիր կոմիտե: Քաղաքներում ընտրվում է քաղխորհրդ:

Ամբողջ Խորհ. Հայաստանի գերագույն իշխանութիւնը պատկանում է Խորհուրդների համագումարին, վորն ընթացիկ գործերը վարելու հավար ընտրում է Կենտրոնական Գործադիր կոմիտե: Կենդգործկոմը նշանակում է ժողովրդական կոմիսարներ (յուսավորութիւն ժողովրդական կոմիսար, աշխատանքի կոմիսար, հողագործութիւն կոմիսար և այլն): Ժողովրդական կոմիսարների Խորհուրդը (Ժողկոմխորհը) և Կենտգործկոմը գտնվում են Յերևանում:

Յերևանը Խորհ. Հայաստանի վարչական և կուլտուրական կենտրոնն է:

ԽՈՐՀ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԼԻՄԱՆ

Ինչպե՞ս վոր բազմազան է Խորհ. Հայաստանի մակերևույթը, այնպե՞ս էլ բազմազան է նրա կլիման:

Արարատյան դաշտն ունի չոր-ցամաքային կլիմա: Ամառը լինում է շոգ, իսկ ձմեռը՝ ցուրտ, որինակ, Յերևանում հունվարի միջին բարեխառնութիւնն է՝ մոտ — 6°, իսկ հուլիսի միջին

բարեխառնութիւնն է + 25°: Ողբ չոր է: Տարվա ընթացքում շատ քիչ մթնոլորտային տեղումներ են թափվում (մոտ 300 միլլիմետր)* այնպես վոր իր բնական վիճակում արարատյան դաշան անապատի բնույթ ունի: Բայց Արաքսի և նրա վտակների մոտ, ինչպես և արհեստական ջրանցքների միջոցով վոռոգվող տեղերում նա խիտ բնակչութիւն ունի, վորը մեծ հաշոգութեամբ մշակում է խաղող, բամբակ, ծխախոտ և այլն:

Արարատյան դաշտից բարձրանալով դեպի բարձր սարերը, մենք տեսնում ենք, վոր կլիման հետզհետե ցրտում է: օրինակ, Յելենովկայում, վոր ծովի մակերևույթից 1940 մետր բարձր է. հունվարի միջին բարեխառնութիւնն է մոտ-8°, իսկ հուլիսինը՝ + 16°: Բայց այս բարձրագիւր տեղերում ավելի շատ մթնոլորտային տեղումներ են թափվում, քան թե Արարատյան դաշտում:

Ինչպես վոր դեպի բարձր սարերի գագաթները փոխվում է կլիման, այնպես էլ փոխվում են բուսականութիւնը և հողերը: Ան բույսերը, վորոնք հաշոգութեամբ աճում են Հայաստանի ցածրագիւր մասում, օրինակ՝ Արարատյան դաշտում, բարձր լեռներում ցրտի պատճառով չեն կարողանում աճել: Արարատյան դաշտի խաղողը, բամբակը, սելսը Սևանի բարձրավանդակում կամ Արագածի գագաթին չեն աճում: Այդ է պատճառը, վոր յերկրագործութիւնը զարգացել է Խ. Հայաստանի համեմատաբար ցածր շրջաններում, իսկ բարձրագիւր շրջաններում, վորտեղ յերկրագործութիւնը մեծ արդւունք չի տալիս, բնակչութեան համար անասնապահութիւնն ավելի կարևոր դեր է կատարում: Ընդարձակ լեռնային տափաստանները Խորհ. Հայաստանի միջերատու անասնապահութեան զարգացման համար շատ մեծ նշանակութիւն ունեն: Լեռնային տափաստանների շրջանում Խորհ. իշխանութիւնը հիմնել է անասնապահական բազմաթիւ ֆիրմաներ, վորոնք ստացած կաթը վերամշակում են և պատրաստում ընտիր յուղ և պանիր:

Ինչպէս Հայաստանի կլիման բազմազան է: Յերևանից Դարաչիչազ կամ Յելենովկա կլիման ինչպես է փոխվում:

Անասնապահութիւնը գլխավորապես Խ. Հայաստանի վճր շրջաններում կարող է զարգանալ:

* Այդ թիւը ցույց է տալիս, վոր յեթե մթնոլորտային տեղումներից առաջացած ջրերը վոչ գոլորշանան և վոչ էլ ծծվեն դեպի, այն դեպքում դեռնի յերեսին կգոյանա 300 միլլիմետր խորութեամբ ջրային շերտ:

Յերկրի վերին շերտը, վորտեղ բույսերն արմատ են ձգում և սնունդ վերցնում, կոչվում է հող: Խոտերի և ծառերի արմարաններն ու տերևները, փթելով հողի մեջ, առաջացնում են մի տեսակ սև նյութ, վորը կոչվում է հումուս: Վորքան հողի մեջ շատ հումուս է գտնվում, այնքան այդ հողն արգասավանդ է լինում: Շատ հումուս գտնվում է սևահողի մեջ: զրա համար էլ սևահողը յերկրագործի ամենասիրած հողն է:

Սևահողը տարածված է Լոռու, Շիրակի դաշտերում, Սևանա բարձրավանդակում և այլ տեղերում:

Արարատյան դաշտի հողը գորշ է և արգասավանդ, բայց արհեստական վոռոգման կարիք ունի: Խորհ. իշխանութեան ջանքերով կառուցվել են մի շարք ջրանցքներ, ինչպիսին են փոքր Սարգարաբաղի, Շահումյանի անվան, Լեւինի անվան, դոբրի վոռոգման, Ստալինի անվան ջրանցքները:

Լեռնայանջերում հողը փոխվում է. այստեղ մեծ տեղ են բռնում լեռնագագաթային հողերը:

Բույսերն իրենց արմատների միջոցով հողից ծծում են զանազան աղեր: յեթե միքանի տարի անընդհատ նույն հողում վորևե հացահատիկ ցանենք, այդ հողն ուժասպառ կլինի, այսինքն նրա միջի աննդանյութերը կպակասեն և լավ բերք չի ստացվի: Դրա համար էլ կոյտնտեսութիւնները ու խորհանտեսութիւնները հողը կրկին պարարտացնում են, ցանելով գոմաղբ կամ գործարաններում պատրաստած հանքային փոշի: Այսպիսի հանքային պարարտանյութ է արտադրելու Դարաքիլիսայի նոր կառուցվող գործարանը:

- Ի՞նչ է հողը:
- Հողի մեջ ի՞նչ է գտնվում:
- Ինչպէս հողն առանց պարարտացնելու 5-6 տարի չի կարելի հաշոգ. բերք վերցնել:
- Հողն ինչպիսի կարարտացնում:
- Խ. Հայաստանի վճր մասն ավելի կարիք ունի արհեստական ջրանցքների:

ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԶԲԱՂՄՈՒՆՔԸ

Խորհ. Հայաստանը մինչև խորհրդայնացումը մի հետամնաց գյուղատնտեսական յերկիր էր: Ցարական իշխանութիւնը չէր հոգում մեր անտեսութիւնը զարգացնելու մասին, չէր կառու-

ցում գործարաններ ու ելեկտրակայաններ, չէր զարգացնում մթերատու անասնապահությունը և տեխնիկական բույսերի մշակությունը. ընդհակառակը, նա Հայաստանի վրա նայում էր վորպես մի գաղութի, վորը շահագործում էլին ռուս և տեղական կապիտալիստները:

Նույնմբերյան հեղափոխությունից հետո Հայաստանի վիճակը փոխվում է: Խորհ. իշխանությունը մեծ ջանք է թափում, հսկայական դրամագլուխ հատկացնում Խ. Հայաստանի տնտեսությունը զարգացնելու համար: Հիմնվում են ելեկտրակայաններ, տեքստիլ գործարան, ցեմենտի գործարան, կարբիտի, կոնսերվի, ծծմբաթթվի, պանրի-յուղի և այլ գործարաններ. նորոգվում են պղնձահանքերը, բարձրանում է պղնձի արտադրանքը. Խորհ. Միության զանազան շրջաններից բերվում են ազնվացեղ անասուններ և դրանցով ազնվացնում մեր տեղական մանր անասունները. կառուցվում են նոր լեռկաթուղիներ ու խճուղիներ, ներմուծվում են բազմաթիվ տրակտորներ, լեռկաթե գուլթաններ, սերմացան, սերմագտիչ մեքենաներ և այլն:

Այս բոլոր ջանքերի շնորհիվ մենք այժմ ավելի շատ ապրանքներ ենք արտադրում, քան ցարական իշխանության որով Այժմ տեսնենք թե ինչով են զբաղվում Խ. Հայաստանի առանձին շրջանները:

ՄԻԱՅՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ Ե, ՎՈՐ ԱՇԽԱՏՈՒՄ Ե ԶԱՐԳԱՑՆԵԼ ՇԵՏԱՄՆԱՑ, ՄԱՆՐ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՈՒՆՏՈՒՐԱՆ:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԸ

Խ. Հայաստանի քարտեզի վրա ցույց տվեք՝ Յերևանը, Դավալուն, Սարգարաբաաը, Աշտարակը, Քանաքեռը և Վաղարշապատը: Նշանակեցեք այդ անունները Խ. Հայաստանի համր քարտեզի վրա:

Արարատյան դաշտն, ինչպես տեսանք, ունի չոր, ցամաքաբային կլիմա: Մթնոլորտային տեղումներն այնքան քիչ են,

վոր առանց արհեստական վոռոգման լեռկրագործությունը մեծ արդյունք չէր կարող տալ:

Արարատյան դաշտի բնակիչների համար արհեստական վոռոգման խնդիրը ամենակարևոր խնդիրներից մեկն է: Այդ է պատճառը, վոր Խորհ. իշխանությունն աշխատում է վոռոգել չոր անբերրի տարածությունները, վորպեսզի բնակիչները կարողանան ընդարձակել բամբակի ցանքսերը, խաղողի այգիները և այլն:

Բամբակի մշակությունը. Արարատյան դաշտի լեռկար ու տաք ամառը, արհեստական ջրանցքները հնարավորություն են տվել է զարգացնելու բամբակի մշակությունը:

Բամբակը կարևոր բույս է: Ամբողջ աշխարհում գործվածքների մեծ մասը բամբակից են պատրաստում:

Զտած բամբակից պատրաստում են բյազ, թելեր և այլն: Բամբակը գտելուց հետո մնում է կորիզ: Այդ կորիզներից Յերևանում ձեթ են հանում, վորը գործ է անում սապոն լեփելու համար: Ձեթը հանելուց հետո մնում է քուսպը, վորով կերակրում են անասուններին: Այսպիսով բամբակը շատ կարևոր տեխնիկական բույս է:

Բամբակի մշակության զարգացումը բացատրվում է նրանով, վոր կուլեկտիվացումը բամբակացան շրջաններում մեծ շահերի լե հասել:

Բամբակի մշակության համար մանավանդ կարևոր նշանակություն ունեն մեքենայացումը կայանները:

1930 թ. Խ. Հայաստանում կար միայն 1 մեքենատրակտորային կայան, 68 տրակտորով, իսկ 1931 թ. կար 4 կայան, վորտեղ գտնվում էլին 180 տրակտոր:

Մեքենատրակտորային կայանները իրենց մեքենաներով ողնության են գալիս գյուղացիներին. — նրանք վարում են, ցանում և բերքը հավաքում: Մեքենաներով վոչ միայն լեռկրագործական աշխատանքներն ավելի արագ են կատարվում, այլև լավ: Իրա համար էլ մեքենաներով մշակելու զեպքում ավելի լավ բերք է ստացվում:

Հնգամյա պլանի համաձայն բամբակացան շրջաններն այս հնգամյակի վերջում պետք է համատարած կուլեկտիվացման լենթարկվեն. պետք է ներմուծվեն նոր տրակտորներ ու մեքենաներ,

պետք է պարարտացվեն բամբակի ցանքսերը, վորպեսզի բեր-
քատվութիւնը ըարձրանա, պետք է ընդարցակվեն ցանքսերը և
արհեստական ջրանցքների ցանցը և այլն:

ԸՆԴԱՐՁԱԿԵՔ ԲԱՄԲԱԿԻ ՑԱՆՔՍԵՐԸ, ՎՈՐՊԵՍՁԻ ՄԵՆՔ ՈՏԱՐ ՅԵՐԿՐԵՆԻՑ
ԲԱՄԲԱԿ ԶՆԵՐՄՈՒՄԵՆՔ:

Այգեգործութիւն. Արարատյան դաշտը նշանավոր է վոչ
մնայն իր բամբակով, այլև խաղողով, դեղձով, ծիրանով, սե-
խով և այլն: Յերևանի խաղողը հայտնի լի իր քաղցրութեամբ:
Խաղողի բերքն այնքան մեծ է, վոր նրա խոշոր մասը վերա-
մշակում են և ստանում գինի, սպիրտ, կոնյակ և խաղողի
հյութ: Յերևանի «Արարատ» գործարանը հռչակված է իր ըն-
տիր կոնյակով ամբողջ Խորհ. Միութեան մեջ:

Յերևանում դեղձից, ծիրանից, կեռասից և այլ մրգերից
պատրաստում են միլիոնավոր տուփ կոնսերվներ, վորոնք
փոխադրվում են վոչ միայն Խորհ. Միութեան խոշոր քաղաք-
ները, և այլ արտասանվում են:

1930 թ. արտադրվել է մոտ 6 միլիոն տուփ կոնսերվ, իսկ
1931 թ.՝ մոտ 11 միլիոն տուփ:

Արարատյան դաշտի արդյունաբերության այլ նյութերը:
Արարատյան դաշտում վերամշակում են վոչ միայն գյուղատն-
տեսական մթերքներ, այլ և հանքային. որինսով՝ Յերևանում
գտնվում է նշանավոր կարբիդի գործարանը, վորը համամիու-
թենական նշանակութիւն ունի:

Դավալվում գտնվում է հսկայական գործարան, վորը մեծ
քանակութեամբ ցեմենտ է արտադրում:

Թե կարբիդի և թե ցեմենտի գործարանները կառուցվել
են Խորհ. Իշխանութեան որով:

Յերեվանը Խ. Հայաստանի մայրաքաղաք: Յերևանը Խորհ.
Հայաստանի ամենամեծ քաղաքն է: Այստեղ են գտնվում Հա-
յաստանի Կոմ. (բ) կուսակցութեան կենտրոնական կոմիտեն,
կենտգործկոմը, Ժողկոմխորհը և բազմաթիվ պետական հիմնար-
կութիւններ, բարձրագույն դպրոցներ, գիտական թանգարան-
ներ և այլն:

Դանվելով Արարատյան դաշտի կենտրոնում, նա խճուղինե-
րով և լերկաթուղով միանում է վոչ միայն դաշտի տար-
բեր մասերի հետ, այլ և Խ. Հայաստանի հեռավոր շրջանների
հետ: Յերևանից սկսվում են խճուղիներ դեպի Աբարան, Սնա-
նի շրջանը, Դարալագյազ և այլն: Յերկաթուղով նա միանում
է Խ. Հայաստանի լերկրորդ պրոլետարական կենտրոնի՝ Լենի-
նականի հետ և մյուս կողմից՝ Չուլֆայի վրայով Պարսկաստա-
նի հետ: Իր աշխարհագրական դիրքի շնորհիվ Յերևանը դար-
ձել է Խ. Հայաստանի առաջին առևտրական կենտրոնը: Ներ-
կայումս Յերևանում կառուցվում է նաև ելեկտրական արամվաք:
Յերևանը նշանավոր է նաև, վորպես արդյունաբերական
կենտրոն (կոնսերվի, կոնյակի, ձեթի, սապոնի, կարբիտի և այլ
գործարաններ): Այս գործարաններին եներգիտ տալիս են Յե-
րևանի I և II ելեկտրակայանները, վորոնք կառուցված են
Չանգվի վրա, քաղաքից 3 կիլոմետր հեռավորութեան վրա:

Ինչպես տեսանք, Յերևանից վոչ հեռու, Քանաքեռում
կառուցվում է մի նոր ելեկտրակայան, վորն ունենալու լի 80
հազար կիլովատ կարողութիւն և մեծ նշանակութիւն կու-
նենա վոչ միայն Յերևանի, այլև ամբողջ Խ. Հայաստանի տնտե-
սութեան զարգացման համար:

Արարատյան դաշտում լինչ տեխնիկական բույսեր են մշակում:
Արարատյան դաշտում լինչ դյուղատնտեսական մթերքներ են
վերամշակում:

Բացի գյուղատնտեսական մթերքներից ել լինչ են վերամշակում:
Հիշեցեք Յերևանի գործարանները: Յերևանն իր լուսավորու-
թիւնը և եներգիտ վորտեղից է ստանում:

Խ. Հայաստանի համր քարտեզի վրա Յերևանի կողքին նկարեցեք
մի գինու շիշ, մի ելեկտրական լապտեր, մեկ գործարան: Նույնը նկա-
րեցեք քարտեզի տակ և շի կողքին գրեցեք՝ «գինի, կոնյակ», լապտերի
կողքին «ելեկտրական կայարան», գործարանի շինքի կողքին «գործարան»:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԸ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՈՒՅՍԵՐԻ ՇՐՋԱՆ Ե

Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՄԱՍԸ

Ինչպես տեսանք Խ. Հայաստանը շատ լեռնոտ լերկիր է:
Պարզ է, վոր այսպիսի բազմազան մակերևույթ ունեցող
լերկիրը պետք է ունենա նաև բազմազան կլիմա, բուսա-
կանութիւն և հողեր:

Լեռնային Հայաստանի համեմատաբար ցածր մասերում աչսինքն՝ նախալեռնային շրջանում մշակում են հացահատիկներ, ծխախոտ, կարտոֆիլ, ճակնդեղ և այլն. ցանում են խոտեր, պահում են անասուններ և այլն: Ավելի բարձր, կլիման ցրտում է և յերկրագործությունը մեծ արդյունք չի տալիս. դրա փոխարեն առաջնակարգ դեր են կատարում անասնապահությունը, մեղվաբուծությունը և այլն: Վերջապես ավելի բարձր շրջաններում ձգվում են լեռնային մարգագետիններ, վորոնք կոչվում են Ալպյան մարգագետիններ:

Ալպյան մարգագետինները հրաշալի արոտավայրեր են: Ամբողջ ամառվա ընթացքում կոլտնտեսությունների և խորհրտնաեսությունների հոտերն արածում են այստեղ:

Այսպիսով Ս. Հայաստանի լեռնային մասը կարելի չէ բաժանել հետևյալ յերեք գոտիների՝ նախալեռնային, լեռնային և Ալպյան:

Անասնապահություն: Անասնապահությունը մեր յերկրի տնտեսության կարևոր ճյուղերից մեկն է. նա տալիս է ազգաբնակչության համար սննդամթերք (միս, կաթ, յուղ պանիր) և գործարանների համար հումույթ (բուրդ, կաշի, մազ և այլն):

Մենք տեսանք, վոր Ս. Հայաստանում նոր-նոր գործարաններ են շինվում և քաղաքային ազգաբնակչությունն աճում է հետևապես անասնապահական մթերքների՝ բրդի, մսի, կաթի, յուղի պահանջն էլ մեծանում է: Բայց մանր անհատական տնտեսությունները բավարար չափով անասնապահական սննդամթերք չեն կարողանում արտադրել, իսկ մյուս կողմից անասնապահության սոցիալիստական սեկտորը մինչև 1930 թ. շատ թույլ էր. անասնապահական խորհրտնաեսությունների թիվը շատ աննշան էր:

ԱՆԱՆԱՊԱՀՈՒՅՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅՆՈՒՅՅՈՒՆԸ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԲԱՐՁՐԱՅՆԵԼ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՎ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒՅՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒՅՅՈՒՆՆԵՐ

Համ. Կոմ. Կուսակցության XVI համագումարն ուղղակի հրահանգում է կազմակերպել նոր, բազմաթիվ խորհրտնաեսու-

թյուններ ու կոլտնտեսություններ, ապահովել անասունները կերով:

անասնապահության ապրանքայնությունը բարձրացնելու համար բավական չէ միայն շատացնել անասունների թիվը. միաժամանակ պետք է աշխատել անասունների վորակը բարձրացնել և ապահովել կերով: Փորձերը ցույց են տալիս, վոր կուշտ կովն ավելի շատ կաթ է տալիս, քան սովածը: Այդ պատճառով Ս. իշխանությունն աշխատում է ընդարձակել սիլոսային բույսերի, ցանովի խոտերի և արմատապտուղների ցանքսերը: Ցանովի խոտի մակարդակը:

ԱՎ ԿԵՐԻՑ ԱՆԱՍՈՒՆՆԵՐՆ ԱԶՆՎԱՆՈՒՄ ԵՆ, ԱՐՏԱԴՐԱՆՔԸ (ՄԻՍ, ԿԱԹ) • ԲԱՐՁՐԱՆՈՒՄ Ե:

Մեր հասարակ կովը տարեկան տալիս է մոտ 500 կիլոգրամ կաթ, իսկ Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ 3000-4000 կիլոգրամ:

Սոշոր յեղջուրավոր անասունի քաշը մեզանում 1—2 ցենտներ է, իսկ Միացյալ Նահանգներում՝ 6—8 ցենտներ:

Վոչխարը մեզանում տալիս է տարեկան 1,2 կիլոգրամ բուրդ, իսկ Միացյ. Նահանգներում՝ 3,6 կիլոգրամ:

Այս բոլորը ցույց է տալիս, վոր անասնապահությունը մեզնում դեռ ևս լավ հիմքերի վրա չի դրված: Մենք պետք է աշխատենք բարձրացնել մեր անասունների վորակը. վատ խոզի, վատ կովի փոխարեն պետք է լավը պահենք: Ներկայումս խորհրտնաեսություններն ու կոլտնտեսությունները ՍՍՀՄ-ի գանազան մասերից բերում են ազնվացեղ խոզեր, ցուլեր և գրանցով ազնվացնում տեղական անասունների ցեղը: Շատ սովխոզներ հիմա ունեն ընտիր կովեր, վոչխարներ և խոզեր:

Կարևորագույնը: Լեռնային գոտու բնակիչների համար կաթնատնտեսությունը շատ կարևոր նշանակություն ունի. Բազմաթիվ կաթնատնտեսական գործարաններում կաթը վերամշակելով ստանում են ընկիր յուղ յեվ պանիր, վորը մեծ հոշակ ունի ամբողջ Միություն մեջ:

1929 թ.	մթերվել է	63400	ցենտներ	կաթ	և	կաթնամթերք
1930 թ.	»	82.500	»	»	»	»
1931 թ.	»	172500	»	»	»	»

Այստեղից յերևում է, թե ինչպիսի մեծ առաջադիմություն է ցույց տալիս կաթնատնտեսությունը Խ. Հայաստանում:

Խ. Հայաստանի կաթնատնտեսական ուսյունների մեջ առաջին տեղը բռնում է Լոռին, վորի կենտրոնը Ստեփանավանն է:

Խ. Հայաստանի համը քարտեզի վրա Լոռում (Ստեփանավանի մոտ), Նոր Բայազետի մոտ, Սիմյոնովկայի մոտ, Աղբաբայում, Լենինականի մոտ նկարեցեք մեկ-մեկ կով և քարտեզի տակ ավելք դրա բացատրությունը, այսինքն նկարեցեք մի կով և կողքին գրեցեք «կաթնատնտեսական սովխոզներ»:

Խ. Հայաստանի լեռնային գոտին գյուղատնտեսության վոր ճյուղի համար է հարմար:

Խ. Իշխանությունն ինչ միջոցների յե դիմում անասնապահությանը զարգացնելու համար:

Խ. Հայաստանն ինչ կաթնամթերքներ և արտադրում:

Յերկրագործություն. Բացի անասնապահությունից լեռնային մասում բնակիչները զբաղվում են նաև հացահատիկների, կարտոֆիլի, ծխախոտի, ճակնդեղի և այլ բույսերի մշակությամբ:

Ցանում են գլխավորապես ցորեն և գարի. ցորենն ավելի ցածր շրջաններում, իսկ գարին՝ բարձր:

Խ. Իշխանությունը բերքատվությունը բարձրացնելու համար վոչ միայն պարարտանյութերի գործարան է կառուցում, այլ և ամեն տարի ներմուծում է յերկրագործական մեքենաներ ու գույքաներ: Մեքենաներով հողն ավելի լավ է մշակվում:

Շաքարի ճակնդեղը մշակվում է Շիրակի դաշտում: Լենինականում ներկայումս կառուցվում է մի գործարան, վոր տեղ ճակնդեղից ստացվելու յե շաքար:

Մաղկավետ տափաստանները հնարավորություն են տալիս նաև զարգացնելու մեղվաբուծությունը: Ամբողջ Անդրկովկասում գոգած է Լոռու մեղրը:

Չեղարությունը. զարգացել է Մևանա լճում, վորը հարուստ է իշխանով և գեղարունով:

Տեխսիլ արդյունաբերություն. Մինչև խորհրդայնացումը Խորհ. Հայաստանում տեքստիլ արդյունաբերություն չկար:

Միայն Խորհրդային Իշխանության որով Լենինականում կառուցվեց խոշոր տեքստիլ գործարան, վորն արտադրում է զանազան գործվածքներ և տրիկոտաժ (գուլպաներ, տրիկոձե եր, ժակետներ և այլն): Տեքստիլ գործարանի շնորհիվ Լենինականը դարձե է Խ. Հայաստանի յերկրորդ խոշոր, արդյունաբերական քաղաքը:

Պղնձի արդյունաբերությունը. Խ. Հայաստանի լեռնային արդյունաբերության մեջ առաջին տեղը պղինձն է բռնում:

Պղինձը ներկայումս շատ մեծ նշանակություն ունի: Նրանից պատրաստում են համաձուլվածքներ. պղինձը և ցինկը իրար հետ հալում են և ստանում արույր, վորից պատրաստում են ինքնալեռներ, գործիքներ և այլն: Պղնձից պատրաստում են լարեր, վորոնք մեծ նշանակություն ունեն ելեկտրատեխնիկայի համար:

Ալյանվերդու (Լոռի) և Ղափանի (Չանգիզոր) պղնձահանքերը համաձուլվածքների նշանակություն ունեն: Պղնձահանքի շնորհիվ Ղափանն ու Ալյանվերդին դարձել են պրոլետարական կենտրոններ:

Պղնձի արդյունաբերությունը զարգացնելու համար Ալյանվերդու-Չանգիզոր յերկաթուղուց (Արաքսի ավից) դեպի Ղափանի պղնձահանքերն անցկացնում են նոր յերկաթուղի:

Արքիկ-ՏՈՒՑ. Ամբողջ Խորհ. Միության մեջ շինարարությունը հսկայական չափերի յե հասնում: Կառուցվում են վոչ միայն բազմաթիվ նոր գործարաններ, այլև նոր քաղաքներ: Այդ հսկայական շինարարության համար մեծ քանակությամբ շինարարական նյութեր են պետք:

Այդպիսի նյութերից է ՏՈՒՑ կոչված քարը:

Տուֆը գործ է ածվում պատերի համար (աղյուսի խոխարեն): Նա թեթև և դիմացկուն քար է. նրան հեշտությունը կարելի յե սղոցել, տաշել, մեջը մեխ խփել և այլն:

Տուֆով հարուստ է Արքիկի շրջանը (Լենինականից դեպի հարավ-արևելք, Արագածի ստորոտում): Արքիկից տուֆն արտահանելու համար Խորհ. Իշխանությունը կառուցել է մի հատուկ յերկաթուղային գիծ, վորով Արքիկը միանում է գլխավոր յերկաթուղու հետ:

Շինարարական մյուս նյութերից հայտնի յե պեմզան, վորն արդյունահանվում է Անի կայարանից վոչ հեռու, Ախուր-

յանի ամիսն: Նրա արդյունահանումը հսկայական չափերի չե հասնում: Թե տուֆը և թե պեմզան արտահանում են վոչ միայն Անդրկովկասի զանազան շրջանները, այլև ԽՍՀՄ-ի հե-
ռավոր անկյունները:

Քիմիական արդյունաբերություն. Ղարաքիլիսան և Ալլահ-
վերդին գառնալու լեռն վոչ միայն Խ. Հանաստանի, այլև ամբողջ
Անդրկովկասի քիմիական արդյունաբերության խոշոր կենտ-
րոններ:

Ղարաքիլիսայում կառուցվում է և այս տարի կավարավի
ցիանամիտի գործարանը՝ վորը Անդրկովկասի վարելահողերի
համար պարարտանյութ պետք է արտադրի:

Ալլավերդում կառուցվում է պղնձարջասպի և ծծմբաթթվի
գործարաններ, վորոնք նույնպես այս տարի պետք է գործի
անցնեն:

Թե Ղարաքիլիսայի և թե Ալլահվերդու գործարանները
կլանելու լեռն մեծ քանակությամբ ելեկտրաէներգիա, վոր կտա
Չորագետի ելեկտրակայանը:

Ելեկտրոէկակցիա. Խորհրդայնացումը Հայաստանին տվեց
վոչ միայն խոշոր գործարաններ, այլև ելեկտրակայաններ:

Գործարաններն աշխատացնելու համար մեծ քանակությամբ
եներգիա չե պետք: Ամենատրամաբ եներգիան ելեկտրական
եներգիան է: Իրա համար ել Խորհ. իշխանությունը կառուցե-
լով գործարաններ լու յերկաթուղիներ, միաժամանակ խոշոր
ելեկտրական շինարարության հիմքն է գցում:

1923 թ. սկսվում է Յերևանի I կայարանի կառուցումը,
վորն ավարտվում է 1926 թ. (Չանգվի վրա):

1925 թ. սկսվում է Լենինականի ելեկտրակայանի կառու-
ցումը (Շիրշրանցքի վրա, Լենինականից վոչ հեռու): Այդ կա-
յարանն եներգիա չե տալիս Լենինականի տեքստիլ ֆաբրիկային,

Լենինականի ելեկտրակայանի հետ միաժամանակ սկսվում
է Իջևանի ելեկտրակայանի շինարարությունը (վճր գետի վրա):

Այս յերեք կայարաններն ել այսոր նորմալ կնւպով աշ-
խատում են: Բայց զրանք չեն բավարարում յերկրի պահանջ-
ներին, վորովհետև կառուցվող նոր գործարանները մեծ քանա-
կությամբ եներգիա չեն կլանելու:

Ղարաքիլիսայի և Ալլահվերդու միջև, Չորագետի վրա կա-
ռուցվում է Խ. Հայաստանի ամենախոշոր ելեկտրակայաններից

մեկը՝ Չորագետը, վորն եներգիա չե տալու թե Ղարաքիլիսայի
և թե Ալլահվերդու գործարաններին: Բացի այդ՝ Չորագետն
ելեկտրոֆիկացիայի կենթարկի Խ. Հայաստանի յերկաթուղու-
այն մասը, վոր գտնվում է Ղարաքիլիսայի և Սանահինի միջև:

Ավելի խոշոր կայարան է լինելու Քանաքեռի ելեկտրա-
կայանը (Չանգվի վրա):

Բացի այս ելեկտրակայաններից ծրագրված են մի շարք ուրիշ
կայաններ ևս նույն Չանգվի վրա: Սեանը Յերևանից մոտ մեկ
կիլոմետր բարձր է: Հետևապես Չանգին շատ մեծ եներգիա
ունի և կարելի չե նրա վրա կառուցել իրար հետևից մի շարք
նոր ելեկտրակայաններ, վորոնք եներգիա կտան վոչ միայն Խ.
Հայաստանին, այլև ամբողջ Անդրկովկասին:

Չանգվի վրա արդեն գործում են Յերևանի I և II ելեկ-
տրակայանները, ավարտվում է Քանաքեռուց, զցվել է Քաղսու-
ելեկտրակայանի հիմքը:

Ինչ խոշոր քանակությամբ եներգիա կտանանք մենք
այն ելեկտրակայաններից, վորոնք հուլունքի պես շարվելու լեն
Չանգվի յերկարությունը:

«ԵԼԵԿՏՐՈՅԻԿԱՅԻԱՆ ԿԿԵՐՊԱՐԱՆԱՓՈՒՆԻ ՅԵՐԿԻՐԸ» ԼԵՆԻՆ:

Աժխա ցանկ.— Խորհ. Հայաստանի համը քարտեզի վրա Լենինա-
կանի մոտ նկարեցեք մեկ ելեկտրական լապտեր, մեկ գործարան և
մեկ իլիկ:

Քարտեզի տակն նկարեցեք նույնը և լապտերի կողքին գրեցեք
«ելեկտրակայան», գործարանի կողքին՝ «շաքարի գործարան», իսկ
ելեկի կողքին՝ «տեքստիլ գործարան»:

Նույն քարտեզի վրա Ղափանի և Ալլահվերդու կողքին նկարե-
ցեք կաթսա և քարտեզի տակ տվեք դրա բացատրությունը:

Սեանա լճի մեջ մեկ ձուկ նկարեցեք և բացատրությունը տվեք
քարտեզի տակ:

Ելեկտրական կայանների տեղում համը քարտեզի վրա նկարեցեք
ելեկտրական լապտերներ և բացատրություն տվեք քարտեզի տակ:

Ղարաքիլիսայի և Ալլահվերդու կողքին նկարեցեք մեկ-մեկ գոր-
ծարան և քարտեզի տակ տվեք բացատրությունը:

Նախալեռնային շրջանում զանազան տեղերում մեկ-մեկ կով
և քարտեզի տակ տվեք դրա բացատրությունը:

Անասնապահութիւնն ինչ նշանակութիւն ունի լեռնային մասի համար:

Նախալեռնային մասում ինչ բույսեր են մշակում:

ձականդեղից ինչ պետք և ստացվի վճարտեղ:

Ձկնորսութիւնը վճարտեղ և զարգացել:

Լեռնականի տեքստիլ գործարանը բամբակը վճարտեղից և ստանում:

Ղարաքիլիսան, Լեռնականը. Սրթիկը, Ղափանը, Ալլանվերդին


ինչո՞վ են նշանավոր:

Ներկայումս ինչ ելեկտրակայաններ են աշխատում և ինչ կայաններ են կառուցվում:

Ելեկտրոֆիկիացան ինչ նշանակութիւն ունի Խ. Հայաստանի համար:

III ԱՆԴՐԿՈՎԿԱՍ

Անդրկովկասի քարտեզի վրա գտեք Սև ծովը, Կասպից ծովը, Կովկասյան լեռները, Թյուրքիան և Պարսկաստանը:



Նկ. 7

Յույց ավելք Թիֆլիս, Բազու, Յերևան քաղաքները:
Յույց ավելք Խորհրդ. Հայաստանը, Խորհ. Վրաստանը և Խորհ. Ադրբեջանը:

Աղբբեջանը խորհրդաճանաչած 1920 թ. ապրիլի 28-ին, Հայաստանը՝ 1920 թ. նոյեմբերի 29-ին, իսկ Վրաստանը՝ 1921 թ. փետրվարի 25-ին: Այսպիսով կազմվեցին՝

Աղբբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն:

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն:

Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն:

Այս լերերը հանրապետությունները հետո միացան իրար հետ և կազմեցին Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետություն:

Վրաստանի Սոց. Խորհրդ. Հանրապետության մեջ, բացի բուն Վրաստանից մտնում են նաև Աջարստանի, Աբխազիայի հանրապետությունները և Հարավային Ոսեթի Ինքնավար շրջանը: Աղբբեջանի Սոց. Խորհրդ. Հանրապետության մեջ մտնում են Լեռնային Ղարաբաղի Ինքնավար երջանը և Նախիջևանի Սոց. Խորհրդ. Հանրապետությունը:

Ամբողջ Անդրկովկասի Ս. Ֆ. Խ. Հանրապետության մայրաքաղաքը Թիֆլիսն է, վորը միևնույն ժամանակ Վրաստանի Ս. Խ. Հանրապետության կենտրոնն է:

Անդրկովկասի ՍՖՍՀ մեջ մտնող հանրապետությունների մակերեսվույթի մեծությունը յեվ բնակիչների թիվը.

	Մակերեսը, թիվ մկ. ծովյունը բառակազմակերպության համար	Բնակիչները, թիվը	Վարչական կենտրոնը (մայրաքաղաքը)
1. Վրաստանի ՍՍՀ	70.447	2.666.494	Թբիլիսի
Դրա մեջ			
ա) Աբխազիայի ՍՍՀ	8.381	201.016	Սուխում
բ) Աջարստանի ՍՍՀ	8.228	131.957	Բաթում
գ) Հար. Ոսեթի Ինքն. շրջան	4.309	87.375	Ստալինի (Յուրնավ)
2. Աղբբեջանի ՍՍՀ	85.963	2.314.571	Բաղու
Դրա մեջ			
ա) Ինքն. Ղարաբաղ	4.161	125.300	Ստեփանակերտ
բ) Նախիջևանի ՍՍՀ	5.988	104.909	Նախիջևան
3. Հայաստանի ՍՍՀ	30.248	1.039.000	Յերևան
Ամբողջ Անդրկովկասում	186.653	մոտ 6 միլիոն	

Անդրկովկասի քարտեզի վրա գտեք ձեր բնակավայրը. լեթե նա նշանակված չէ. այդ դեպքում ցույց տվեք այն քաղաքը, վորի հետ ձեր բնակավայրը կապ է պահպանում:

Ցույց տվեք Կովկասյան լեռնաշղթան, Սև և Կասպից ծովերը, Թյուրքիան և Պարսկաստանը:

Ցույց տվեք Անդրկովկասի արևելյան և արևմտյան, հարավային և հյուսիսային սահմանները:

Մաշտարի ոգնությամբ լմացեք, թե Բաթումից մինչև Բաղու և Արագածից մինչև Կազրեկ ջանի կիրմեար է:

Համաշխարհային քաղաքական քարտեզի վրա ցույց տվեք Անդրկովկասի տեղը:

Գտեք Յերևան, Թիֆլիս, Բաղու և Բաթում քաղաքները:

Անդրկովկասը տարածվում է Կովկասյան լեռնաշղթայից մինչև Թյուրքիայի և պարսկաստանի սահմանները և Սև ծովից մինչև Կասպից ծովը:

Հյուսիսային սահմանն սկսվում է Գագրայի մոտից (Սև ծովի լեզերքով), ապա Կովկասյան լեռնաեղթայի վրայով անցնում է դեպի հարավ-արևելք, բայց Բազվին չհասած ծովում է դեպի հյուսիս-արևելք և Սամուր գետի վրայով հասնում է մինչև Կասպից ծովը:

Անդրկովկասի հարավային սահմանն սկսվում է Սեվ ծովից. Բաթումից փոքր ինչ հարավ (Սարպ գյուղի մոտ) և կարելով ձորոխ դեպը հասնում է մինչև Ախուրյանը, այնուհետև Ախուրյանի և Արախսի վրայով ուղղվում է դեպի արևելք և Կասպից ծովը չհասած, ծովում է դեպի հարավ ու Թալիբի լեռներով հասնում է մինչև Կասպից ծովը (Կենքորան քաղաքից հարավ, Աստարայի մոտ):


Արևմտյան սահմանը կազմում է Սեվ ծովը, իսկ արևելյանը՝ Կասպից ծովը:

Աշխատանք. — Անդրկովկասի համը քարտեզի վրա Անդրկովկասի հյուսիսային և հարավային սահմանների վրայով կարմիր գիծ քաշեցեք: Գրեցեք իրենց տեղերում Սև ծով, Կովկասյան լեռնաշղթա, Մամուր, Կասպից ծով, Աստարա, Արաքս, Ախուրյան, Բաթում, Թյուրքիա և Պարսկաստան անունները: (Աշխարհ. տետր, աշխատանք 37):

Յերևանից Ինչ ճանապարհով կարող եք գնալ դեպի Սև կամ Կասպից ծովը:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Անդրկովկասը շատ լեռնոտ լեռկիր է: Այստեղ կարելի չէ քեանել և բարձր ձուխապատ լեռներ և՛ խոր հովիտներ ու որեր և՛ դաշտավայրեր ու բարձրավանդակներ:



Նկ. 8

Անդրկովկասի հյուսիսային մասով Սև ծովից մինչև Կասպից ծովը ձգվում է Կովկասյան լեռնաշղթան, վրի հարա-

լին լանջերը գտնվում են Անդրկովկասում: Կովկասյան լեռնաշղթայի միջին մասը շատ բարձր է և ունի մի շարք ձյունառատ գագաթներ, փորոնցից նշանավոր են Ելբրուսը (ծովի մակարևույթից բարձր է 5629 մետր), Կազբեկը (5043 մետր) և այլն:

Կովկասյան լեռնաշղթան հարավ տարածվում են միու մեծ հարթություններ: Գ հարթություններից մեկը սվում է թիֆլիսից և Կուր ախ հոսանքով հասնում է նչև Կասպից ծովը: Նա չվում է Մերձկասպյան ստավայր: Մյուս հարթությունը ձգվում է Բիոն ախ լեռկարությամբ, հասնում է մինչև Սև ծովը և չվում է Սեվծովյան դաշտավայր:


Մերձկասպյան և Սևծովյան դաշտավայրերից դեպի արավ լեռկիրը կրկին բարձրանում է և տանում խորդուրդ: Այս լեռնոտ աշխարհը լյանի լե փոքր կովկասուունով: Խոր Հայաստանը րբ Կովկասում է գտնվում: րբ Կովկասը բաղկացած է սզմաթիվ լեռնաշղթաներից, րձրավանդակներից, հոաներից և այլն: Այստեղ լնտեղ բարձրանում են հանոծ հրաբուխուներ, փորոնց սգաթից մի ժամանակ վիել է հրանեղուկ լավա, մոխիր ծածկելով ընդարձակ տաոծություններ գոյացրել են րձրավանդակներ: Ար-թիկի աուֆը, Անի պեմզան այդ հրաուխներից են առաջացել:



Նկ. 9


Անի պեմզան այդ հրաուխներից են առաջացել:

Անդրհովիտի քարեղբի վրա գտեք Սուրամի, Աջարա-Ախթալայի, Կրահալոց, Փամբակի, Ահմանդանի, Շահաաղի, Զանգիզուրի լեռները, Շիրակը, Լուին, Արարատյան դաշտը:



Նկ. 10

Սեանա լճի շուրջն ի՞նչ լեռներ կան: Յուլյց տվեք Սեծովյան դաշտավայրը. նա ամբողջապես վեր հասկանալի մեջ է գտնվում: Յուլյց տվեք Մերձկասպյան դաշտավայրը. նրա մեծ մասը վերապահալի մեջ է գտնվում:




Նկ. 11

Յուլյց տվեք փոքր Կովկասի աչք մասը, վոր գտնվում է Խ. 2-րդ գլխապահում:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿԼԻՄԱՆ ՅԵՎ ԲՈՒՍՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անդրհովիտի կլիման շատ բազմազան է: Այստեղ պատահում են խոնավ և տաք շրջաններ, չոր տափաստաններ, ցուրտ



Նկ. 12

լեռնազաղաթներ, մեղմ կլիմա ունեցող կրկրորդներ և այլն: Կլիմայի բազմազանության պատճառով Անդրհովիտում հաճախ




Նկ. 13

պում ենք բուսական բազմաթիվ տեսակների. այստեղ աճում են

բամբակ, թեյ, ծիրան, սեխ, թթենի, խաղող, նշենի, նալ կիտրոն, զանազան հացահատիկներ և այլն:

Այս բազմազան կլիման լավ պատկերացնելու համար բողջ Անդրկովկասը կրթածանեք յերեք մասի— Արևմտյան Ա կովկաս, Արեվելյան Անդրկովկաս և փոքր Կովկաս:



Եկ. 14

Արևմտյան Անդրկովկասը տարածվում է Սուբրամի լեռնաձիւղէն Սև ծովը (ցուլց տվեք): Արևմտյան Անդրկովկասը յի կողմից շրջապատված է լեռներով, իսկ Սև ծովի կողմից բաց է պատճառով արևմուտքից փչող խոնավ քամիները մտնում են ծովյան դաշտավայրը և առանձորեն վրոտում նրան: Տա


խոնավ կլիմայի պատճառով Արևմտյան Անդրկովկասն ունի ճոխ, հարուստ բուսականութուն: Ընդարձակ տարածութուններ ծածկված են փարթամ անտառներով, վորոնց մեջ պատահում են թե սաղարթավոր և թե մշատաղալար բույսեր: Իրենց ճոխութեամբ աչքի չեն ընկնում մանավանդ Սև ծովի յեզրային անտառները, ծառերն այստեղ հսկայական մեծութեան են հասնում: հազարավոր պատատուկներ փաթաթվում են ծառերին և անցնելով մի ծառից մյուսին, խճճում են այդ անտառները և նրանց դարձնում դժվար անցանելի: Անտառն Արևմտյան Անդրկովկասի ամենամեծ հարստութուններից մեկն է: մենք այստեղից արտահանում ենք թանգարժեք փայտ և զրա փոխարեն ուրիշ յերկրներից ներմուծում ենք մեքենաներ:

Ընդարձակ տարածութուններ ծածկված են թեյի, ծխախոտի, նարնջի, կիտրոնի, բամբուկի, բալանի անկարաններով: Արևմտյան Անդրկովկասը Խորհրդային Միութեան միակ անկյունն է, վորտեղ մշակվում է թեյ:

Առատ խոնավութունից Սև ծովյան դաշտավայրում տատարածվում են ընդարձակ ճահիճներ, վորտեղ բուն է գրել մալարիան: Խորհրդային իշխանութունը վորոշել է ցամաքացնել այդ ճահիճները, դրանով մենք փոշ միայն կազատվենք մալարիա հիվանդութունից, այլ և կունենանք նոր հողեր, վորտեղ կարելի է մշակել մերձարևադարձային թանգարժեք բույսեր:

Արևելյան Անդրկովկասն սկսվում է Սուբրամի լեռներից և Կուր գետի յերկարութեամբ տարածվում է մինչև Կասպից ծովը: Նրա կլիման չոր է, վորովհետև Սուբրամի, Ախլցխայի և ուրիշ լեռների պատճառով Սև ծովի կողմից քիչ խոնավութուն է ստանում: Կասպից ծովը փոքր է և շրջապատված է չոր յերկրներով, այդ պատճառով Արևելյան Անդրկովկասը Կասպից ծովից շատ չի փոռոզվում: Մերձկասպյան դաշտավայրում ամառները սաստիկ շոգ են լինում: հուլիսի միջին բարեխառնութունը 25°-ից անցնում է: Ձյունը զալիս է կարճ ժամանակով և խոր չերտով չի նստում: Գարնանը տափաստանները կանաչում են, բայց հենց վոր ամառը վրա յե հասնում, այդ տափաստանների խոտը խանձվում է, չորանում: Պարզ է, վոր այսպիսի չոր յերկրում յերկրագործութունն առանց արհեստական վրոտման

մեծ արդյունք չի կարող տալ: Խորհրդային իշխանությունը
 Կուր և Արաքս գետերից անց ե կացրել մի շարք ջրանցքներ, վո-
 ղոնցով վտուղվում են վարելահողերը: Ամալի, չոր տափաստաններն



Նկ. 15

այդ ջրերի շնորհիվ կենդանություն են առել և մեր արդյունա-
 բերությունը մեծ քանակությամբ բամբակ տալիս:

Սևծովյան և Մերձկասպյան դաշտավայրերն Անդրկովկասի ամե-
 նացածը շրջաններն են: Յեթե այդ տեղից սկսենք բարձրանալ
 դեպի Կովկասյան լեռնաշղթայի կամ փոքր Կովկասի գա-
 գաթները, մենք կտեսնենք, Վոր կլիման հետզհետե ցրտում է:
 Անդրկովկասում մինչև 1200 մետր բարձրությունն անքան
 տաք է լինում, վոր հնարավոր է մշակել բամբակ, խաղող,
 ծխախոտ, թեյ և զբաղվել այգեգործությամբ: 1200-ից մինչև
 2000 մետր բարձրություն ունեցող տեղերում բնակիչները
 գլխավորապես հացահատիկներ են մշակում, 2000 մետրից բարձր
 տարածվում են լեռնային մարգագետիններ, վորոնք մեծ նշա-
 նակություն ունեն մեր լեռկրի անասնապահության և կաթ-
 նատնտեսության զարգացման համար:

Փոքր Կովկասը մի բարձրադիր և շեղուկ լեռնա լեռկիր է. նա
 սկսվում է Ախալցխայի և Թրեալեթի լեռներից դեպի հարավ-ա-
 րևելք և Սևանա լճի, Ղարաբաղի և Չանգեզուրի վրայով հասնում
 է մինչև Արաքսը: Նրա կլիման ցամաքային է: Գետինը
 ծածկվում է ձյունի հասա շերտով, վորը հալվում է միայն
 գարնանը: Մթնոլորտային տեղումները Ախալցխայի լեռներից
 դեպի հարավ-արևելք հետզհետե քչանում են: Փոքր Կովկասի
 ավենաչոր մասը Արարատյան դաշտն է, վորի մասին արդեն
 խոսել ենք:

Ինչու Անդրկովկասի կլիման բաղմազան է
 Անդրկովկասի վեր մասն է կոչվում Արևմտյան Անդրկովկաս և
 վերն Արևելյան-

Ինչու արևմտյան Անդրկովկասն ունի խոնավ կլիմա, իսկ Արևել-
 յան Անդրկովկասը՝ չոր:

Արևմտյան Անդրկովկասում կամ Արևելյան Անդրկովկասում ինչ
 թանգարժեք բույսեր են մշակվում:

Ինչու Փոքր Կովկասի կլիման ավելի ցուրտ է: Ծովի մակերևույ-
 թից դեպի վեր բարձրանալիս ինչ կլիմայական գոտիների կարելի
 լի հանդիպել:

Ինչու Արարատյան դաշտը չոր է. վտուղումն ինչ նշանակություն
 ունի այդ դաշտի համար: Ինչ թանգարժեք բույսեր են մշակում Արա-
 րատյան դաշտում:

Անդրկովկասի գետերը յեվ լճերը.— Անդրկովկասի քարտեզի վրա
 ցույց տվեք ամբողջ Արաքսը, սկսած ակունքից մինչև գետաբերանը:
 Նա վորտեղից է սկսվում և ուր է թափվում: Գետի վեր ափն է

համարվում աջ և վերը ձախ: Ախուրջանը և Չանգին Սրաքսի վեր
 վտակներն են—աջակողմյան, թե ձախակողմյան:
 Գանք Րիոնը և Կուրը: Յուլյ ալեք նրանց աղունքն ու գետաբերանը:

Անդրկովկասի լճերից ամենամեծը և ամենագեղեցիկը
 Սևանա լիճն է:

Անդրկովկասի գետերի մի մասը թափվում է Սև ծովը, իսկ
 մյուս մասը՝ Կասպից ծովը: Սև ծովյան գետերը ընդհան-
 րապես կարճ են և մեծ մասամբ սկսվում են Կովկասյան լեռ-
 նաշղթայի հավերժական ձյունից ու սառցադաշտերից: Գարնա-
 նը, իբր սարերի ձյունն սկսում է արագորեն հալվել, այդ գե-
 տերը վարարում են և կատաղորեն ցած հոսելով, գլորում են
 հսկայական քարեր, ծառեր արմատախիլ անում և շատ անգամ
 ավերում ճանապարհներն ու կամուրջները:

Դեպի Սև ծովը հոսում է Րիոնը, վորն սկսվում է Կովկասյան
 լեռների Փասիս Մրա գագաթի սառցադաշտերից: Այժմ Րիոնի
 վրա կառուցվում է խոշոր ելեկտրակայան:

Կասպից ծովը թափվող գետերից նշանավոր են Կուրը և Արախ-
 սը, վորոնք կարևոր նշանակություն ունեն արգարնակության
 համար: Նրանց վրա կառուցված են խոշոր ելեկտրակայան-
 ներ (Չագհալ — Թիֆլիսում, Յերևանի կայանը — Չանգվի
 վրա), վորոնք վոչ միայն լույս են տալիս, այլև աշխատեցնում
 են գործարանների մեքենաները, շարժում են ելեկտր. վազոն-
 դեր և այլն: Այդ գետերից բնակիչներն անց են կացրել բազ-
 մաթիվ շրանցքներ, վորոնցով շրում են իրենց այգիներն ու վարե-
 լահողերը: Մասնավորապես Կուր գետի վրայով Ախալցխայից և Բոր-
 ժոմից փոխադրում են Թիֆլիս մեծ քանակությամբ գերաններ:


Անդրկովկասի չերկրորդ մեծ գետը Սրաքան է: Նա սկսու-
 վում է Թյուրքիայում: Կաղզվանի կիրճով անցնելուց հետոնա ձախ
 կողմից ընդունում է Ախուրջանը և մտնում է Արարատյան դաշտը:

Յուլյ ալեք Սրաքսի այն վտակները, վորոնք գտնվում են
 Անդրկովկասում:

Ինչև Կասպից ծովը թափվող գետերը գարնանը վարարում են:
 Անդրկովկասի վեր մասերի համար գետերը կարևոր նշանակու-
 թյուն ունեն:

Բացի վտուղումից Անդրկովկասի բնակիչների համար այդ գետերն
 ել ինչ նշանակություն ունեն:

Ա. Շ. Ս. Ս. Ա. Ն. — Անդրկովկասի համար քարտեզի վրա նշանակե-
 ցեք զլեավոր գետերը և իրենց վտակները:



Յուլյ ալեք Սևանա լիճը:
 Նա վեր հանրապետության մեջ է գտնվում և ինչպիսի նշանավոր:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Անդրկովկասի բնակչութիւնը բազմազան է: Այստեղ ապրում են մոտ 20 տարբեր ազգութիւններ, փորոնց մեջ թվով առաջին տեղը բռնում են վրացիները, Ադրբեջանի թուրքերը և հայերը: Հենց այս յերեք ազգութիւններն էլ կազմել են անկախ հանրապետութիւններ: Մնացած ազգութիւնների մեջ աչքի լին ընկնում ուսները, արխազները, օսերը, զլուրդերը և այլն:

Նորհրդային Միութեան սահմանադրութեամբ բոլոր ազգութիւնները, թե մեծ և թե փոքր, հավասար իրավունքներ ունեն: Ամեն մի ազգութիւն իրավունք ունի մայրենի լեզվով դպրոցներ բանալու, դիրք ու լրագիր հրատարակելու, գիտութիւն տարածելու և այլն: Գյուղերը նորերս միայն ունեցան սեփական տնտեսներ և մայրենի լեզվով դպրոց:

Բնակիչներն Անդրկովկասում հավասարապես չեն տարածված: մի տեղ բնակչութիւնը խիտ է, մի տեղ նոսր: որինակ, Սեզովյան դաշտավայրն ավելի խիտ բնակչութիւն ունի, քան Մերձկասպյան դաշտավայրը:

Միջին հաշվով Անդրկովկասում 1 քառ. կիլոմետր տարածութեան վրա 32 մարդ է ապրում:

Բնակիչների 77% -ն ապրում է գյուղում և պարապում է իերկրագործութեամբ, անասնապահութեամբ, և այլն, իսկ 23% -ն բաղաճներում:


Անդրկովկասում լինչ ազգութիւններ են ապրում:
Դրանցից փոքր են կազմել հանրապետութիւններ և ինքնավար շրջաններ:

Անդրկովկասի վեր մասն է ավելի խիտ բնակված, ինչքան Միջին հաշվով մեկ քառ. կիլոմետրի վրա փոքր մասը է ապրում:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՅԵՎ ՄԵՐՁԱՐԵՎԱԴԱՐՁԱՑԻՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՇՐՋԱՆ Ե

Անդրկովկասի բազմազան կլիման հնարավորութիւն է տալիս մշակելու լոչ միայն հացահատիկներ, այլ և բամբակ, ծխախոտ, բամբի, կենսաֆ, թել, բրինձ, շաքարի ձախնդեղ, կիտ-

րոն, նարինջ և այլն: Մենք պետք է աշխատենք լայն չափերի հասցնել այն մշակութիւնները, փորոնք հում նյութ են



Նկ. 18

տալիս մեր թեթև արդյունաբերութեան զանազան ճյուղերին: որինակ, շաքարի արդյունաբերութեան համար ձախնդեղ է

պետք, տեքստիլ արդյունաբերութեան համար՝ բամբակ, կենաֆրամի, սապոն պատրաստելու համար՝ բամբակի կամ արևածաղկի ձեթ և այլն: Վորովհետև Խորհրդային Միութեան մեջ Անդրկովկասի նման տաք տեղեր քիչ կան, այդ պատճառով մենք պետք է Անդրկովկասում զարգացնենք այն բույսերի մշակութիւնները, վորոնք ուրիշ տեղ դժվար են աճում:

Բամբակ. Տեխնիկական բույսերի մեջ առաջին տեղը բռնում է բամբակը: Այդ է պատճառը, վոր գանազան լերկրներ աշխատում են շատ բամբակ ստանար Բայց վոչ մի լերկիր այնպիսի արագ տեմպով չի զարգացնում բամբակի մշակութիւնն, ինչպես Խորհրդային Միութիւնը:

Անդրկովկասը Խորհրդային Միութեան բամբակագործական շրջաններից մեկն է:

Բամբակի ցանքսը 1929 թ. կազմում էր 129 հազար հեկտար, 1930 թ.—160 հազար, 1931 թ.—268 հազար, 1932 թ. պետք է լինի 360 հազար, իսկ 1937 թ. մոտ 700 հազար հեկտար:

Բամբակի ցանքսի արագ ընդարձակելը բացատրվում է նրանով, վոր բամբակագործական շրջաններում չքավոր և միջակ անտեսութիւնները միանում են իրար հետ և կազմակերպում կոլտնտեսութիւններ: Այս կոլտնտեսութիւնները հողը մշակում են լերկրագործական նորագույն մեքենայներով, պարարտացնում են հանքային պարարտանյութերով և ավելի արդյունք ստանում, քան թէ փոքրիկ գյուղական անտեսութիւնը:

Բամբակի բերքը բարձրացնելու և ցանքսը ընդարձակելու համար մեծ ջանք է թափում Խորհրդային իշխանութիւնը: Նա բամբակագործական շրջաններն է ուղարկում բազմաթիվ տրակտորներ, գյուղատնտեսական գործիքներ, հանքային պարարտանյութեր, կազմակերպում է մեքենա-տրակտորային կայաններ և այլն: Մեքենայացումը և պարարտացումը բարձրացնում է բամբակի բերքատուութիւնը:

Սակայն Խորհրդային Միութեան մեջ ներկայումս այնքան բամբակ չի ստացվում, վոր սեփական տեքստիլ արդյունաբերութեանը բավարարի: այդ պատճառով մենք ուրիշ լերկրներից ամեն տարի մեծ քանակութեամբ բամբակ ենք ներմուծում, վճարելով դրա համար վոսկի: Յեթե մենք ԽՍՀՄ-ի բամբակագործական շրջաններում ընդարձակենք բամբակի ցանքսերը,

այն դեպքում վոչ միայն կծածկենք սեփական կարիքները, այլև բամբակը կարտահանենք ուրիշ լերկրներ: ստացած վոսկով կգնենք մեքենաներ մեր նոր կառուցվող գործարանների համար:

ՊԵՏՔ Ե ԱԶՆՎԵՆՔ ԱՐՏԱՍԱՆՄԱՆԻ ԲԱՄԲԱԿԻՑ ՅԵՎ ՄԵՐ ԲԱՄԲԱԿԻ ԱՎԵԼՑՈՒԿՆ
ԱՐՏԱՆԱՆԵՔ ՈՒՐԻՇ ՅԵՐԿՐՆԵՐ

Տեխսիլային այլ մշակութիւններ. Անդրկովկասի բնական պայմանները հարմար են վոչ միայն բամբակի, այլև ուրիշ տեքստիլային բույսերի համար: Այդ բույսերից նշանավոր են կենաֆը, բամբին, վուշը և այլն: Սրանցից կենաֆը և բամբին նոր մշակութիւններ են:

Պարկեր և կոշտ գործվածքներ պատրաստելու համար Խորհրդային Միութեան մեջ ջուտ են գործածում, վորն արտասանանից է ներմուծվում: Կենաֆը մեր ջուտն է: Ընդարձակելով կենաֆի ցանքսերը, մենք կարող ենք ազատվել արտասանանյան ջուտից: հենց այդ նպատակով էլ Խորհրդային իշխանութիւնը կողմակերպում է նոր սովխոզներ, վորոնք զբաղվելու լին կենաֆի մշակութեամբ:

Յուղատու բույսեր. Դուք կերակրի մեջ լինչ յուղ կը գործածում: Ինչ է նշանակում բուսական և կենդանական յուղ:

Բերք բուսական յուղերի տեսակներ:

Սապոն պատրաստելու համար լինչ յուղ են գործածում:

Անդրկովկասում աճում են և այնպիսի տեխնիկական բույսեր, վորոնցից ստացվում են գանազան յուղեր: որինակ՝ արևածաղկից ստացվում է արևածաղկի յուղ, բամբակի կորիզներից՝ բամբակի յուղ, քունջութից՝ շիրբախտի յուղ կամ շիրբախտի ձեթ և այլն: Քունջութը, արևածաղիկը, կտավատը, սոյան, բամբակենին և այլն յուղատու բույսեր են:

Դրանց մեջ առանձնապես աչքի լի ընկնում սոյան կամ մանջուրական լորին: 100 գրամ սոյալի մեջ գտնվում է մոտ 38 գրամ սպիտակուց և 20 գրամ յուղ: դրա համար էլ նա համարվում է ամենամանրարար նյութերից մեկը: Սոյան ուտում են լեփած կամ բոված: նրանից պատրաստում են ապուր, սուրճ և այլն: Առանձին մեքենաների միջոցով սոյան

ճնշման են լենթարկում և միջի յուզը քաշում, վորից հետո մնում է քուսպը կամ կոպտոնը: վերջինս գործ է ածվում վորպես պարարտանյութ վարելահողերի համար:

Ծխախոսի մեակուրյունը. Անդրկովկասի քարտեղի վրա ցույց տվեք Աբխազիան:

Գտեք Աբխազիայի զլխավոր քաղաքը — Սուխումը:

Ցույց տվեք Յերևան—Թիֆլիս—Բաթում—Սուխում ճանապարհը:

Ամբողջ Խորհրդային Միության մեջ ստացվող ծխախոտի մեկ յերրորդը Անդրկովկասն է տալիս: Անդրկովկասի ծխախոտը փոխադրվում է վոչ միայն ԽՍՀՄ-ի զանազան մասերը, այլև արտասահման:

Ծխախոտը մշակվում է թե վրաստանում, թե Ադրբեյջանում և թե Հայաստանում: Բայց առանձնապես ծխախոտի մեծ բերք տալիս է վրաստանը (Սև ծովի լեզերքը): Ամբողջ Անդրկովկասի ծխախոտագործության կենտրոնն Աբխազիան է. Սուխումի վրայով ամեն տարի ահագին քանակությամբ ծխախոտ է արտահանվում:

Թեյի մեակուրյունը. Ցույց տվեք Անդրկովկասի Սևծովյան լեզերքը: Ցույց տվեք Աջարստանի հանրապետությունը, գտեք Բաթումը և Չակվան:

Յերևանից կարելի է լեռկաթուղով գնալ Չակվա և Բաթում. ցույց տվեք այդ ճանապարհը:

Թեյի թուփն աճում է տաք և խոնավ տեղերում: Այդ պատճառով Խորհրդային Միության մեջ թեյի մշակության համար ամենահարմար շրջանը Սև ծովի լեզերքն է, սկսած թյուրքական սահմանից մինչև Կոդոր գետը (ցույց տվեք): Թեյի մշակութունն առանձնապես զարգացել է Աջարստանում. նշանավոր Չակվան, վորը թեյի արտադրության կենտրոնն է, գտնվում է Աջարստանում:

Խորհրդային Միությունն ամեն տարի ուրիշ լեռկերներից մեծ քանակությամբ թեյ է ներմուծում: Ընդարձակելով սեփական թեյի անկարանները, մենք կարող ենք ազատվել արտասահմանյան թեյից:

Շախարի ճակնդեղ. Խորհրդային Միության մեջ շաքարը ճակնդեղից են ստանում: Շաքարի գործարաններում այդ ճակնդեղից պատրաստում են շաքար:

Անդրկովկասում կան և այնպիսի վայրեր, վորտեղ մեծ հաջողությամբ աճում է շաքարի ճակնդեղը, այդպիսի տեղերից են, որինակ, Շիրակի դաշտը (Խ. Հայաստանում) և Գորու դաշտը (Խ. վրաստանում):

Լենինականում և Գորում ներկայումս կառուցվում են շաքարի գործարաններ, վորոնք ծրագրի համաձայն արդեն այս հնգամյակի վերջում պետք է արտադրեն 127 հազար ցենտներ շաքար:

Այսպիսով Անդրկովկասն առաջին անգամ իր սեփական գործարաններից կստանա շաքար:

Այգեգործությունը յեվ բանջարաբուծություն. Խաղողը ունի պես տեխնիկական բույս է. նա վոչ միայն ուղղակի ուտվում է, այլ և նրանից պատրաստում են գինի, կոնյակ, սպիրտ և այլն:

Անդրկովկասի խաղողը համամիութենական նշանակութուն ունի: Ամեն տարի մեծ քանակությամբ խաղող, գինի, կոնյակ փոխադրվում են Միության զանազան շրջանները:

Ադրբեյջանում հայտնի յե Գանձակի խաղողը, իսկ Հայաստանում՝ Յերևանի խաղողը:

Անդրկովկասը հարմար է վոչ միայն խաղողի, այլև այնպիսի թանգարժեք պտուղների համար, ինչպիսին են մանդարինը, նարինջը և կիտրոնը: Չանազան շրջաններում ել կան այգիներ, վորտեղ ստացվում են խնձոր, տանձ, ընկույզ, գեղձ, ծիրան, կեռաս և այլն:

Մեր սննդի համար կարևոր նշանակութուն ունեն բանջարեղենները—կաղամբը, պամիդորը և այլն:

Հացահատիկների մեակուրյունը

Խոչ հացահատիկներ գիտեք:

Խոչ է նշանակում աշնանացան և գարնանացան:

Նկարագրեցեք ձեր առյուծի վարն ու ցանը, հունձը, կալսելը և այն գործիքներն ու մեքենաները, վոր գործ են ածում անհատ գյուղացին և կոլտնտեսությունը:

Հացը մեր ժողովրդի կարևոր սնունդն է. այդ պատճառով հացահատիկների մշակութունը տարածված է Անդրկովկասում: Հացահատիկներից աչքի յեն ընկնում ցորենը, յեզիպատացորենը և դարին:

Յորենը և շարին տարածված են Յգրքեջանում, իսկ լե-
զիպատացիները՝ Վրաստանում:

Բայց սեփական հացի բերքը Անդրկովկասի ազգաբնակի-
թյան կարիքներին չի բավականանում. այդ պատճառով մենք
ամեն տարի Հյուսիսային Կովկասից ներմուծում ենք այլուր:
Հետևապես Անդրկովկասը Խորհրդային Միության հացի
պահասություն ունեցող շրջաններից մեկն է:

ՊԱՐԱՐՏԱՑՆԵՔ ՎԱՐԵԼԱՅՈՂԵՐԸ, ՇՈՂԸ ՄՇԱԿԵՔ ՄԵՔԵՆԱՆԵՐՈՎ, ՅԱՆԵՔ
ՋՏԱԾ ՍԵՐՄ, ՎՈՐՊԵՍՁԻ ՀԱՅԱՀԱՏԻԿՆԵՐԻ ԲԵՐՔԸ ՄԵԾԱՅՆԵՔ

ՄԹԵՐԱՏՈՒ ԱՆԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Թվեցեք ձեր ուսուցիչի անասունների տեսակները:
Այդ անասունները ինչպես են խնամվում ամառը և ձմեռը:
Ի՞նչ անասնապահական միջոցներ գիտեք:
Համեմատեցեք անհատ գյուղացու անասունները խորհանտեսու-
թյան անասունների հետ:

Անասնապահությունը մեծ նշանակություն ունի մեր լեռ-
կրի համար, վորովհետև նա տալիս է սննդամթերք և գործա-
բանների համար հում նյութ:

Անդրկովկասի բնական պայմանները նպաստավոր են
անասնապահության համար. ընդարձակ լեռնային մարդագե-
տիկները հրաշալի արոտավայրեր են կովի և վոչխարի համար:
Այդ պատճառով անասնապահությունը տարածված է լեռնային
շրջաններում: Անդրկովկասի զանազան տեղերում հիմնվել են
կաթնատնտեսական ֆերմաներ, վորոնք քաղաքի ազգաբնա-
կությանը թարմ կաթ են մատակարարում. կաթից պատրաս-
տում են ընտիր շիկյարական պանիր (Լոտում), չուր և տեղա-
կան պանիր, վորոնք տարածվում են վոչ միայն Անդրկովկա-
սում, այլև Խորհրդ. Միության խոշոր կենտրոններում:

Յերկրի ինդուստրացման և քաղաքային բնակչության
աճման հետ մեծանում է անասնապահական միջոցների պա-
հանջը. այդ պատճառով Խորհրդ. իշխանությունն առանձին ու-
շադրություն է դարձնում անասնապահության զարգացման
վրա:

Վերջերս զարգանալ է սկսել ճագարաբուծությունը: Ճա-
գարը մի փոքրիկ կաթնասուն է, վորը բազմանում է շատ ա-
րագ: Նրա միսը համեղ է, մաղը քնքուշ: Բազմազանով ճա-
գարաբուծությունը, կարելի է շուկա հանել մեծ քանակու-
թյամբ միս:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես տեսանք, Անդրկովկասի բնական պայմանները
նպաստավոր են տեխնիկական և մերձարևադարձային կուլ-
տուրանների համար: Կառավարության ձեռք առած միջոցների
շնորհիվ Անդրկովկասը միջանի տարուց հետո այնքան գյուղա-
տնտեսական հումուր կտա, վոր գա կրավականանա վոչ միայն
Անդրկովկասի այլև ԽՍՀՄ-ի մյուս մասերի գործարաններին:
Անդրկովկասի գյուղատնտեսական գլխավոր հումուրներն
են բամբակը, ծխախոտը, թելը, խաղողը, բամբին, կենաֆը, շա-
քարի ճակնդեղը, խոզի մաղը, աղիքները, կաշին, բուրդը, բո-
ժոժը և այլն:

Այդ հումուրները վերամշակելու համար Խորհրդային իշ-
խանությունը հիմնել է մի շարք նոր գործարաններ, վորոնք ար-
տադրում են լեռկրի կարիքների համար զանազան գործարանա-
յին ապրանքներ: Այսպես սրինակ, Լենինականում և Գանձա-
կում կառուցել է տեքստիլային գործարաններ, Յերևանում և
Գորում՝ կոնսերվի գործարաններ և այլն:

Խաղողից Յերևանում, Թիֆլիսում և այլ տեղերում պատ-
րաստում են կոնյակ և սպիրտ, մրգից՝ կոնսերվներ, կաշվից՝
կոշիկեղեն, բամբակի կորիզից՝ ձեթ և այլն: Բայց այդ գործա-
րանները մեր կարիքները չեն ծածկում, այդ պատճառով Խոր-
հրդային իշխանությունը ծրագրել է այս հնգամյակի ըն-
թացքում ընդարձակել չեղած գործարանները և կառուցել նո-
թար. սրինակ՝ Յերևանում կառուցվում է կաշվի գործարան,
Նոր-Բայազետում՝ ոսյայի գործարան, Թիֆլիսում՝ կոշիկեղենի
գործարան, Բաթումում՝ թելի նոր գործարան, ընդարձակվում են
Լենինականի և Գանձակի տեքստիլային կոմբինատները և այլն:

Գյուղատնտեսության ապրանքայնության բարձրանալու
հետ կբարձրանա և արդյունաբերությունը:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՆՔԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անդրկովկասի քարտեզի վրա ցույց տվեք Բազուն, Բաթումը: Գտեք Յերևան — Լենինական — Ղարաքիլիսա — Թիֆլիս — Բազու յերկաթուղին:

Բազվից նավթն ի՞նչ ճանապարհով է հասնում Յերևան:

Անդրկովկասը հարուստ է նավթով, մանգանով, պղնձով և այլ հանքերով: Իրանց մեջ առաջին տեղը բռնում է Լավթը,



Նկ. 19

Վորը կարևոր նշանակություն ունի վոչ միայն Խորհրդային Միության համար, այլև շատ յերկրների համար:

Նավթ. Բազուն նավթի արդյունաբերության համաշխարհային կենտրոններից մեկն է. նրա շրջակայքում փորված են բազմաթիվ նավթահորեր, վորոնցից մեծ քանակությամբ նավթ է ստացվում: Հում նավթը փոխադրում են գործարան և ախտեղ թորման միջոցով նրանից ստանում են բենզին, լուսավորության նավթ, զանազան յուղեր՝ մեքենաներ յուղելու համար, մագուլթ և այլն:

Նավթի մի մասը կասպից ծովով և Վոլգա գետով փոխադրում են ԽՍՀՄ-ի զանազան շրջանները, իսկ մյուս մասը նավթատար խողովակով մղում են Բաթում, ախտեղից էլ նավթով՝ արատասիյան:

Մեր նավթը գնում են Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Յապոնիան, Իտալիան, Իսպանիան և այլն: Բավական է հիշել այն, վոր Իսպանիան և Իտալիան տարվա ընթացքում գործածվող նավթի համարյա կեսը մեզնից են ստանում:

Բազվի նավթի արդյունաբերությունը զարգանում է ուժեղ թափով: 1927—28 թ. ստացվել է 7,5 միլիոն տոնն նավթ, 1930 թ. 11 միլ. տոնն, իսկ 1932 թ. ստացվելու լի 15,8 միլիոն տոնն: Նավթի հնգամյակն ավարտվեց 2½ տարում: ծրագրված է յերկրորդ հնգամյակի վերջում ստանալ 50 միլիոն տոնն նավթ:

Նավթով հարուստ է և Վրաստանը (Շիրաք): 1937 թ. Շիրաքը կտա մոտ 4 միլիոն տոնն նավթ:

Մանգան. Անդրկովկասի յերկրորդ կարևոր հանքը մանգանն է, վորը մեծ քանակությամբ ստացվում է Զիաթուրում (Վրաստանում, Գուլիստից արևելք): Մանգանը խառնում են պողպատի հետ և ստանում ամուր պողպատ:

Մանգանը մեր արտահանության գլխավոր ապրանքներից մեկն է: Նա արտահանվում է Սև ծովի Փոթի նավահանգստով:



Նկ. 20

Անդրկովկասի քարտեզի վրա գտեք Զիաթուրին: Յուլյց տվեք այն ճանապարհը, վորով մանգանը ձիաթուրից փոխադրվում է Փոթի: Յերևանից ի՞նչ ճանապարհով կարելի լի Զիաթուրի գնալ:

Պղինձ. Պղինձն Անդրկովկասի գլխավոր լեռնային հարբս-
տություններից մեկն է. նա գտնվում է Ալլանիերդում, Ղա-
փանում (Հայաստան) և Գետարեկում (Ադրբեջան):

1930 թ. ստացվել է 2900 տոնն սև պղինձ, 1931 թ. — 3200
տոնն: Ծրագրված է ստանալ 1932 թ.—6000 տոնն, իսկ 1937
թվին արդեն մոտ 50,000 տոնն:

Պղինձի արտադրանքը մեծացնելու համար ներկայումս մեծ
աշխատանք է թափվում: Վերակառուցվում է հանքերի սար-
քավորումը, կառուցվում է պղինձի ձուլարան, դեպի Ղաթարի
պղինձահանքերն անցկացնում են նոր լեռկաթուղի և այլն:

Քարածուխ. Քարածուխը մարդու տնտեսութան համար
մեծ նշանակություն ունի: Նրանով տաքացնում են բնակա-
ջանները, շոգեգնացքների և շոգենավերի կաթսաները և այլն:
Քարածխի միջոցով հայրենի լեռնային լեռնային հանքերը և ստանում
թուղ, պողպատ: Բացի այդ՝ քարածուխը գործ է ածվում լու-
սավորութան գազ, մուր, տպագրական ներկի համար, նաշա-
դիր և այլն:

Հինում են տարբեր վորակի քարածուխներ: Դրանցից
լավը նա լե, վոր տալիս է կոքս: Կոքսը գործ է ածվում թուղ
հարելու համար:

Քարածխի գլխավոր հանքատեղերը գտնվում են Տկվիբու
լիում (Քութայիից 44 կիլոմետր հեռու) և Տղվարչելիում
(Աբխազիայում, Սուխումից փոքր ինչ դեպի արևմուտք):

Տկվիբուլու քարածուխը ներկայումս շահագործվում է, բայց
ստացված քարածուխը բարձր վորակի չունի, (կոքս չի տալիս)
և այդ պատճառով նա գործ է ածվում միայն վորպես վառելիք
Ավելի կարևոր նշանակություն ունի Տղվարչելու քարածուխը
վորը կոքսացող է և կարող է գործածվել թուղ հարելու հա-
մար: Տղվարչելու քարածուխը զեռ չի շահագործվում, բայց շնոր-
հիվ Խորհրդային իշխանութան ջանքերի, այդ հանքը կսկսի
մշակվել 32 թվականից սկսած: Մինչ այդ շինվում են անխաճե-
րը, կառուցվում է հատուկ լեռկաթուղի՝ քարածուխը ծովափ հաս-
ցնելու համար, հետադառնվում է քարածուխի պաշարը և այլն: Տղ-
վարչելու քարածուխն ի միջի այլոց պետք է փոխադրվի Գան-
ձակ, վորտեղ կառուցվում է մետալուրգիական գործարան:

Քարածուխն ինչու համար է գործածվում: Ինչու Տղվարչելու քա-
րածուխն ավելի արժեքավոր է Տղվարչելին վորակի և գտնվում: Տղվար-
չելու քարածուխն ինչ ձանապարհով կարելի չէ փոխադրել Գանձակ

Յերկար. — Յերկարը մարդու համար շատ կարևոր է: Յեր-
կարից շինում են ուղիներ, շոգեգնացքներ, հսկայական
կամուրջներ, նավեր, գուլթաններ և տնային գանազան
գործիքներ ու պարագաներ — դանակ, ասեղ, մկրատ և այլն:
Այժմ լեռկաթից նույն իսկ ամբողջ տներ են շինում: Բայց լեռ-
կաթը բնութան մեջ մաքուր չի լինում: Նա գտնվում է հան-
քերի մեջ: Այդ հանքերը հայրենի են և ստանում թուղ, հետո
առանձին վառարաններում թուղից պատրաստում են պողպատ
կամ լեռկաթ:

Անդրկովկասի գանազան շրջաններում գտնված է լեռկա-
թահանք. բայց այդ հանքերի մեջ առանձնապես աչքի չէ ընկ-
նում Դաշքեսանի լեռկաթահանքը: Դաշքեսանը գտնվում է
Ադրբեջանում, Գանձակից վոչ հեռու: Նրա լեռկաթահանքը
բարձր վորակ ունի և վորոշված է շահագործել: Գանձակում
կառուցվում է խոշոր մետալուրգիական գործարան, վորը կաշ-
խատի Դաշքեսանի լեռկաթով և Տղվարչելու քարածուխով:
Դաշքեսանի հանքը Գանձակ տեղափոխելու համար կառուցվում
է հատուկ լեռկաթուղի:

Այդ գործարանը կպատրաստի խողովակներ, Բազվի նավ-
թարդյունաբերութան կարիքների համար, ուղիներ, նոր կառուց-
վող լեռկաթուղիների համար և այլն: Գանձակի գործարանը
կարող է մետաղե իրեր տալ վոչ միայն Անդրկովկասին, այլև
Պարսիաստանին ու Թյուրքիային:

Շինարարական նյութեր. Անդրկովկասը հարուստ է նաև
շինարարական նյութերով, վորոնց մեջ աչքի չեն ընկնում
սուֆը և պեմզան: Իրանց մասին արդեն խոսել ենք:

ՀԱՆՔԵՐԻ ՅԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԵՐԱՄՇՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես տեսանք, Անդրկովկասը հարուստ է հանքերով
և կարևոր լեռնային տեսակներով, վորոնք գործարաններում
վերամշակվում են և ստացվում են մի շարք անհրաժեշտ նյու-
թեր, որինակ՝ նավթի թորման գործարաններում ստացվում են
բենզին, յուղեր և այլն: Պղինձի ձուլարանում հանքից կարմիր
պղինձ է ստացվում, կավա-գործարաններում կավից ամաններ
են շինում և այլն:

Սակայն ցարական իշխանութունը չէր ցանկանում, վոր

արդյունաբերութիւնն Անդրկովկասում գարգանա. նա վախե-
նում էր, վոր արդյունաբերութիւնն զարգացման հետ կուժեղա-
նա և բանվորութիւնը, հեղափոխական շարժումը: Անդրկովասը
ցարիզմի գաղութն էր:

Սորհրդալին իշխանութիւնն ազատեց Անդրկովկասը և
նրան հնարավորութիւն տվեց զարգանալու թե սնտեսապես
և թե կուլտուրապես:

Այս հնգամյակի ընթացքում Սորհրդ. իշխանութիւնն շան-
քերով կառուցվեցին մի շարք խոշոր գործարաններ, փորոնցից
աչքի լին ընկնում Յերևանի կարբիտի գործարանը, Դավալի
և Կասպիի ցեմենտի գործարանները, Յերևանի և Գանձակի
մեխանիկական գործարանները և այլն:

Ներկայումս կառուցվում են՝ ցիանամիդի գործարան (Ղա-
րաքիլիսա), ծծմբաթթվի և պղնձարջասպի գործարաններ (Ալլահ-
վերդում), նոր մեխանիկական գործարան (Թիֆլիսում), լեռ-
կաթամանգանի գործարան (Չիաթուրում), մետալուրգիական
գործարան (Գանձակում) և այլն:

Այս նոր գործարանների շնորհիվ մի շարք հետամնաց գյու-
ղեր և քաղաքներ դառնում են խոշոր արդյունաբերական կենտ-
րոններ:

ԵԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱ

Ելեկտրական եներգիան շատ մեծ դեր է կատարում յեր-
կրի ինդուստրացման գործում: Ելեկտրական հոսանքով վոչ
միայն լուսավորում ենք սեներն ու փողոցները, այլև շարժում
գործարանի շարժիչները և կատարում զանազան աշխատանք-
ներ: Ելեկտրական հոսանքի միջոցով ստացվում է ալյումին
կոչված մետաղը, կարբիդը. մաքրվում է սև պղինձը: Ելեկ-
տրական հոսանքով շարժվում են գնացքները, շրհան մեքենա-
ները և այլն:

Այս բոլորից յերևում է, թե ինչպես մեծ նշանակութիւն
ունի ելեկտրիֆիկացիան մեր սնտեսութիւնն զարգացման հա-
մար: Այդ է պատճառը, վոր խորհրդայնացումից հետո իշխա-
նութիւնը վոչ մի շանք ու զբամական միջոց չի խնայում յեր-
կրն ելեկտրիֆիկացիայի յենթարկելու համար:

Ելեկտրական շինարարութիւնն սկսվում է 1923 թ.-ից և
այսոր հսկայական չափերի յե հասնում:

Ներկայումս գործում են հետևյալ ելեկտրակայանները՝
Խ. Վրաստանում — Չագես (Թիֆլիսի մոտ) և Աբգես (Աբաշ գետի
վրա):

Խ. Հայաստանում — Յերևանի, Լենինականի և Իջևանի ելեկ-
տրակայանները:

Խ. Ադրբեջանում — Չուրնաբադի, Նուխու և Բագվի ելեկ-
տրակայանները:

1932 թ. պատրաստ կլինեն Բիոնգեսը (Քութալիսի մոտ)
և Չորագեսը, իսկ 1933 թ. — Քանաքեռգեսը և Աջարիս Ծղալիի
ելեկտրակայանը (Աջարստանում):

Այս տարի սկսվել է նոր խոշոր կայանների կառուցումը՝
Տղվարչելիի (Աբխազիայում), Գյումուշի (Չանգվի վրա), Խրա-
մի (Վրաստանում) և այլն:

Ապագայում այդ բոլոր ելեկտրակայանները պետք է միա-
նան իրար հետ և ոգնութիւն գան իրար. որինակ Խ. Հայաս-
տանի խոշոր ելեկտրակայանները (Գյումուշգես, Քանաքեռգես)
տանի խոշոր ելեկտրակայանները (Սաբրեշա-
եներգիա կտան Գանձակի արդյունաբերութիւնը (Ադրբեջա-
նում):

Թե ինչպիսի հսկայական չափերի յե հասնելու ելեկտրա-
կան կայանների կարողութիւնը միջանի տարուց հետո, յերևում
է հետևյալ թվերից:

	1933 թ.	1938 թ.
Վրաստան	67.000 կիլովատ	565,000 կիլովատ
Ադրբեջան	197.000 »	680,000 »
Հայաստան	30.000 »	320,000 »
ընդամենը	294.000	1,565,000

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Թիֆլիս. — Գտնվում է Կուր գետի վրա. յերկաթուղով
միանում է Բագվի, Բաթումի, Յերևանի և Կախեթի շրջանի
հետ: Խոշոր արդյունաբերական և կուլտուրական կենտրոն է:
Անդրկովկասի ֆեդերացիայի, ինչպես և Վրաստանի ՍՍՀ մայ-
րաքաղաքն է:

Բագու.— Գանձում և Կապից ծովի ափին: Աղբյուրների Սոճ մայրաքաղաքն է: Նավթի արդյունաբերության կենտրոն: Բարձրագույն դպրոցներ, բազմաթիվ գործարաններ: Այստեղից սկսվում են ծովային ճանապարհներ դեպի Կրասնովոդսկ (Թուրքմենստան), Աստրախան (Վոլգայի գետաբերանում) և Պարսկաստան: Յերկաթուղիներով միանում է Թիֆլիսի և Բաթումի հետ, Հյուսիսային Կովկասի հետ: Բազմից դեպի Բաթում անցնում է խոշոր նավթատար խողովակ, վորով նավթը Բազմից Բաթում է մղվում:

Յերեվան.— Հայաստանի Սոճ մայրաքաղաքն է. արդյունաբերական և կուլտուրական կենտրոն: Յերկաթուղով միանում է Պարսկաստանի և Թիֆլիսի հետ:

Լենինական.— Տեքստիլ Փաբրիկա, շաքարի գործարան (կառուցվում է) և այլն: Յերկաթուղով միանում է Թյուրքիայի (Կարսի), Յերևանի և Թիֆլիսի հետ:

Վարախիսա.— Արդյունաբերական կենտրոն:

Սարդարաբադ.— Բամբակի մշակութային կենտրոն:

Նոր-Բայազետ, Իջևան, Ալլահվերդի, Ղաթար, Մեղրի, Գորիս, և այլն:

Բաքում.— Աշարստանի մայրաքաղաքն է. խոշոր նավահանգիստ. արտաքին առևտուր:

Սուխում.— Ծխախոտի մշակութային կենտրոն. գանձում է Սև ծովի ափին. Աբխազիայի մայրաքաղաքն է:

Վրաստանի մյուս քաղաքներից հիշենք Գուրայիսը, Գորին, Թելավը, Ախալցխան յե՛վ այլն:

Նախիջևան.— Նախիջևանի Սոճ կենտրոնը:

Աղբյուրների մյուս քաղաքներից ցույց տվեք՝ Գանձակը, Սաեփանակերտը, Սալյանը, Նուխին, Գյուկչալը և այլն:

Անդրկովկասի համը քարտեզի վրա գրեցեք գլխավոր քաղաքների անունները:

Նույն քարտեզի վրա հետևյալ յերկաթուղիների վրայով կապույտ գիծ քաշեցեք.

1. Բագու—Թիֆլիս—Բաթում.
2. Թիֆլիս—Յերևան—Ղուլֆա.
3. Ղուլֆա—Բագու (դեռ բոլորովին պատրաստ չէ).
4. Բագու—Իերբեհդ.
5. Թիֆլիս—Սուխում—Գաբրի (կառուցվում է):

Դ. ԽՈՒՄԲ

1. ՅԵՐԿՐԱԳՈՒՆԴ

Ա. Շ խ ա ս ա ն Բ.— Վերցրեք վարևե գնդակ կամ կավից ինքներդ պատրաստեցեք: Դիտեցեք այդ գնդակը և տեսե՛ք նրա յերեսը ուսուցիչի և, թե տափակ: Ամբողջ յերեսը հավասարապես է ուռած, թե տեղ-տեղ միայն:

Գնդակի վրա մի կետ նշանակեցե՛ք և տպա այդ կետից դեպի աջ մի գիծ քաշեցե՛ք, բայց դեպի վեր կամ դեպի ցած չծռեք: Ձեր քաշած գիծը վերջն ուր հասավ:

Թե՛լի ոգնուլթյամը գնդակի շրջագիծը չափեցե՛ք և ստացած մեծությունը նշանակեցե՛ք:

Գնդակի շրջագիծն է սանտիմետր: Նույն յեղանակով շրջագիծը չափեցե՛ք միջանի անդամ և տեսե՛ք, թե ամեն անգամ ինչ մեծություն է ստացվում:

Գուլպայի մի ճաղ կամ վորևե բարակ ձողիկ գնդակի միջով այնպես անցկացրե՛ք, վոր ճաղը գնդակի կենտրոնով անցնի: Դաե՛ք ձեր գնդի տրամագիծը և շառավիղը:

Գնդակի տրամագիծն է սանտիմետր:


Գնդակի շառավիղն է սանտիմետր:

ՅԵՐԿՐԻ ՁԵՎԸ

Հին ժամանակ մարդիկ յերկրի ձևի մասին ճիշտ հասկացողություն չուներին: Այն ժամանակ վոչ միայն ազեա մարդիկ փարակ տարածություն է՝ շրջապատված անսահման ծովով: Շատ ժամանակ անցավ, մինչև վոր մարդիկ վերջապես հասկացան, վոր յերկիրը գնդի ձև ունի:

Վոր յերկիրը գնդաձև է, այդ յերևում է հետևյալ փաստերից:

Յերբ ծովափին կանգնած նայում ենք հեռացող նավին, տեսնում ենք, վոր հեռանալիս հորիզոնի տակ ծածկվում է նախ՝ նավի ստորին մասը, ապա միջինը և վերջը՝ վերին մասը: Ընդհակառակը, յերբ նավը մոտենում է, առաջ յերևում է նրա վերին մասը և ապա՝ ստորինը: Այս յերևույթը ցույց է տալիս, վոր մեր և նավի միջև գտնվող ջրի յերեսը տափակ չէ, այլ ուռուցիկ, կորնթարդ: Յեթե ջրի յերեսը տափակ լիներ, ամբողջ նավը պետք է միանգամից ծածկվեր, միանգամից էլ յերևար: Նույնպիսի մի յերևույթ նկատում ենք և ցամաքի վրա: Խորհրդալին Միուլթյան յեվրոպական մասը, ինչպես հետո կատեսնենք, համարյա ամբողջապես մի ընդարձակ հարթութուն է: Յերբ այդ հարթության վրայով գնալիս մոտենում ենք վորևե գյուղի, տեսնում ենք, վոր դեռ յերևում են գյուղի ամենաբարձր առարկաները (ծառերի գագաթները), ապա աները և այլ ցածր տեղերը:




Նկ. 21. Ծովափից հեռացող նավը հեռահեռ ծածկվում է հորիզոնի տակ:

Ուրեմն յերկիրը ամենահարթ տեղերում անգամ տափաբակ չէ: Թե ծովը և թե ցամաքը, վոր կողմն էլ նայելու լինենք, մեզ ուռուցիկ են յերևում:

Յեթե յերկիրն ամեն կողմից ուռուցիկ է, նշանակում է նա գնդաձև է, ինչպես ձեր գնդակը, ձմերուկը: Այդ բանում մարդիկ վերջնականապես համոզվեցին այն ժամանակ, յերբ միջանի հալանի ճանապարհորդներ կարողացան պատվել յերկրի շուրջը: Առաջին անգամ այդպիսի շուրջերկրյա ճանապարհորդութուն կատարեց Մագելանը մեզնից մոտ 400 տարի առաջ: Եւրոպացիները ճանապարհորդութունների ժամանակ մարդիկ իմացան, վոր յերկրի շրջագիծն ամեն ուղղությամբ լավասար է: Յեթե յերկիրը գնդաձև չլիներ, նրա շրջագիծն է ամեն ուղղությամբ հավասար չեր լինի:

Մեր յերկիրը շատ մեծ գունդ է. նրա արամագիծը հավասար է մոտ 12700 կիլոմետրի, իսկ շրջագիծը՝ 40000 կիլոմետրի: Մինչև յերկրագնդի կենտրոնը հաշվում են մոտ 6300 կիլոմետր:



Նկ. 22. Մրջյունները պատվում են գնդակի շուրջը՝ Նրանցից մեկը դեռ նոր է գուրս յեկել A կետից:

Յերկրագունդը վոչ մի բանի վրա ամրացած չէ և ամեն կողմից շրջապատված է ոդով: Ուր էլ գնալու լինենք, մեր գլխավերևը յերկինքը կգտնվի, իսկ վտաքերի տակ՝ գետինը: Յերկրագնդի հակառակ կողմերում գտնվող մարդիկ իրար դարձած են լինում վտաքերով և շրջապատող տարածության մեջ չեն ընկնում, վորովհետև յերկիրը նրանց գեսլի ինքն է քաշում:

Արևը ծագելիս ճառագայթները լուսավորում են նախ բարձր սարի գագաթը և ապա ցածր տեղերը. ինչո՞ւ:

Բարձր սարի գագաթից ավելի մեծ տարածութուն է յերևում. ինչո՞ւ:

Նարնջի վրա կան ցցվածքներ ու փոսիկներ, բայց այդ աննշան խորրուբորրութունները նրա գնդաձևությանը չեն խանգարում: Յերկրի վրա կան լեռներ, ձորեր, հովիտներ. հապա ինչո՞ւ յերկիրը գնդաձև ենք համարում:

Գլորուս.— Յերկրագունդը լավ պատկերացնելու համար մարդիկ խավաքարտից կամ գաճից պատրաստում են մի գունդ, ցավորի վրա զանազան նշաններով նշանակում են ծովերը, ցամաքները, գետերը, քաղաքները և այլն. այդպիսի գունդը կոչվում է գլորուս: Գլորուսի միջով անցնում է մի ձող, վորի շուրջը գլորուսը հեշտությամբ կարող է պտտվել: Այդ ձողը կոչվում է առանցի:

Գլորուսի այն յերկու կետերը, վորտեղ առանցքի ծայրերը գուրս են գալիս, կոչվում են բեվեռներ. վերևինը՝ հյուսիսային, իսկ ներքևինը՝ հարավային բեվեռ: Գլորուսի շուրջը, բևեռներից հավասարապես հեռու անցնում է մի շրջագիծ, վորը կոչվում է հասարակած: Հասարակածով գլորուսը բաժանվում է յերկու կիսագնդերի՝ հյուսիսային և հարավային:

Հյուսիսային բևեռը մի շարք գծերով միացած է հարավային բևեռի հետ: Այդ գծերը կոչվում են միջորեյականներ: Ամեն մի միջորեյականով յերկրագունդը կարելի յե բաժանել յերկու կիսագնդերի, բայց դրանցից մեկը, վոր անցնում է Անգլիայի Գրինիչ (Լոնդոնի մոտ) քաղաքի վրայով, ընդունված է վորպես գլխավոր միջորեյական, Գլխավոր միջորեյականով յերկրագունդը բաժանվում է յերկու կիսագնդերի՝ արեվմսյան և արեվելյան: Արևելյան կիսագունդը գտնվում է գլխավոր միջորեյականի աջ կողմը, իսկ արևմտյան կիսագունդը ձախ կողմը:



Նկ. 23 Գլոբուս


Յերկրագունդն էլ գլոբուսի նման ունի իբր առանցքը, բևեռները, միջորեյականներն ու հասարակածը, բայց դրանք յերկրագնդի վրա նշանակված չեն, մենք նրանց յերևակայում ենք միայն: Մենք մինչև հիմա ընդունում էլինք, վոր յերկրագունդը միանգամայն կլոր է: Սակայն հետազոտությունները ցույց տվին, վոր նա բևեռների կողմից փոքր ինչ սեղմված է: Հասարակածից մինչև կենտրոնը 6377 կիլոմետր, իսկ բևեռից մինչև կենտրոնը՝ 6356 կիլոմետր: Հետևապես հասարակածային շառավիղը 21 կիլոմետրով յերկար է բևեռային շառավիղից:

Գլոբուսի վրա ցույց տվեք հյուսիսային և հարավային բևեռները, հասարակածը և միջորեյականները:
Ա ռ ի ա թ ա ն է. — Գնդակի միջով ճաղը կրկին անցկացրեք: Գրնդակն այնպես բռնեցեք, վոր ճաղի մի ծայրն ուղղված լինի դեպի վեր, իսկ մյուսը՝ դեպի ցած: Այդ ճաղը կլիսի ձեր գնդակի առանցքը:

Գնդակի այն տեղերը, վորտեղ ճաղը դուրս է գալիս, ընդունեցեք վորպես բևեռներ:

Նշանակեցեք հյուսիսային և հարավային բևեռները:
Գծեցեք մի շրջագիծ, վոր համապատասխանի հասարակածին:
Գծեցեք մի միջորեյական:
Յնթե հասարակածով կամ միջորեյականով ձեր գունդը կիսեք, ի՞նչ կիսագնդեր կստանաք:

Կիսագնդերի քարտեզ. — Գլոբուսի ողնությամբ մենք կարող ենք իմանալ, թե յերկրագնդի վրա ի՞նչ ցամաքներ, ծովեր, գետեր, քաղաքներ կան: Բայց գլոբուսին նայելիս մենք միայն նրա մի յերեսն ենք տեսնում: Վորպեսզի գլոբուսի ամբողջ յերեսը մի անգամից տեսնենք և իմանանք, թե բոլոր ցամաքներն ու ծովերն ի՞նչպես են դասավորված, լավ կլիներ, վոր գլոբուսը գլխավոր միջորեյականով կիսելինք և հետո արևմտյան կիսագունդը պատին շոկ կպցնելինք, իսկ արևելյանը՝ շոկ: Այս գեպըում մենք գլոբուսի ամբողջ յերեսը միանգամից կտեսնելինք:




Նկ. 24. Արևմտյան կիսագունդ:

Արևելյան կիսագունդ:

Ինչ վոր տեսնում ենք այդ կիսագնդերի վրա, մենք կարող ենք գծել և թղթի վրա: Այսպես կողք-կողքի կնկարենք յերկու շրջան, ձախ շրջանի տակ կզրկենք «արևմտյան կիսագունդը», աջ շրջանի տակ՝ «արևելյան կիսագունդը»: Հետո այս

ըրջանների մեջ կգծենք ցամաքներն ու ծովերն այնպես, ինչպես նրանք դասավորված են գլոբուսի վրա: Այս յեղանակով կստանանք «կիսագնդերի քարտեզ»: Կիսագնդերի քարտեզը գործածութեան համար ավելի հարմար է, քան գլոբուսը:

Կիսագնդերի քարտեզին նայելիս, դուք պետք է նկատի ունենաք, Վոր յերկրի մակերեւութը հարթ չէ, ինչպես այդ ցույց է ցալիս քարտեզը, այլ կորնթարդ, ուռուցիկ: Բացի այդ՝ քարտեզը լեզերք ունի, իսկ յերկրի մակերեւութը չունի: Նայեցեք գլոբուսին, դուք նրա վրա լեզերք չեք գտնի: այդպես է և յերկրագնդի մակերեւութը:



Նկ. 25. Գլոբուսը՝ ասարակածով բաժանված և հյուսիսային և հարավային կիսագնդերի:

Կիսագնդերի քարտեզի վրա ցույց տվեք արևելյան և արևմտյան կիսագնդերը:

Ցույց տվեք գլխավոր միջուրեցականը, արևտեղ, վորտեղ գլխ. միջուրեցականը կտրում է հասարակածը, նշանակված է 0:

Գտեք հասարակածը, հյուսիսային և հարավային բևեռները:

Ի՞նչպես են կոչվում այն գծերը, վորոնք միացնում են բևեռներն իրար հետ: Ցույց տվեք:

Աճխարհամասեր. — Յեթե ուշադրութեամբ դիտեք գլոբուսը կամ կիսագնդերի քարտեզը, դուք կտեսնեք, վոր յերկրագնդի մեծ մասը ծածկված է չորով: Յերկրագնդի ամբողջ մակերեւութը հաշվում են 510 միլիոն քառ. կիլոմետր, վորից չուրը բռնում է 361 միլիոն քառ. կիլոմետր, իսկ ցամաքը՝ 149 միլիոն քառ. կիլոմետր, այսինքն չուրը ցամաքից մոտ $2\frac{1}{2}$ անգամ ավելի մեծ տեղ է բռնում:

Ամբողջ ցամաքը բաղկացած է հինգ աշխարհամասերից: Այդ աշխարհամասերն են՝ Ասիա, Յեվրոպա, Ամերիկա, Աճրիկա և Ավստրալիա: Այժմ այդ հինգ աշխարհամասերին ավելանում և վեցերորդը, վոր կոչվում է Անտարկտիդա:

Ասիան, Յեվրոպան և Աճրիկան կաթած են իրար և միասին վերցրած կոչվում են արեւելյան մայր ցամաք կամ արեւարհ: Ամերիկան կոչվում է արեւմտյան մայր ցամաք կամ արեւարհ, իսկ Ավստրալիան՝ Հարավային արեւարհամաս: Խորհրդային Միութիւնը բռնում է Յեվրոպայի կեսը և Ասիայի մեկ յերրորդը: Անդրկովկասը գտնվում է Ասիայում:

Աճխարհամասերի մեծությունը (հաշված յեվ կողմերը)

Ասիա	44,2 միլ. քառ. կիլոմետր
Աճրիկա	29,8 » » »
Ամերիկա	42,2 » » »
Յեվրոպա	9,9 » » »
Ավստրալիա	8,9 » » »
Անտարկտիդա	14,0 » » »
<hr/>	
	149 միլ. քառ. կիլոմետր

Ամբողջ ցամաքը

Աշխարհամասերից ամենամեծը վորն է
 Աշխարհամասերից ամենավոքը վորն է
 Ցույց տվեք ամեն մի աշխարհամասն առանձին (Աշխարհ. աստիճան, կիսագնդերի քարտեզը:
 Ասիան Յեվրոպայից բաժանվում է Ուրալյան լեռներով, Ուրալ ջուրըցի և Կասպից ծովով, Կուրա-Մանիչյան ցածրութեամբ, Կոստանդնուպոլիսի և Իսթանբուլի նեղուցներով, ցույց տվեք:
 Աճրիկան Յեվրոպայից բաժանվում է Միջերկրական ծովով, իսկ Ասիայից՝ Սուեզի պարանոցով և Կարմիր ծովով, ցույց տվեք:
 Գտեք Անտարկտիդան: Նա վորտեղ է գտնվում:
 Գտեք Յերիանի տեղը: Խ. Հայաստանը վոր աշխարհամասում է գտնվում:

Ա. խառնակ. — Կիսագնդերի քարտեզի վրա տարբեր գույներով ներկեցեք աշխարհամասերը և յուրաքանչյուրի վրա գրեցեք իր անունը Ձմոռանաք ներկել և կղզիները:

Ովկիանոսներ. — Յերկրագնդի ընդարձակ շրջերն ել ցամաքի նման բաժանվում են միջանի շատ մեծ մասերի, վորոնք կոչվում են ովկիանոսներ: Տարբերում ենք՝ Մեծ կամ խողաղ ովկիանոս, Ասլանսյան ովկիանոս և Հնդկական ովկիանոս:

Ովկիանոսների միջին խորութիւնը հաշվում են մաս 3¹/₂ կիլոմետր: Ամենախոր ովկիանոսը Խաղաղ ովկիանոսն է, վորտեղ գտել են մաս 10 կիլոմետր խորութիւն:

Ովկիանոսների մեծութիւնը

Խաղաղ ովկիանոս	180 միլիոն քառ. կիլոմետր
Ատլանտիան ովկիանոս	106 » » »
Հնդկական ովկիանոս	75 » » »

Բոլոր ովկիանոսները 361 միլիոն քառ. կիլոմետր

Կիսագնդերի քարտեզի վրա ցույց տվեք ովկիանոսները: Ատլանտիան ովկիանոսը Յեվրոպայի վեր կողմն է գտնվում: Խաղաղ ովկիանոսը կամ Հնդկական ովկիանոսը Ասիայի վեր կողմն է գտնվում: Հնդկական ովկիանոսը վեր աշխարհամասի տփերն է վողջում: Հյուս. Բենուային ծովը վեր ովկիանոսի մասն է կազմում: Ովկիանոսներից ամենամեծը վերն է: Աշխատանք.—Կիսագնդերի համը քարտեզի վրա ովկիանոսները ներկայեք կապույտ գույնով և ապա նշանակեցեք ովկիանոսների տնունները (Աշխարհ. տետր, աշխ. 38): Գծեցեք աշխարհամասերի և ովկիանոսների համեմատական մեծութիւնը (Աշխարհ. տետր, աշխ. 39):

Ովկիանոսի յեվ ցամաքի մասերը.— Յամաքի յեղերքը սովորաբար կտրոված է լինում: Տեղ-տեղ ցամաքը մտնում է ծովի մեջ և կազմում բերակղզի, տեղ-տեղ ել շուրն է մըանում ցամաքի մեջ և կազմում ծովեր կամ ծոցեր: Զրի այն նեղ շերտը, վոր յերկու շրային մեծ տարածութիւններ միացնում է իրար հետ, կոչվում է նեղուց: Իսկ ցամաքի այն նեղ շերտը, վոր յերկու ցամաքներ միացնում է իրար, կոչվում է պարանոց: Ծովի մեջ ընկած փոքր ցամաքները կոչվում են կղզիներ:

- Յեվրոպայի քարտեզի վրա ցույց տվեք:
1. Սկանդինավիան, Պիրինեյան, Ապենինյան և Բալխանյան թերակղզիները:
 2. Սև, Միջերկրական, Կլուսիսային, Բալտիկ, Սպիտակ և Հյուս. Բենու. ծովերը:
 3. Կոստանդնուպոլիս, Դարդանիլի, Զիրալուաքի, Լամանդի և Զուռնի նեղուցները:

4. Իսլանդիա, Մեծ Բրիտանիա, Իրլանդիա և Սիցիլիա կղզիները: Միջերկրական ծովը վեր ովկիանոսի մասն է: Հյուսիս. Բենուային ծովը վեր ովկիանոսի մասն է: Յուլց տվեք Անլիզիկասի Գլխավոր նավահանգիստը՝ Բաթումը: Նա վեր ծովի ափին է գտնվում: Գտեք Բալտիկ ծովը. նրա արևելյան ափին գտնվում է Խորհրդային Միութիւնի կարևոր նավահանգիստներից մեկը՝ Լենինգրադը: Բաթումից Լենինգրադ գնալու համար շոգենավն ի՞նչ նեղուցներով ու ծովերով պետք է անցնի: Մասով ցույց տվեք այդ ճանապարհը:

Ասիայի քարտեզի վրա գտեք՝

1. Փոքր Ասիա, Արաբիա, Հնդկաստան, Հնդկաստանի և Կամբոջիա թերակղզիները:
 2. Յելլոն, Սումատրա, Յավա, Բորնեո, Ֆիլիպյան, Յապոնական և Սախալին կղզիները:
 3. Սուեզի պարանոցը, Կարմիր ծովը, Բաբ-ել-Մանդեբի նեղուցը, Պարսից ծոցը, Արևել. Զինական ծովը, Յապոնական ծովը, Բերինգյան ծովը և Բերինգյան նեղուցը:
- Գտեք Մեքսիկայի ծոցը և Պանամայի պարանոցն Ամերիկայում, Մարական կղզին Աֆրիկայի արևելյան կողմը, Տասմանիա կղզին Ավստրալիայի հարավային կողմը:

ՅԵՐԿՐԱԳՆԻԻ ՊՏՏՎԵԼՆ ԻՐ ԱՌԱՆՑՔԻ ՇՈՒՐՁԸ

Աշխատանք.—Դասարանը մթնեցրեք: Գլորուսը գրեք սեղանին և սպա վառ մոմը պահեցեք գլորուսից քիչ հեռու: Ամբողջ գլորուսը լուսավորվում է ինչու:

Չեզնից մեկը թող գլորուսն անընդհատ պտտեցնի իր առանցքի շուրջը: Նայեցեք աշխարհամասերին, նրանք պտտվելիս կամ լուսաքի վոր կողմն են անցնում կամ խավար: Յենթադրենք թե մի մրջյունն ստած է գլորուսի վրա. նրա համար շարունակ լույս կլինի՞, ինչու: Յեթե գլորուս չունեք, փորձը կատարեցեք վորևէ գնդակի վրա:

Մենք դիտենք, վոր ամեն առավոտ արեգակը ծագում է արևելքում, հետո հետո բարձրանում է յերկնակամարի վրայով, կեսօրից հետո սկսում է թեքվել դեպի հորիզոնը և յերեկոյան ծածկվում է արևմուտքում: Նույն յեղանակով արևելքից դեպի արևմուտք շարժվում են նաև աստղերը: Հին ժամանակ մարդիկ կործում էլին, թե արևն ու աստղերն իսկապես շարժվում են յերկրի շուրջը, բայց XVI դարում նշանավոր գիտնական Կոպերնիկոսն ապացուցեց, վոր արեվն ու աստղերն անցարձ Կոպերնիկոսն ապացուցեց, վոր արեվն ու աստղերն անցարձ են, իսկ յերկրագունդը պստվում է իր առանցքի շուրջը, ինչ-

դեռ պատվող հողը, գլորուսը: Բայց այնպիսի առանցքը, ինչպիսի
 սին գլորուսն ունի, չեղիրագունդը չունի: Յերկրագնդի առանցքը
 յերեվակայական է, ինչպես պսսվող հողին:

Յերկրագունդը մի պտույան իր առանցքի շուրջը կտտա-
 րում է 24 ժամում, այսինքն մեկ օրում: Պատվելիս նա դեպի



Նկ. 26

արևն է դարձնում կամ մի յերեսը, կամ մյուսը: Հուսավորված կողմը
 լինում է ցերեկ, իսկ մուլթ կողմը՝ գիշեր: Յերբ Ասիայում ցերեկ է լի
 նում, նույն միջոցին Ամերիկայում գիշեր է լինում: Բայց վորովհետև
 յերկրի հետ մենք ել ենք շարժվում, ուստի այդ շարժումը չենք
 նկատում: Մեզ թվում է, թե արևն, աստղերն ու լուսինը շարժ-
 վում են, իսկ մենք անշարժ ենք: Յեթե դուք զնայցքով արեվ-
 մուսից դեպի արեվելի գնալիս լինեք և վազոնից գուրս նայեք,
 ձեզ կթվա, թե դուք անշարժ եք, իսկ հեռագրի սյուները, ծա-
 սերը շարժվում են արեվելից դեպի արեվմուսի:

Ուրեմն արեգակն ու աստղերը արեվելից դեպի արեվմուսի
 չեն շարժվում, դա մեզ թվում է միայն: Իսկապես յերկրի հետ
 մենք ենք շարժվում արեվելից դեպի արեվմուսի:

Յերկրագունդն իր առանցքի շուրջը մի պտույտը վորքան ժա-
 մանակում է կատարում:


Յերբ մեզ մոտ գիշեր է, այդ միջոցին վոր յերկրներում է ցերեկ
 լինում: Գիշերն ու ցերեկն ինչից են առաջանում:

Աստիճանացանց. - Գլորուսի վրա բացի հասարակածից և
 միջորեյականներից անց են կացնում նաև գուգահեռական գծեր:


Չուգահեռական կոչվում է այն շրջագիծը, վորն անցնում է
 հասարակածին զուգահեռ: Յեթե պատկերացնենք մի մարդ,
 վորը հասարակածին զուգահեռ շարժվելով յերկրի շուրջը
 պտույտ կատարի, այն դեպքում նրա կատարած շրջանը կլինի
 գուգահեռական: Հասկանալի լե, իհարկե, վոր գլորուսի վրա
 կարող ենք շատ զուգահեռականներ անցկացնել, բայց դրանք
 ասարբեր մեծութուն կունենան: Չուգահեռականներից ամենա-
 մեծը հասարակածն է. հասարակածից դեպի բևեռները նրանք
 վորքանում են:

Կիսագնդերի քարտեզի վրա ցույց տվեք միջորեյականները:
 Նրանք ի՞նչ ուղղությամբ են անցնում:
 Գտեք գլխավոր միջորեյականը:
 Ցույց տվեք զուգահեռականները և հասարակածը. որանք ի՞նչ
 ուղղությամբ են անցնում:

Յուրաքանչյուր շրջագիծ բաժանվում է 360 մասի, վոր-
 ռոնցից ամեն մեկը կոչվում է աստիճան (°): Հասարակածը, ինչ-
 պես և ամեն մի զուգահեռական, ունի 360 աստիճան, իսկ
 միջորեյականը՝ 180 աստիճան (ինչո՞ւ):



Նկ. 27. Չուգահեռականներ:




Նկ. 28. Միջորեյականներ:

Չուգահեռականները հառվում են հասարակածից դեպի
 հյուսիս յեվ դեպի հարավ. յեթե զուգահեռականը հասակա-
 ծից 20° հեռու լե գտնվում, այդ դեպքում նա կոչվում է
 20-րդ զուգահեռական, յեթե 60° է հեռու՝ 60-րդ զուգահեռա-
 կան և այլն: Միջորեյականները հառվում են գլխավոր միջորե-
 յականից դեպի արեվելի յեվ արեվմուսի:

Հասարակածը, զուգահեռականները և միջորեյականները միասին կազմում են աւսիւնաւացանց: Աստիճանացանցի ողնութեամբ միշտ կարելի յի վորոշել վորեւ քաղաքի կամ վայրի դիրքը: Իրա համար հարկավոր ե իմանալ, թե այդ վայրը կամ քաղաքը ի՞նչ հեռավորութիւն ունի հասարակածից և գլխավոր միջորեյականից:

Տեղի հեռավորութիւնը հասարակածից կոչվում ե աւելաւագրական լայնութիւն: Յեթե քաղաքը հասարակածից դեպի հյուսիս հեռու յի 60°, այն դեպքում նա ունի 60° հյուսիսային լայնութիւն: Յեթե վորեւ քաղաք հասարակածից դեպի հարավ հեռու յի 75°, այն դեպքում նա ունի 75° հարավային լայնութիւն և այլն:



Նկ. 29. Աւելաւագր. լայնութիւն և յերկարութիւն վորոշումը:

Տեղի հեռավորութիւնը գլխավոր միջորեյականից կոչվում ե աւելաւագրական յերկայնութիւն, վորը լինում ե աւելաւագրական յի աւելաւագրական: Յեթե վորեւ վայր գտնվում ե գլխավոր միջորեյականի արեւմտյան կողմը և նրանից հեռացած ե 40°, այն դեպքում նա ունի 40° արեւմտյան յերկայնութիւն:

Ուրեմն՝ թե լայնութիւնը յի վ թե յերկայնութիւնը հաւելում ե նա աւելաւագրական:

Չափել Պրինիչի միջորեյականից արեւմուտք գտնվող 20-րդ, 180-րդ միջորեյականը: Աշխ տետրի 13-րդ նկարի վրա առանձին դժիկներով նշանակեցեք արեւմտյան կիսագնդի բոնած տարածութիւնը:

Կիսագնդերի քարտեզի վրա գտեք Յերեւանի տեղը: Նա հասարակածից մոտ 40° դեպի հուսիս ե գտնվում, իսկ գլխավոր միջորեյականից մոտ 45° դեպի արեւելք: Ուրեմն նա գտնվում ե 40° հյուսիսային լայնութիւն և 45° արեւելյան յերկայնութիւն վրա:

Կիսագնդերի քարտեզի վրա գտեք Լեւոնգորգի տեղը, վորը նշանակված ե Վ. տառով: Նա գտնվում ե 60° հյուսիսային լայնութիւն և 30° արեւելյան յերկայնութիւն վրա:

Կիսագնդերի քարտեզի վրա ցույց տվեք մի այնպիսի կետ, վոր գտնվի 30° հարավային լայնութիւն և 40° արեւելյան յերկայնութիւն վրա:

Հյուսիսային բևեռը վոր լայնութիւն վրա յի գտնվում:

Քարտեզների վրա զուգահեռականները ցույց տվող թվերը դրվում են քարտեզի աջ և ձախ կողմը, իսկ միջորեյականները ցույց տվող թվերը գրվում են քարտեզի վերեւի և ներքեւի կողմը:

Տեղադրւած քարտեզի վրա ցույց տվեք այն թվերը, վորոնք ցույց են աւելաւագրականները կամ միջորեյականները:

Վորոշեցեք Մոսկվայի, Սամարայի, Մատրախանի, Բագվի աշխարհագրական դիրքը, այսինքն գտեք նրանց լայնութիւնն ու յերկայնութիւնը:

Հասարակածի և միջորեյականի ամեն մի աստիճանը հավասար ե մոտ 111 կիլոմետրի: Իսկ ինչո՞ւ զուգահեռականի մեկ աստիճանը 111-ից փոքր ե:

Յերեւանից մինչև հասարակածը քանի՞ կիլոմետր ե. լայնութիւնը ցույց տվող աստիճանները վերածեցեք կիլոմետրերի: Հասարակածից մինչև բևեռը քանի՞ կիլոմետր ե:

ՅԵՐԿՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ ԱՐԵՎԱԿԻ ՇՈՒՐՋԸ

Աւելաւագրական.— Դասարանը մթնեցրեք. վառ մոմը կամ լապտերը դրեք սեղանին: Ձեզանից մեկը թող վերցնի դրբուսը, առանցքի շուրջը շարունակ պտտեցնի և միևնույն ժամանակ պտույտ կատարի մոմի շուրջը:


Յերկրադունդն ել պտտվում ե արեգակի շուրջը, ինչպես դրբուսը մոմի շուրջը: Նա պտտվելով իր առանցքի շուրջը

24 ժամում, միաժամանակ առաջ է շարժվում և մոտ 365 որում ու 6 ժամում մի պտույտ կատարում արեգակի շուրջը:

Մենք գիտենք, վոր արեգակը հունիսի 22-ին ժամը 12-ին յերկնակամարի վրա ընդունում է ամենաբարձր դիրքը, գեկտեմբերի 22-ին ժամը 12-ին՝ ամենացածր դիրքը, իսկ մարտի 21-ին և սեպտեմբերի 23-ին ժամը 12-ին՝ միջակ դիրք է ընդունում: Բացի այդ՝ ցերեկն ու գիշերն այդ որերին իրար հավասար չեն լինում: Հունիսի 22-ին լինում է ամենալերկար ցերեկը և ամենակարճ գիշերը, գեկտեմբերի 22-ին լինում է ամենակարճ ցերեկը և ամենալերկար գիշերը, իսկ սեպտեմբերի 23-ին և մարտի 21-ին գիշերն ու ցերեկը լինում են իրար հավասար: Այս բոլոր յերևույթներն այսպես են բացատրվում:

Յերկիրը արևի շուրջն այնպես է պտտվում, վոր առանցքը մի վորոշ չափով յերկրի ճանապարհի նկատմամբ թեքված է մնում և այդ թեքությունը յերբեք չի փոխվում: Յեթե յերկրի առանցքը ճանապարհի նկատմամբ թեքված չլիներ, արեգակը յերկնակամարի վրա միշտ նույն բարձրությունը կունենար:

Տարվա յեղանակները.— Յերկրի՝ արեգակի շուրջը թեք պտտվելուց առաջ են դալիս տարվա յեղանակները:



Նկ. 30. Յերկրագնդի շարժումն արևի շուրջը:

Յերբ հյուսիսային կիսագունդը հարավայինից ավելի շատ է տաքանում, այնտեղ ամառ է լինում, իսկ հարավային կիսագնդում այդ միջոցին ձմեռ է լինում: Իսկ յերբ յերկու կիսագնդերն ել հավասար են տաքանում, լինում է գարուն կամ աշուն:

Դիտեցեք նկարը: Հունիսի վերջին յերկրագունդն այնպիսի դիրք է ընդունում, վոր հուսիսային կիսագունդն ավելի շատ է լուսավորվում և տաքանում, քան թե հարավայինը: Հյուսիսային կիսագնդում յերկար ցերեկներ են լինում, իսկ հարավային կիսագնդում՝ յերկար գիշերներ:

Դեկտեմբերի վերջին, այսինքն կես տարի հետո, յերկրագունդն այնպիսի դիրք է ընդունում, վոր հարավային կիսագունդն ավելի յե տաքանում, քան հյուսիսայինը: Հարավային կիսագնդում այդ ժամանակ սկսվում է ամառը, իսկ հյուսիսային կիսագնդում ձմեռը: հարավային կիսագնդում լինում են յերկար ցերեկներ, իսկ հյուսիսային կիսագնդում՝ յերկար գիշերներ:

Մարտի վերջին (մոտ 21-ին) յերկու կիսագնդերն ել հավասարապես են տաքանում և գիշերն ու ցերեկը հավասար են լինում: Հյուսիսային կիսագնդի համար սկսվում է գարունը, հարավային կիսագնդի համար՝ աշունը:

Սեպտեմբերի վերջին (մոտ 24-ին) յերկու կիսագնդերը դարձյալ հավասարապես են տաքանում և գիշերն ու ցերեկը դարձյալ հավասար են լինում, բայց հուսիսային կիսագնդի համար սկսվում է աշունը, իսկ հարավային կիսագնդի համար՝ գարունը:

Յեթե յերկրի առանցքը ճանապարհի նկատմամբ թեքված չլիներ տարվա յեղանակները կլինեյին:


Յերկրագնդի շարժումն արևի շուրջը լավ պատկերացնելու համար Դիտեցեք այդ մասին մի նկար, վոր տեղավորված է ատլասի առաջին թերթի վրա:

Կլիմայական գոտիներ.— Մեզնից ամեն մեկը գիտե, վոր արևն ամառվա ընթացքում ավելի շատ է տաքացնում յերկիրը, քան թե ձմեռը: Ամառը ցերեկը յերկար է լինում, ուրեմն արևը յերկար ժամանակ է տաքացնում. բացի այդ՝ ամառը կեսորին արևն ավելի բարձրից է տաքացնում, քան ձմեռը: Վորքան ճառագայթները բարձրից են ընկնում յերկրի վրա, այնքան մեծ է նրանց տաքությունը: Հենց այդ է պատճառը, վոր կեսորին ավելի տաք է լինում, քան թե յերեկոյան կամ առավոտը:

Յերկիրն արևի շուրջն այնպես է պտտվում վոր, արևի ճառագայթներն ամբողջ տարին հասարակածի

մոտ բարձրից են ընկնում: Նույնիսկ ձմեռն այնտեղ այնքան
տաք է, վոր դեռե՛րն ու լճերը չերբեք չեն սառչում: Հունվա-
րին հասարակածի մոտ այնքան տաք է, վորքան Յերևանում
հուլիս ամսին: Այդ տաք լերկրները հասարակածի լերկու կող-
մերով լայն գոտու պես պատում են լերկրագունդը և կազմում
սա՛մ գոտի: Տաք գոտին տարածվում է խեցգետնի արեւալայտ-
նից (կամ հյուսիսային լայնության $23\frac{1}{2}^{\circ}$ -ից) մինչև այժեղճի
արեւադարձը (հարավային լայնության $23\frac{1}{2}^{\circ}$ -ը):

Յեթե տաք գոտուց ուղևորվենք դեպի հյուսիս, կտես-
նենք, վոր արևն այնքան ել բարձրից չի տաքացնում և ձմեռը
լինում է ցուրտ: Այս լերկրները բաճեխառն են: Բարեխառն
լերկրները նույնպես գոտու նման պատում են լերկիրը և
ձգվում խեցգետնի արևադարձից մինչև հյուսիսային բևեռային
շրջանը կամ հուսիսային լայնության $23\frac{1}{2}^{\circ}$ -ից մինչև $66\frac{1}{2}^{\circ}$ -ը:
Բարեխառն լերկրներից դեպի հյուսիս շարժվելիս մենք
տեսում ենք, վոր արևի ճառագայթները կեսօրին բավականին
ցածրից են ընկնում և լերկիրը քիչ է տաքանում: Բևեռային
շուրջն ամբողջ տարին սոսկալի սառնամանիքներ են լինում
Արևը նույնիսկ ամառվա ընթացքում շատ չի բարձրանում:



Հունիսի 22-ին Մարտի 21-ի և սեպտեմբերի 22-ին: Դեկտեմբերի 21-ին
Նկ. 31 Յերկրի դիրքն արևի վերաբերմամբ:

Չմեռային գիշերը շաքաթներ, ամիսներ է տևում, իսկ բևե-
ռում 3 ամիս արևը չի ծագում (ձմեռը) 6 ամիս ել մայր չի
մանում (ամառը): Յերկրի մեծ մասը ձյունով ու սառույցներով
է ծածկված: Այդ լերկրները կազմում են ցուրտ գոտի, վորը
սկսում է հյուսիսային բևեռային շրջանից և տարածվում մինչև
հյուսիսային բևեռը:

Այսպիսով լերկրագնդի վրա կան հետևյալ հինգ գոտիները
1. Հյուսիսային ցուրտ գոտի, 2. Հյուսիսային բարեխառն գոտի,
3. Տա՛մ գոտի, 4. Հարավային բարեխառն գոտի և 5. Հարավ-
ային ցուրտ գոտի:

Կիսագնդերի քարտեզի կամ ալեյի լավ է գլորուսի վրա ցույց
տվեք խեցգետնի և այժեղճի արևադարձները, հյուսիսային և հարա-
վային բևեռային շրջանները, հյուսիսային և հարավային բևեռները:
Թվեցեք գոտիները հյուսիսից դեպի հարավ:

Աստիճաններով վորոշեցեք ամեն մի գոտու սահմանները. որի-
նակ՝ ցույց տվեք, թե տաք գոտին վոր ստիճանից մինչև վոր
աստիճանն է տարածվում:

Կիսագնդերի վրա ցույց տվեք Յելլոն, Սուժատրա, Յավա կղզի-
ները (Ասիայի հարավում), Նոր Յերկիր, Շպիցբերգեն, Նոր Սիբիր,
Գրենլանդի կղզիները (Հյուսիսային Բևեռային ծովերում): Այդ կղզի-
ները վոր գոտում են գտնվում. Ինչո՞ւ Յելլոնում ձմեռ չերբեք չի լի-
նում, իսկ Գրենլանդիան ամբողջ տարին ծածկված է ձյունով ու սառ-
չադաշտերով:

Ինչո՞ւ Ասիայի հարավային ափերն ալեյի տաք են, քան հյու-
սիսայինը:
Ինչո՞ւ Հնդկական ովկիանոսը չերբեք չի սառչում, իսկ Հյուսիսա-
յին Բևեռային ծովը համարյա ամբողջ տարին սառույցներով է ծածկ-
ված:

Ամերիկան քանի՞ գոտում է գտնվում:
Առխառն — Կիսագնդերի համը քարտեզի վրա տարբեր գույնե-
րով ներկեցեք կլիմայական գոտիները:

ԿՐՈՆԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԹՇՆԱՄԻՆ Ե

Կրոնական գրքերի մեջ ասված է, վոր լերկիրը տափա-
րակ է և արևն ու աստղերը պտավում են նրա շուրջը: Բայց
մենք հիմա գիտենք, վոր լերկիրը գնդաձև է և պտավում է իր
առանցքի շուրջը: Այդ բանը մարդիկ շատ ուշ իմացան, վորով-
հետև լերկար տարիների ընթացքում լեկեղեցին հալածում եր
այն գիտնականներին, վորոնք պնդում եյին, վոր լերկիրը գնդի
ձև ունի և պտավում է իր առանցքի շուրջը*: Բերենք միքանի
փաստեր:

1. Յեվրոպայի արևմտյան կողմը ձգվում է Ատլանտյան
ովկիանոսը: Մինչև XV դարը վոչ վոք չեր համաձայնվում այդ
ովկիանոսով ճանապարհորդել, վորովհետև լեվրոպացիների կար-
ծիքով Ատլանտյան ովկիանոսը ծայր չունի: Իտալացի ծովա-
ծիքով Ատլանտյան ովկիանոսը միշտ չի ելել և շահագործող դասակարգերի ձեռքին դենք, վորով հիմա-

* Կրոնք միշտ յեղել է շահագործող դասակարգերի ձեռքին դենք, վորով հիմա-
րացնում են աշխատավորներին և ազրում նրանց հաշվին: Կապիտալիստները, կալվա-
ծատերերը և հողեօրականները մտածում են այսպես. յեթև աշխատավորները իմանան,
վոր յերկիրը աստվածաշնչի ասածների համաձայն տափակ չի, այլ կտր, այդ դեպքում
նրանք այլևս չեն հավատա ստածուն և կապտամբովն նրանց դեմ:

տունն վոչինչ չկա. հետևապես հաստատուն չե և շահագործող-
ների իշխանութիւնը:

ԿՅԱՆՔԸ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԵՍՐԲԵՐ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ


Հյուսիսային բեվեռային ծովը

Յուլյ ամիսը Հուլյս. Բևեռային ծովը: Նա վեր աշխարհամասերի
ափերն է վողողում:

Հյուս. Բևեռային ծովում ինչ կղզիներ կան. ցուլց ամիսը նրան-
ցից գլխավորները:

Ինչո՞ւ այդ կղզիների կլիման ցուրտ է: Քարտեզի վրա ցուլց ամիսը
Ասիայի ամենահյուսիսային ծոցը՝ Չելյուսկին հրվանդանը:

Հյուսիսային Բևեռային ծովը ցուրտ գոտում է գտնվում,
այդ պատճառով նրա կլիման ցուրտ է: Չմեռն աշնանը տևում
է 9—10 ամիս. շաբաթներ, իսկ ամիսի հյուսիս նուշխակ ա-
միսներ շարունակ (որինակ, Չելյուսկին հրվանդանում մոտ 4



Նկ. 32

ամիս) արեգակը չի ծագում և լերկարատե բևեռային գիշեր-
վա ընթացքում սառցի ծածկոցը լուսավորվում է լուսնի, աս-
տղերի և լերբեմն ել հյուսիսափայլի աղոտ լուսով:

Գազիս է ամառը. սկսվում է լերկարատե բևեռային ցերեկը՝
Արեգակն այժմ շաբաթներ, ամիսներ շարունակ պտույտներ է
կատարում լերկնակամարի վրա, առանց մայր մտնելու: Բայց
նա լերկնակամարի վրա շատ չի բարձրանում և անգոր, թեք
ձառագայթներով շատ քիչ է տաքացնում ծովի լերեսը և կղզի-
ները: Սառուլցները դանդաղորեն հալվում են, քամին քշում,
հեռացնում է նրանց ծովափերից: Սպիտակ ծովն ամառը բու-
րովին ազատվում է սառուլցներից, բայց նոր Յերկիր կղզի-
ների մոտ նրանք լողում են ամբողջ ամառը և դժվարացնում
նավագնացութիւնը:



Նկ. 33

Յերբ ծովն ազատվում է սառուլցներից, ձկնորսները շոգե-
նավերով և առաջաստավոր նավերով ծովն են դուրս գալիս
և վորսում մեծ քանակութամբ ձուկ, փոկ և այլն: Ծովեզեր-
քին, ինչպես և կղզիների վրա հաճախ պատահում են նաև սպի-
տակ արջեր, վորոնք կերակրվում են փոկերով: Հյուս. Բևե-

ուային ծովի կղզիները մեծ մասը բոլորովին անմարդաբնակ են։ Սակավաթիվ բնակչություն ունեն միայն այն կղզիները, վորոնք մոտ են աշխարհամասերին, որինակ՝ Գրենլանդիայի հարավ-արևմտյան ափերը, նոր Յերկրի հարավային մասը։ Այդ բնակչության ապրուստի գլխավոր աղբյուրը ձկնորսությունն ու վորսորդությունն է։

Պարզ է, վոր կլիմայի ցրտության պատճառով Հյուս. Բե-վեռային ծովի կղզիներում վոչ յերկրագործությունը կարելի չէ պարապել և վոչ էլ անասնապահությունը։

Այդ ծովում ի՞նչ կղզիներ կան։

Ինչպե՞ս այդ կղզիների վրա խիտ ազգաբնակչություն չկա։

Տունդրային գոտի։ Հյուս. Բևեռային ծովի ափերի յերկա-

րությունը ձգվում են Տունդրաները, վորոնք ընդարձակ տարածություն են բռնում թե Ամերիկիայում, թե Յեվրոպայում և թե Ասիայում։

Խիստ սառնամանիքներն այստեղ տևում են մոտ կես տարի և բևեռային յերկարատև գիշերներ են լինում։ Չմեռված ընթացքում գետինը բավական խոր սառչում է, իսկ ամառը յերեսից մոտ կես կամ մեկ մետր խորությունը հալչում է, բայց ավելի խորը մշտապես սառած է մնում։ Ամառը կարճատև է լինում և արեգակը յերկնակամարի վրա շատ չի



Նկ. 34

բարձրանում։ Սառուցից և ձուլնից գոյացած ջրերը գետնի սառած լինելու պատճառով դեպի խորքը չեն անցնում, այլ հավաքվում են գետնի յերեսին և կազմում լճակներ ու ճահիճներ։

Տունդրաների բուսականությունը շատ աղքատ է. բույսերից այստեղ աչքի չեն ընկնում մամուռները և քարաքոսները, մամուռների մեջ պատահում են հատապտուղ բույսեր։ Ծառեր

այստեղ չեն աճում, վորովհետև ձմեռը զափան է, իսկ ամառը կարճատև. բացի այդ ձառերի աճմանը խանգարում է և գետնի սառած լինելը։ Ծառերից այստեղ կարելի չէ հանդիպել միայն զաճաճ ուռնեհներին յեվ կեչիներին, բայց սրանք իրենց վախ, ծուռած ցողուններով կպած են լինում գետնին, թաղնվելով մամուռների մեջ, վորովհետև գետինն ավելի տաք է, քան ողը։



Նկ. 35

Տունդրան ձմեռը ներկայացնում է ձյունի անապատ, համարյա զուրկ է կենդանիներից։ Տունդրայի ձմեռային բնակիչներին է բեվեռային կախվել, վորը սնվում է բույսերի բողբոջներով. կաքավին հետապնդում է բեվեռային աղվեսը։ Թե կաքավները և թե բևեռային աղվեսները ձմեռն ունենում են սպիտակ գույն, այնպես վոր նրանց գփվար է ձուլնի վրանկատել, իսկ ամառն ունենում են գորշ-հողի գույն։

Յերբեմն միայն պատահում են հյուսիսային յեղջերուներ, վորոնք կարողանում են ձյունի ծածկոցի տակից սընունդ (այեղջերվի մամուռ)՝ քարաքոս) ձարել։ Բայց հենց վոր ամառը գալիս է, տունդրան կենդանանում է. յերևում են մեծ

քանակութեամբ միջատներ, տաք չերկրներից գալիս են կռունկներին, կարապների, բադերի և սագերի չերամներ, վորոնք այստեղ առատ սնունդ են ճարում (միջատներ, ձկներ, հատապտուղներ):

Տունդրաներում ապրող ժողովուրդներից աչքի չեն ընկնում սամոյեդները և եսկիմոսները:

Սամոյեդի համար չեղջերուն ամեն ինչ է. չեղջերուն տալիս է նրան սնունդ (միս, կաթ, արյուն և այլն), հագուստ, անկողին, ծածկոց վրանի համար և այլն, լծում են սանալիներում և սրանց միջոցով քոչում տեղից-տեղ: Բացի չեղջերվապահութունից սամոյեդները պարապում են նաև փորսորդութեամբ և ձկնորսութեամբ:



Նկ. 36


Հուլիս. Ամերիկայի տունդրաներում ապրում են եսկիմոսները, վորոնք չեղջերուների փոխարեն լծկան շներ են պահում: Եսկիմոսների գլխավոր գաղմուկը՝ փորսորդութունն է. նրանք փորում են գլխավորապես ծովային գազաններ (փոկեր, ծովացուլեր և այլն): Ամառն եսկիմոսներն ապրում են վրաններում, վորոնց ծածկում են փոկի մորթիներով, իսկ ձմեռը ձյունից խրճիթներ են շինում: Ներսի կողմից խրճիթը պատում են մորթիներով, իսկ մեջտեղը տեղավորում քարե թաս, վորի մեջ աչրվում է փոկի ճարպ: Եսկիմոսը հազնում է փոկի մորթուց կարած շոր, կերակրվում է ծովային գազանների մսով և ձրկներով:

Տունդրաները վեր աշխարհամասերում են տարածվում: Ինչո՞ւ տունդրայի կլիման ցուրտ է:

Ինչո՞ւ տունդրայի բուսականությունն աղքատ է: Տունդրայում կարելի՞ չէ հացահատիկներ սնուցել կամ այգեգործութեամբ պարապել: Ի՞նչ է պատճառը, վոր Տունդրայում ամառը բազմաթիվ միջատներ, թռչուններ ու գազաններ են չերևում:

Ինչո՞վ են զբաղվում տունդրայի բնակիչները:

Անտառային գոտի: Տունդրաներից դեպի հարավ թե Ամերիկայում, թե Յեվրոպայում և թե Ասիայում լայն շերտով տարածվում են բարեխառն գոտու անտառները:



Նկ. 37

Անտառային գոտում ձմեռը ցուրտ է լինում: Ձյունը մնում է չերկար ժամանակ. գետերն ու լճերը ծածկվում են սառցե հասա շերտով: Ամառը տաք է, բայց կարճատև: Արդեն սպտեմբերին ցուրտ աշուն է լինում, իսկ հոկտեմբերի սկզբներին չերկիրը ծածկվում է ձուլնով:

Բարեխառն գոտու անտառները բաղկացած են փայտեղենի և սաղարթավոր ծառերից:

Փշատերև ծառերն, որինակ՝ լեղենին, սոճին, մայրին և
 ճուռն են ավելի ցուրտ տեղերում, իսկ սաղարքալուր ծառերը՝
 կեչին, լորենին, կաղնին և այլն, ավելի տաք տեղերում: Շատ
 տեղեր փշատերև և սաղարթավոր ծառերն աճում են միասին,
 կազմելով խառն անտառներ:

Անտառների կենդանական աշխարհը հարուստ է և բազմազան: Այստեղ ապրում են բազմաթիվ թռչուններ ու գազաններ, վարունք ամառ, ձմեռ առատ սնունդ են ձարում:

Անտառների շրջանը մարդու համար ավելի հարմար է, քան տունդրաներն, այդ պատճառով անտառային գոտում բնակչությունն ավելի խիտ է քան թե Տունդրաներում:



Նկ. 38

Փշատերև անտառների շրջանում բնակիչները պարապում են վորսորդությամբ, վորսում են աղվամազ գազաններ, վորոնց մորթին բավական բարձր գին ունի: Կորատելով անտառները, նրանք շինարարական փայտ են տեղափոխում այն լեռերները, վորտեղ անտառ չկա: Սոճուց ստանում են մեծ քանակությամբ ձյութ, վորից պատրաստում են սկիալիտար կոչված հեղուկը (գործ է ածվում ներկերի համար): Բաց գյուղատնտեսությունը թույլ է զարգացած, ցրտության պատճառով լեռկրագործու-

թյունն արդյունք չի տալիս: հացահատիկներից մշակում են միայն գարին, վորը կարճատև ամառվա ընթացքում կարողանում է հասնել: Գետերի լեռկարությամբ ձգվում են մարգագետիններ, վորոնք առատ խոտ են տալիս կովերի համար:

Խառն անտառներում ավելի շատ մարդ է ապրում, կլիման համեմատաբար տաք է, ամառը բավականաչափ լեռկար է լինում, իսկ ձմեռը սոսկալի սառնամանիքներ չեն պատահում: Բացի գարուց, այստեղ մշակվում են հաճար, վարսակ և կարճափիլ:



Նկ. 39

Սակայն մարդը բնակություն հաստատելով անտառներում, իր գործունեությամբ մեծ փոփոխություններ է մտցրել անտառային գոտում: Շատ տեղեր անտառներն անհետացել են և դառնում են անտառային գոտի: Շատ տեղեր անտառներն անհետացել են և դառնում են անտառային գոտի: Շատ տեղեր անտառներն անհետացել են և դառնում են անտառային գոտի: Շատ տեղեր անտառներն անհետացել են և դառնում են անտառային գոտի:

Մեր կաթնեղջերուների և գետերի մոտ հիմնվում են նոր գյուղեր, քաղաքներ, շատանում են գործարաններն ու ֆաբրիկաները: Յեվ վորքան բարձրանում է մարդու տեխնիկան, այնքան ավելի մեծ փոփոխություն է լեռկարկվում անտառային գոտին: Ցույց տվեք անտառային գոտին: Ինչպե՞ս անտառային գոտու հարավային մասն ավելի տաք է, քան թե հյուսիսայինը:

Անտառային գոտում ինչ բույսեր են աճում: Բնակիչներն ինչով են պարագում:

Ինչով անտառային գոտու բնակչությունն ավելի խիտ է, քան թուռնդրաներինը:


Ինչով բացատրել, այն, Վոր անտառների պատկերը ներկայումս մեծ փոփոխության է լինթարկվել:

Տափաստանային գոտի: Անտառային գոտուց հարավ տարածվում են տափաստաններ:

Անդրկովկասում ինչ տափաստաններ գիտեք:

Գարնանը և աշնանը տափաստանը ծածկվում է կանաչով: Վորի մեջ լերևում են բազմաթիվ գույնզգույն ծաղիկներ: Ամառվա ընթացքում անձրևների քչության պատճառով դաշտերի խոտը չորանում, խանձվում է:

Տափաստանը հարմար է թե անասնապահության և թե լեռնկրագործության համար: Այստեղ մշակում են ցորեն, հաճախ



Նկ. 40

լեզիպտացորեն, ճակնդեղ և այլ բույսեր: Հողի արգավանդության պատճառով լերկրագործը մեծ բերք է վերցնում: Այնտեղ վորտեղ հողն արգավանդ չէ, լերկրագործը գոմաղբով, զանազան պարարտանյութերով հողը պարարտացնում է և մեծ բերք ստանում:

Մարզն իր աշխատանքով փոփոխել է տափաստանի կեր

պարանքը: Նախկին կուսական տափաստանի փոխարեն աչժմ տարածվում են գյուղեր ու քաղաքներ, խճուղիներ և լերկաթուղիներ, այգիներ, բանջարանոցներ և մշակված գաշտեր:

Վայրի կենդանիների փոխարեն գաշտերում արածում են ընտանի կենդանիներ, մեծ քանակությամբ տրակտորներ քաշում են մի քանի խոփ ունեցող գութաններ ու հերկում դաշտերը: Այստեղ այնտեղ գտնվում են բազմաթիվ գործարաններ, վորտեղ ճակնդեղից շաքար են պատրաստում, կարտոֆիլից՝ սպիրտ, պամիրգորից ու պտուղներից՝ կոնսերվներ և այլն:

Ինչ և նշանակում տափաստան:

Ինչու ամառը տափաստանի խոտը չորանում է:

Տափաստաններում բնակիչներն ինչով են պարագում:

Տափաստանների չոր և վոչ արգավանդ տեղերն ինչպես պետք է մշակել:

Մերձարեվադարձային գոտի: Բարեխառն գոտու հարվային մասում, որինակ՝ Միջլերկրական և Սև ծովի ափերին (Յեվրոպայում), Մեքսիկայի ծոցի լեզերքներին (Հյուս. Ամերիկայում), Արևելյան Չինական ծովի ափերին (Ասիայում) աճում են մշտադալար սաղարթավոր ծառեր, վորոնց տերևները կոշտ են և ձմեռը չեն թափվում: Այդ տերևները ծառի վրա փոխվում են աստիճանաբար և վոչ թե միանգամից: Մշտադալար բույսերից աչքի լեն ընկնում ձիթենին, թեյը, մագնոլիան, դափնին նարինջենին և այլն:

Մերձարևադարձային գոտում, որինակ՝ Բաթումում ձմեռը տաք է և սառնամանիքներ չեն լինում, հաճախ անձրևներ են գալիս, իսկ ամառը շոգ է և չորային:

Բնակիչներն այգիներում մշակում են կիտրոն, նարինջ, ձիթենի, թեյ, մանդարին և այլն: Հացահատիկներից տարածված է բրինձը (Չինաստանում և Յապոնիայում). մյուս բույսերից աչքի լեն ընկնում ծխախոտը, խաղողը և այլն:

Մերձարևադարձային գոտին ինչպիսի կլիմա ունի:

Ինչ և նշանակում մշտադալար ծառեր:

Անդրկովկասի վոր մասերում են աճում մշտադալար ծառեր:

Մերձարևադարձային գոտում բնակիչներն ինչ բույսեր են մշակում:

Ա.Նուպասային գոտի: Բարեխառն և տաք գոտիների ամե

նաչոր մասերում տարածվում են անապատներ: Խորհրդային Միության մեջ անապատները տարածվում են կասպից ծովից դեպի արևելք, Թուրանի դաշտավայրում: Չմեռն այնտեղ սաստիկ ցուրտ է, իսկ ամառը՝ սաստիկ շոգ, ձյուն ու անձրև շատ քիչ է գալիս, այդ պատճառով բուսականությունն աղքատ է և ընդարձակ տարածություններ ծածկված են ավազով:

Յերկրագնդի ամենամեծ անապատը Սահարան է, վորը գտնվում է Աֆրիկայի հյուսիսային մասում և տարածվում է հարմիր ծովից մինչև Ատլանտյան օվկիանոսը:

Սահարայում համարյա բույսեր չկան, ամենուրեք տարածվում են ավազ ու քարակույտեր: Կենդանիներից պատահում են կարիճներ և մողեսներ, վորոնք կերակրվում են մանր միջատներով: Անապատի լեզերքներին լերբեմն կարելի չե անսնել շալլամներ և այծքաղների հոտեր:

Անապատով ճանապարհորդելը դժվար է, մանավանդ շոգ ժամանակ: անցնում էք ընդարձակ տարածություններ և վոչ մի տեղ մի կաթիլ ջուր չեք գտնում: Սովորաբար ճանապարհորդում են ուղիսի կարավաններով, վորովհետև ուղտը կարող է մի քանի օր առանց ջրի և սննդի մնալ: Վերջերս Սահարայով սկսել են լերթեկեկել նաև ավտոմոբիլներ:

Այնտեղ, վորտեղ անապատով գետեր են հոսում և կամ ստորլերկրա ջուրը գետնի լերեան է դուրս գալիս, գտնվում են սաղիաներ, այսինքն հարուստ բուսականությամբ ծածկված տեղեր: Սահարայի սաղիաներում աճում են փյունիկյան արմավենիներ, վորի պտուղներով կերակրվում են մարզիկ և ուղտերը (վերջիններիս տալիս են կորիզները): Սահարայի միջով դեպի հյուսիս հոսում է Նեղոս գետը, վորի ստորին հոսանքը (Յեզիպտոսը) կազմում է սաղիս: Այստեղ բամբակի մշակությունը հսկայական չափերի չե հասել: Նման սաղիաներ գտնվում են նաև մեզանում՝ Թուրանի դաշտավայրում՝ Սիր-Դարիս գետն լերկարությունը:

Ի՞նչ և նշանակում անապատ:
Ի՞նչ անապատներ գիտեք: Ցույց տվեք քարտեզի վրա ինչո՞ւ անապատը ծածկված է ավազով և քարակույտերով:
Ի՞նչ է նշանակում սաղիս:

Տրայիկական սափասաններ: Ընդարձակ տափաստաններ

գտնվում են նաև տաք գոտում, սրինակ՝ Միջին Աֆրիկայում, Հարավային Ամերիկայում, Հնդկաստանում, Ավստրալիայում: Այդ տափաստանները սովորաբար կոչվում են սավաններ, իսկ Հար. Ամերիկայի այն տափաստանները, վորոնք տարածվում են Որինոքո դեպի ավազանում, կոչվում են նաև Լյանոսեր:

Սավանները մեծ տարածություն են բռնում Աֆրիկայում: Այստեղ ամառը շատ տաք է, խոնավ և հաճախ հորդ անձրևներ են գալիս: Առատ խոնավությունից, լույսից և ջերմությունից խոտերն աճում են շատ արագ և հասնում այնպիսի բարձրության, վոր նրանց մեջ կանգնած մարդու հասկի գլուխն է լերևում: Սավանների մեջ տեղ տեղ բարձրում են առանձին լերևներ: Սավանների բարձր բաժան է Սրա բարձրությունը լերբեմն հասնում է մոտ 40 մետրի: Խիս խոտերի մեջ թափառում են այծքաղներ, ընձուղաներ, շալլամներ, վազերաձիեր, վորոնք կերակրվում են խոտով: Խոտակեր կենդանիներին հետապնդում են գիշատիչները՝ առյուծները, բողանիներին հետապնդում են գիշատիչները՝ առյուծները, կարիճները: Մահաշիվ են թունավոր ոճերը, սարդերը, կարիճները: Անձրևային շրջանում սավաններում կարելի չե անսնել ներք: Անձրևային շրջանում սավաններում կարելի չե անսնել և այնպիսի թռչուններ, վորոնք չվել են բարեխառն գոտու և այնպիսի թռչուններ, վորոնք չվել են բարեխառն գոտու ցուրտ շրջաններից: Չմեռն մոտ սավաններում անձրևները դադարում են, սկսվում է տարվա չոր շրջանը, ծառերն ու դարում են, սկսվում է տարվա չոր շրջանը, ծառերն ու լերբեմն չորությունից թափում են իրենց տերևները, խոտը խանձրվելը չորությունից թափում են իրենց տերևները, խոտը խանձրվում է: Այդ ժամանակ հրդեհը հեշտությունը տարածվում է և այրում չոր խոտը: Կենդանիները փախչում են դեպի գետերն և այրում չոր խոտը: Կենդանիները փախչում են դեպի գետերն ու լճերը և մանելով ջրի մեջ, ազատվում կրակից:

Աֆրիկայի սավաններում ապրում են սևամորթ նեգրերը, վորոնք ցանում են Աֆրիկական կորեկ Այդ կորեկից նրանք պատրաստում են մի տեսակ բլիթներ, վորոնք գործ են անում և հացի տեղ: Բացի կորեկից նրանք մշակում են գետնընկույզ և բանաններ:

Սավանները անասնապահության համար հարմար են, բայց նրա զարգացմանը խանգարում է ցեցե կոչված ճանճը, վորի խալիթից ընտանի կենդանիները մահանում են: Աֆրիկական սավանների մեծ մասն անմշակ է:

Բոլորովին ուրիշ տեսք ունեն Հնդկաստանի սավանները,

վորոնք ծածկված են կորեկի, բամբակի, ցորենի, շուտի, բրնձի կամ շաքարեղեղնի ցանքերով:

Սավանները վո՞ր գոտում են գտնվում:

Սավանների խոտը չե՞րբ և արագորեն աճում և չե՞րբ և չորանում: Ի՞նչպիսի կենդանիներու բույսեր կան Աֆրիկայի սավաններում: Աֆրիկայի սավանների բնակիչներն ի՞նչ են մշակում: Ի՞նչո՞ւ ա՞նասնապահութունն այնտեղ չի զարգանում:

Ի՞նչ տարբերություն կա Աֆրիկայի և Հնդկաստանի սավանների միջև:

Արեվադարձային (սրոպիկական) անտառներ: Տաք գոտոխոնավ մասերում աճում են տրոպիկական անտառներ: Նրանք բաղկացած են մշտադալար ծառերից, վորոնք աճում են ամբողջ տարին: Տրոպիկական անտառները խիտ են և ճոխ: Հսկայական բարձրություն ունեցող ծառերի ճյուղերի տակ աճում են ուրիշ ծառեր, իսկ սրանց տակ՝ ավելի ցածր ծառեր և այլն: Շատ ծառեր աճում են ուրիշ ծառերի կեղևի վրա: Բազմաթիվ պատատուկներ փաթաթվելով ծառերին և անցնելով մի ծառից մյուսին, խճճում են անտառը և դարձնում դժվարանցանելի՝ շատ տեղեր դժվար և առանց կացնի մի քայլ անել:

Տրոպիկական անտառներում շատ կենդանիներ կան, որինակ՝ վառ գույներ ունեցող քոչուկներ (թուփակներ), միջատներ, վիշապ ոճեր, վորոնցից վամանք 8 մետր յերկարություն են ունենում: Գետերում ապրում են կոկոդիլոսներ, իսկ ծառերի վրա՝ կապիկներ, հաստամորթ կենդանիներից նշանավոր են փիղը, ռնգյեղջյուրը (Աֆրիկայում և Ասիայում) և գետաձիկ (Աֆրիկայում):

Տրոպիկական անտառների կլիման վատառողջ է: Այստեղ տարածված են վտանգավոր դեղին տենդը և մալարիան, վորից ամեն տարի մեծ քանակությամբ մարդիկ են մեռնում: Այդ պատճառով տրոպիկական անտառները շատնոսր բնակչություն ունեն: Հարավային Ամերիկայի անտառներում (Ամազոն գետի ավազանում) ապրում են հնդկացիներ, վորոնք հավաքում են զանազան պտուղներ, վորսում են ձուկ, թռչուններ ու դադաններ, վորոնց սպանում են նետով կամ նիզակով:

Բացի տեղացիներից, տրոպիկական անտառում բնակություն են հաստատել յեվրոպական և ամերիկական կապիտա-

լիստները: Սրանք ընդարձակ տարածություններ մաքրել են անտառից և նրանց տեղում մշակում են զանազան թանգարժեք բույսեր, որինակ, կաուչուկի ծառ (ռետին ստանալու համար), քինայի ծառ (քինայի փոշի ստանալու համար), կակաոյի, սուրճի, բանանի ծառեր, արմավենիներ և այլն:

Տրոպիկական անտառները վո՞ր գոտում են տարածված:

Տրոպիկական անտառները մեր անտառներից ի՞նչով են տարբերվում:

Այնտեղ ի՞նչ բույսեր են աճում:


Ի՞նչո՞ւ տրոպիկական անտառներում քիչ մարդ է ապրում:

Յեվրոպացիներն ի՞նչո՞ւ համար են բնակություն հաստատել տրոպիկական անտառներում:

վորտեղից սկսվում են ծովային ճանապարհներ դեպի Յապոնիա, Չինաստան, Ամերիկա և այլն:

Վլադիվաստոկից փոքր ինչ հարավ գտնվում է Պոսյետի ծոցը, վորտեղից սկսվում է Միուլթյան հարավային սահմանը: Հարավում Խորհրդային Միությանը սահմանակից պետություններն են՝ Ֆապոնիան, Չինաստանը Մոնղոլյան, Ադվանսանը, Պարսկաստանը և Թյուրքիան (ցույց տվեք):

ԽՍՀՄ-ի հարավային սահմանում են գտնվում նաև Սև և Կասպից ծովերը: Կասպից ծովը ովկիանոսի հետ կապ չունի՝ նա լիճ է: Նրա վրայով Խորհրդային Միությունն առևտուր է անում Պարսկաստանի հետ:



Նկ. 41

Ավելի կարևոր նշանակություն ունի Սև ծովը, վորը տաք ծով է և ամբողջ տարին սառուցյներից ազատ է, բացառությամբ և կազմում նրա հյուսիսային մասը, վորը մի քանի շաբաթով սառչում է: Սև սովի վրայով մենք արտահանում ենք մեծ քանակությամբ հաց, նավթ և մանգան: Նրա ափերին գտնվում են բազմաթիվ նավահանգիստներ, վորոնցից նշանավոր են Բաքու մր, Նովոռոսիյսկը, Ողեսան և Նիկոլայեվը:

Սև ծովից սկսվում է Միության արևմտյան սահմանը, վորը հասնում է մինչև Հյուս. Բևեռային ծովը: Այստեղ մեզ սահմանակից են Ռումինիան, Լեհաստանը, Լասվիան, Եսոնիան և Ֆինլանդիան: Արևմտյան սահմանը կարևոր նշանակություն ունի, վորովհետև նրանից դեպի արևմուտք գտնվում են տրնտեսապես զարգացած յերկրներ — Անգլիան, Գերմանիան

Ֆրանսիան և այլն, վորոնք ԽՍՀՄ-ից ստանում են վուշ, փայտեղեն, ձյութ, հաց և այլն, իսկ ԽՍՀՄ-ն այդ յերկրներից ներմուծում է մեքենաներ, վորոնք ներկայումս անհրաժեշտ են մեր տնտեսության զարգացման համար: Արևմտյան սահմանում մեր տնտեսության զարգացման համար: Արևմտյան սահմանում գտնվում է Ծխենական ծոցը, վորի յեզերքին է գտնվում Խորհրդային Միության առաջնակարգ նավահանգիստը՝ Լենինգրադը:

Ցույց տվեք Խորհրդային Միության ծովային և ցամաքային սահմանները:

Գտեք Մուրմանսկ, Սրխանգիսկ, Վլադիվաստոկ, Բաթում, Ողեսա և Լենինգրադ նավահանգիստները:

Ցույց տվեք Բաթումից Վլադիվաստոկ տանող ծովային ճանապարհը:

Ցույց տվեք Լենինգրադ—Լոնդոն (Անգլիայում), Մուրմանսկ—Լոնդոն, Բաթում—Նեապոլ (Իտալիայում) ծովային ճանապարհները: ԽՍՀՄ-ի համար քարտեզի վրա շրջապատող ծովերը ներկեցեք կապույտ գույնով, նշանակեցեք հարևան պետությունների անունները: Գրեցեք իրենց տեղերում ԽՍՀՄ-ի նավահանգիստները:

ԽՍՀՄ-ի ԲՆԱԿԱՆ ՄԱՍԵՐԸ

ԽՍՀՄ-ն բաղկացած էելրոպական և Ասիական մասերից: Յեվրոպական մասն Ասիականից բաժանվում է Ուրալյան լեռներով, Ուրալ գետով, Կասպից ծովով և Կուրա-Մանիչյան ցածրով:

Կուրա-Մանիչյան ցածրություն սկսվում է Կուրալի գետաբերանից (Կասպից ծովի արևմտյան յեզերքից) և Մանիչի վրայով հասնում է մինչև Ազովի ծովը: Այս ցածրության սեղմ մի ժամանակ նեղուց է յեղել, վորով Սև և Ազովի ծովերը միանում էլին Կասպից ծովի հետ:

Միության Ասիական մասն իր հերթին բաժանվում է յերեք մասի՝ Սիրի, Կովկաս և Թուրքեստան:

Սիրիը տարածվում է Ուրալյան լեռներից մինչև Խաղաղ ովկիանոսը և Մոնղոլիայի ու Չինաստանի սահմաններից մինչև Հյուս. Բևեռային ծովը:

Թուրքեստանը գտնվում է Կասպից ծովի արևելյան կողմը, Արալյան լճի շուրջը:

Կովկասը տարածվում է Կուրա-Մանիչյան ցածրությունից

մինչե Գարսկաստանի և Թյուրքիայի սահմանները և Սև ծովից մինչև Կասպից ծովը: Կովկասի այն մասը, վոր գտնվում է Կովկասյան լեռներից հարավ, կոչվում է Անդրկովկաս, իսկ նա, վոր գտնվում է այդ լեռներից հյուսիս, կոչվում է Հյուսիսային Կովկաս:

Խորհրդային Միությունը քանի մասի չե բաժանվում:

Իսկ Միության վեր մասումն եք գտնվում, Ասիական թե Յեվրոպական.

Ցույց տվեք Կովկասի սահմանները:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆ և ԱՂԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ և

Խորհրդային Միության մեջ ապրում են գանազան ազգություններ, վորոնց թիվը հարյուրից անցնում է: Այդ ազգությունների մեջ աչքի չեն ընկնում ուսները, ուկրաինացիները, բելոուսները, Ադրբեջանի թուրքերը, հայերը, վրացիները, ուզբեկները, թուրքմենները, կազակները, թաթարները և այլն:

Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ այդ ազգությունները գտնվում էին ուսական ցարիզմի լծի տակ: Ներկիցը կառավարում էին ցարական շինովնիկները—նահանգապետները և ուրիշները: Բռնի ուժով նրանք ամեն տեղ ուս լեզուն էին մտցնում: համարյա բոլոր գրքերն ու լրագրերը ուսներն լեզվով էին տպագրվում, մանր ազգությունների համար բացում էին դպրոցներ, վորտեղ ներխաններին սովերեցնում էին ուսներն լեզվով: Յարական կառավարությունը խլում էր մանր ազգությունների հողերը և առիս ուս կալվածատերերին և կոզակներին:

Այժմ այդ ազգություններն ազատ են և ձեռք-ձեռքի տված սոցիալիզմ են կառուցում: Բոլոր ազգություններն ունեն դպրոցներ մայրենի լեզվով, տպագրում են գրքեր ու լրագրեր սեփական լեզվով, բազմաթիվ պատանիներ սովորում են բանֆակներում և գասընթացներում, վորպեսզի հետո աշխատեն իրենց ժողովրդի մեջ: Շատ մանր ազգություններ միայն Հոկտեմբերյան Հեղափոխությունից հետո ունեցան զիր և գրականութուն, շատերը հրաժարվեցին արարական դժվար ալլուքներից և ընդունեցին լատինական ալլուքները:

Ազատվելով ցարիզմի լծից, Ռուսաստանի բազմազան ազ-

գությունները կազմեցին սոցիալիստական հանրապետություններ, որինակ, ուսները կարելիների, թաթարների, բաշկիրների, կազակների, բուրյատների, յակուտների, զալմուխների և ուրիշների հետ կազմեցին Ռուսաստանի սոցիալիստական խորհուրդային Ֆեդերատիվ հանրապետություն. ուկրաինացիները և նրդային Ֆեդերատիվ հանրապետություն. ուկրաինացիները և նրդային Ֆեդերատիվ խորհուրդային սոցիալիստական խորհրդային մոլդավացի կազմեցին Ուկրաինայի սոցիալիստական խորհրդային հանրապետություն, բելոուսները՝ Բելոուսիայի ՍՍՀ, ադրբեջանցիք, հայերը, վրացիները, ոսերը, աբխազները և աջարեցիք՝ Անդրկովկասի սոց. Ֆեդերատիվ խորհուրդային հանրապետություն ՍՍՀ, թուրքմենները՝ Թուրքմենստանի ՍՍՀ, տաջիկները՝ Տաջիկիստանի ՍՍՀ:

Այս 7 հանրապետությունները միացան իրար հետ և կազմեցին խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միություն կամ ԽՍՀՄ և դրա համար էլ նրանք Միութենական Հանրապետություն են կոչվում:

Խորհրդային Միությունը հավասար իրավունքներ ունեցող ազգությունների Միութուն է: Նրա մեջ չկան տիրող և հպատակ ազգություններ: Խորհրդային Միությունը միակ պետությունն է ամբողջ աշխարհում, վորտեղ իշխանութունը պատկանում է վոչ թե կալվածատերերին և կապիտալիստներին, այլ բանվորներին և գյուղացիներին. և կապիտալիստական դրոշմի վրա նկարված է ձուրճ ու մանգաղ:

Խորհրդային Միության բոլոր աշխատավորներն իրենց միջև ընտրում են խորհուրդներ:

Գյուղում իշխանութունը պատկանում է գյուղխորհրդին. շրջանում՝ խորհուրդների շրջանային համագումարին, հանրապետության մեջ՝ խորհուրդների Հանրապետական Համագումարին:


ԽՍՀՄ-ի գերագույն մարմինը խորհուրդների Համամիու-



Նկ. 42

ԽՍՀՄ

ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՐ



Քենական համագումարն է, վորը գումարվում է տարեկան մեկ անգամ: Այդ համագումարը լսում է զեկուցում կառավարության գործնեյության մասին, հաստատում է բյուջեն և ընտրում է Կենտրոնական Գործադիր Կոմիտե:

Խորհուրդները մի համագումարից մինչև մյուսը վորպես զերազույն մարմին հանդիսանում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեին, վորը նշանակում է Ժողովրդական Կոմիտեներ: Բոլոր Ժողովրդական Կոմիտեները միասին կազմում են Ժողովրդական Կոմիտեների Ստրուկտուր, վորը և կառավարում է յերկրը:

Միության մեջ մտնող ամեն մի հանրապետություն էլ ունի իր Ստրուկտուրային Համագումար, Կենտրոնական Գործադիր Կոմիտեին յեվ Ժողովրդական Կոմիտեների Ստրուկտուրը:

Ամբողջ ԽՍՀ Միության մայրաքաղաքը Մոսկվան է: Դուք վճիռ հանրապետության մեջ եք պարում: Չեք հանրապետության կենտրոնը վճիռն է:

Խորհուրդների ընտրությունն ո՞վ է մասնակցում: Ընտրելու իրավունքից ովքեր են զրկված: Ընտրություններն ինչպես են կայանում գյուղում, քաղաքում, և այլն:

Միութենական Հանրապետությունների մակարդակի մեծությունը յեվ ազգաբնակչությունը (1926 թ)

	Մակարդակը քառ. կիլոմետրով հարված	Բնակիչները	Մայրաքաղաքը
1. ՌՍԾԽՅ	19,748,296	100,850,000	Մոսկվա
2. ԲՍԽՅ	126,793	4,984,000	Մինսկ
3. ՈւՍԽՅ	451,730	29,000,000	Խարկով
4. ԱՍԽՅ	186,658	5,862,000	Քրեմլին
5. Թուրքմենստան	491,216	992,000	Աշխաբադ
6. Ուզբեկստան	186,000	4,475,000	Տաշկենտ
7. Տաջիկստան	134,000	800,000	Ստալինաբադ (Դյուշամբե)

Ընդամենը ԽՍՀՄ մոտ 21,352,000 մոտ 147,000,000*

* Ներկայումս ԽՍՀՄ-ի բնակչության թիվը 160 միլիոնից անցած է:

Քարտեզի վրա ցույց տվե՞ք ? Միութենական հանրագեաությունները,

ԽՍՀՄ-ի համար քարտեզի վրա այդ հանրապետութիւնները տարբեր գույներով ներկեցե՞ք և զրկեցե՞ք գլխավոր քաղաքների անունները: ցույց տվե՞ք Թիֆլիս, Խաբով, Մինսկ, Մոսկվա, Աշխաբադ, Տաշկենտ և Ստալինաբադ քաղաքները:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԸ

Յույց տվե՞ք Յեվրոպական մասի սահմանները:

Յույց տվե՞ք Հյուս. Բևեռային ծովը, Մուրմանսկ և Արխանգելսկ քաղաքները, Ֆիննական ծոցը, Լենինգրադը, Սև ծովը, Սևաստոպոլսկ Ողեսան, Կասպից ծովը, Արխանգելսկը:

Գտե՞ք Ուրալյան լեռները: Նրանք ի՞նչ ուղղութիւնով են ձգվում:

Մասշտաբով չափեցե՞ք Ողեսայից մինչև Արխանգելսկ քաղաքը:

Յույց տվե՞ք Դնեպր, Դոն և Վոլգա գետերը: Գտե՞ք Վոլգայի ափունքը և գետաբերանը:

Գտե՞ք Մոսկվան: Յույց տվե՞ք Մոսկվայից դեպի Լենինգրադ, Արխանգելսկ, Սևաստոպոլ և Բազու տանող ճանապարհները:

Յեվրոպական մասի մակերեւութային կազմութիւնը յետ գետերը: Յեվրոպական մասը մի ընդարձակ հարթութիւն է, վորը առաջածվում է Ֆիննական ծոցից մինչև Ուրալյան լեռները, Սև ծովից մինչև Հյուս. Բևեռային ծովը: Այդ հարթութիւնը կոչվում է Ռուսական հարթութիւն:

Ռուսական հարթութիւնը միապողպող հարթութիւն է՝ Որբերով, շաբաթներով ճանապարհորդելիս ճանապարհորդն ամեն տեղ նույն պատկերն է տեսնում—անսահման, ընդարձակ հարթութիւն: Մի ճանապարհորդ ասում է. «Եթե գնացքով գնալիս յերեկոյան պառկեք քնելու և առավոտը դարթնեք ու պատուհանից դուրս նայեք, ձեզ կթվա թե գնացքն իր տեղից չի շարժվել»:

Քիչ թե շատ բարձր է ռուսական հարթութիւնը միջին մասը, վորը կոչվում է Միջին Ռուսական բարձրութիւն: Սակայն Միջին Ռուսական բարձրութիւնը վրա գտնվում են վոչ թե լեռնազանգեթներ ու շղթաներ, այլ բլուրներ, վորոնք ծածկված են անտառով կամ վարելահողերով: Իսկական լեռներ Ռուսական հարթութիւնը վրա չկան. նրանք տեղավորված են հարթութիւնը չեզերքներին—Ուրալյան լեռներն արևելքում, իսկ Ալթայի լեռ-

ները հարավում: Միջին Ռուսական հարթութիւնից սկիզբ են առնում մի շարք գետեր, վորոնցից աչքի յեն ընկնում Վոլգան, Դոնը և Դնեպրը:

Յեվրոպական մասի ամենամեծ գետը Վոլգան է: Նա սկսվում է Միջին Ռուսական բարձրութիւնից և թափվում է Կասպից ծովը: Վոլգան շատ ջրառատ է և հոսում է հանդարտ, վոչ պատճառով նրա վրայով յերթեկում են հարյուրավոր նավեր, վորոնք տեղավորում են զանազան ապրանքներ: Նրա լեզուներին առաջ են յեկել այնպիսի խոշոր քաղաքներ, ինչպիսիք են՝ Ստալինգրադը, Մարատովը, Նիժնի-Նովգորոդը և այլն: Սակայն Վոլգան ձմեռը սառչում է և այդ ժամանակ նավագնացութիւնը դադարում է:

Դնեպրը նույնպես սկսում է Միջին Ռուսական հարթութիւնից և թափվում է Սև ծովը: Նրա վրա կառուցվում է մի հսկայական էլեկտրակայան, վորն ունենալու չէ մոտ 800 հազար ձիու ուժ: Այդ կայանն առաջինն է ամցող Միութեան մեջ և կոչվում է ՎԵՆԱԿԱՍՏՈՅ: Դնեպրոստոյն արգեն մասամբ պատրաստ է և ապրիս է եներգիւ իր շրջանի գործարաններին:

Դոնը թափվում է Ազովի ծովը: Այնտեղ, վորտեղ Վոլգան ու Դոնն իրար մոտենում են, Խորհրդ. Իշխանութիւնը կառուցելու չէ մի ջրանցք, վորով Վոլգայի նախակութիւնն ավելի կմեղալ Սև ծովը: Դրանով Վոլգայի նշանակութիւնն ավելի կմեծանա, վորովհետև մեր նավերը կարող են այդ ջրանցքով, Դոն գետով, Ազովի և Սև ծովի վրայով դուրս գալ Միջերկրական ծովը և առետուր անել զանազան յերկրների հետ:

Մյուս կողմից Վոլգան արհեստական ջրանցքներով (Մալինյան ջրային ճանապարհով) միանում է Նեվա գետի հետ, վորը թափվում է Ֆիննական ծոցը (Լենինգրադի մոտ): Այսպիսով նավերը կարող են Կասպից ծովից (Աստրախանից) հասնել Լենինգրադ:

ԽՍՀՄ Յեվրոպական մասի բնական օրջանները Ինչ՞ու Յեվրոպական մասի հյուսիսային մասերը ցուրտ են, իսկ հարավայինը տաք:

Յույց տվե՞ք Յեվրոպական մասի այն շրջանը, վոր գտնվում է ցուրտ գոտում: Սպիտակ ծովն է ամբ, թե Սև ծովը:

Յեթե Սև ծովի լեզերքից ուղևորվելու լինենք դեպի Հյուսիս
 Բևեռային ծովը, մենք կտեսնենք, Վոր կլիման աստիճանաբար
 ցրտում է, դրա հետ փոխվում է և բուսականությունը: Սև ծովի
 ափին (Ղրիմում) մենք կտեսնենք մեսադալար բույսեր. այստեղից



Նկ. 44

անցնելով դեպի հուսիս, մենք կհանդիպենք ընդարձակ սափափ
 սառնների, վորտեղ արգավանդ սևահողի պատճառով ցանքսերն
 ընդարձակ տարածություն են բռնում: Տափաստաններից հե-

տո կմտնենք խառն անտառների շրջանը. ապա կանցնենք
 փեռսեղեվ անտառներով և կհասնենք սառնդառներին, վորից
 հյուսիս ձգվում է Բևեռային ցուրտ ծովը:

Հյուսիսային Բեվեռային ծովը

Ինչպե՞ս Հյուս. Բևեռային ծովը տարվա մեծ մասը ծածկված է սառույցով:

Յուրջ ավեր Հյուս. Բևեռային ծովի այն կղզիները, վորոնք պատկանում են Ս. Միության:

Ինչպես գիտենք, Հյուսիսային Բևեռային ծովը ցուրտ ծով է և տարվա մեծ մասը ծածկված է սառույցներով, վորոնք խանգարում են նավագնացությանը: Այդ սառույցներից ազատ է մնում միայն Մուրմանի ծովը, վորի ափին գտնվում է Նոր-հրդային Միության չսառչող նավահանգիստը— Մուրմանսկը:

Նավագնացությունը Հյուս. Բևեռային ծովում զարգացնելու համար Նորհրդ. Իշխանությունն այդ ծովի մը քանի անգերում հիմնել է ռադիոկայաններ, վորտեղից հաղորդում են նավերին, թե ծովի վոր մասն է ազատ սառույցներից, սառույցներն ինչ ուղղությամբ են շարժվում և այլն:

Հյուսիսային Բևեռային ծովը հարուստ է ձկներով և ծովային գազաններով: Այդ պատճառով Ս. Իշխանությունն աշխատում է զարգացնել ձկնորսությունը և վերսորդությունը:

Ամրանը, լերը ծովն ազատվում է սառույցների ծածկուցից, շրի խորքից լերան են գալիս բազմաթիվ մանր ու խոշոր ձկներ—ծովային հալիմգաներ (սելդ), փափուկներ (տրեսչոր ձկներ—ծովային հալիմգաներ և այլն): Դրանց հետապնդում են փոկերն ու դելֆինները: Տեղ-տեղ լողում են կեռերը, իսկ Նոր-Յեդերի ափերին պատահում են նաև ալիսակ արջեր:

Հյուս. Բևեռային ծովի ափերին շատ քիչ մաղդ է ապրում: Մուրմանում և Սպիտակ ծովի ափերին ապրում են ռուսներ, վորոնք կոչվում են պոմորներ և պարապում են ձկնորսությամբ: Ամեն տարի գարնանամուտին Հյուս. Բևեռ. ծովից դեպի Սպիտակ ծովն են շարժվում ահազին քանակությամբ փոկեր: Այդ ժամանակ պոմորները նավակներով ծովն են դուրս գալիս և լողացող սառույցների վրա վորսում նրանց:

Գլխավոր ձկնորսարանները գտնվում են Մուրմանի ափերից:

բին: Այստեղ վորսում են ահագին քանակութեամբ փրփրուկներ, վոր հյուսիսային յերկրների բնակիչների սիրած կերակուրն է: Գարնան վերջը, յերբ Սպիտակ ծովն ազատվում է լողացող սառույցներից, պոմորներն ուղևորվում են Մուրմանի ծովափը: Նրանք այստեղ կանգ են առնում իրենց կայարաններում, վորոնք ձմեռն անմարդաբնակ են լինում, և սկսում են վորսի պատրաստութուն տեսնել: Չուկը վորսում են կարթերով, վորոնք հազարներով ամրացած են լինում 3—5 կլլումիսը յերկարութուն սլրեցող պարանների վրա: Չկների գլուխները կարում են, չորացնում և պահում, վորպես ձմերային պաշար: Փրփրուկի լարդից ձկան չուղ են ստանում, իսկ մարմինը տա-



կանների մեջ ազում են և վորսադրում Արխանգելսկի վաճառելու համար:

Աշնանը, յերբ ովկիանոսի վրա չեղանակները խառնվում են, պոմորները թողնում են Մուրմանը և վերադառնում իրենց գյուղերը, վորոնք ցրված են Սպիտակ ծովի ափերին: Այստեղ էլ նրանք վորսում են սալմոն (սեմգա) և սելդ: Չմեռն անց են կացնում տներում, իսկ գարնանը նոր վորսի պատրաստութուն տեսնում:

Մինչև խորհրդայնացումը պոմորները չեղին կարողանում ոգովի հարստութունը, վորովհետև

Նկ. 45 Հյուս. Բևեռ. ծովում (սպիտակ աբլ, ծովացու և փոկ):

հարմար նավեր չունեցին: Նրանք իրենց փոքրիկ առագաստավոր նավերով ծովափից շատ չեղին կարողանում հեռանալ, վորովհետև Հյուս. Բևեռային ծովում հաճախ կատաղի փոթորիկներ են լինում:

Ներկայումս ձկնորսները կազմել են խոշոր ձկնորսական արտեղներ, վորոնք ձուկը վաճառում են փոշ թե մասնավոր վաճառականների, այլ պետութան և գրա փոխարեն ձեռնառ պարմաններով ստանում զանազան հարմարութուններ ձկնոր-

սության համար: Խորհրդ. իշխանութունը ձկնորսական արտեղների համար օտալեռներ (չագենավեր) և կառուցել, վորոնցով ձկնորսները կարողանում են ծովափից հեռու անցնել և վորսալ մեծքանակութեամբ ձուկ:

Խնչպես են կոչվում այն ուռաները, վորոնք ապրում են Հյուս. Բևեռային ծովի ափերին: Նրանք գլխավորապես խնչով են զբաղվում: Խ. Իշխանութունն ինչ միջոցներ է գիտնում, վորպեսզի ձկնորսութունը զարգանա: Պոմորներն աղած ձկներն մեր են փոխադրում:

Յեվրոպական մասի օտալեռները

Խնչ և տունդրան: Տունդրան վեր գոտումն է գանվում: Ցույց ավել: Յեվրոպական մասի տունդրաները: Նկարարագրեցեք ձեր անցածի հիման վրա տունդրաների բնությունը:

Տունդրայի կլիման, ինչպես գիտենք, ցուրտ է, դաժան: Այդ պատճառով տունդրաներում շատ քիչ մարդ է ապրում, այստեղ կարելի է անցնել հարյուրավոր կլիմետրեր և վոր մի մարդու չհանդիպել:

Յեվրոպական մասի տունդրաներում ապրող ժողովուրդներից աչքի չեն ընկնում սամոյեդները, վորոնց գլխավոր զբաղմունքը յեղջերապահութունն է: Սամոյեդը յեղջերուրներից ստանում է և սնունդ, և հագուստ, և բնակարան: Ապրում են կոնաձև վրաններում, վորոնց ծածկում են յեղջերվի մորթով կամ կեչու կեղևով: Յերբ յեղջերվի սնունդը մի տեղ պակասում է, նրանք հավաքում են իրենց գուլքը և քոչում նոր տեղեր: Ամառը նրանք բնակութուն են հաստատում Հյուս. Բևեռային ծովի ափերին, վորտեղ պարապում են նաև ձկնորսութեամբ, իսկ ձմեռը քոչում են հարավ, գետի անտառները: Այստեղ նրանք պաշտպանվում են ձմեռային փոթորիկներից և բացի այդ՝ առատ վառելիք են ձարում: Սամոյեդներն անտառների շրջանում վորսորդութեամբ էլ են պարապում: վորսում են գլխավորապես սպիտակ աղվեսներ, վորոնց մորթին լավ են օգտին:

Ցարիգմի ժամանակ սամոյեդները մասնավոր վաճառական-

փոխարեն ձեռնառու պայմաններով տալիս անհրաժեշտ պարազաններ:

Տայգայում ոռու գյուղացիները պարտապում են նաև անասնապահուքյամբ և յեղիագործությամբ: Յանում են գարի, հաճար, վարսակ և վուշ: Վուշից գործում են քաթան, վոչխարի բրդից մահուդ: Մակայն սեփական հացը չի բավականանում ազգաբնակչությանը, վորովհետև հողն արգավանդ չէ և կլիման ել խիստ է: Գարնանացանը սաստիկ ցրտերից հաճախ ցրտատար է լինում: Անտառից ազատ տեղերում պահում են ընտիր կովեր: Վոլոզգայի շրջակայքում կան բազմաթիվ կաթնասնեսախան գործարաններ, վորտեղ ընտիր լուղ են արտադրում:



Ն. 47

Յերկրի ամենամեծ հարստութունը անհատն է, վորը տարածվում է Հաղոգոտ լճից մինչև Ուրալյան լեռները, այս տեղից ել Միբերովմինչև Խաղաղ օվկիանոսը: Անտառային հարստությամբ վոշ մի յերկիր չի կորոզ համեմատվել Խ. Միության հետ: Ամբողջ աշխարհի անտառի $\frac{1}{3}$ մասը Միության մեջ է դանվում (թե Յեվրոպական և թե Ասիական մասում):

Անտառի տնտեսութունը մեծ չափերի չէ հասել Հյուսիսային Դվինա և Պեչորա գետերի ավազաններում: Բազմաթիվ գյուղացիներ կարող են ծառերը և լաստեր կազմելով,


գետերով փոխադրում Արխանգելսկ, վորտեղ դանվում են սղոցարաններ: Այստեղ սղոցում են տախտակներ ու գերաններ և բեռնային ծովով փոխադրում Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա և այլն, վորոնք փայտի մեծ կարիք ունեն: Վոլգայով փայտը փոխադրվում է նաև Միության տափաստանային շրջաններն՝ Աստրախան, Սալինգրադ:

Տայգայի արևմտյան մասերում դանվում են թղթի գործարաններ, վորտեղ փայտից զանազան տեսակի թղթեր են պատրաստում:

Տայգայի արևմտյան յեղերքին, Ֆիննական ծոցի ափին դանվում է Միության յերկրորդ մեծ քաղաքը — Լենինգրադը: Նա Բալտիկ ծովի վրայով առևտուր է անում Արևմտյան Յեվ-նա Բալտիկ ծովի վրայով առևտուր է անում Արևմտյան Յեվ-րոպայի և Ամերիկայի հետ, մյուս կողմից նա շրային ճանաչողայի և Ամերիկայի հետ, մյուս կողմից նա շրային ճանաչողայի և Ամերիկայի հետ, մյուս կողմից նա շրային ճանաչողայի և Ամերիկայի հետ, մյուս կողմից նա շրային ճանաչողայի և Ամերիկայի հետ, մյուս կողմից նա շրային ճանաչողայի և Ամերիկայի հետ:

Յույց ավելք Լենինգրադ-Ֆիննական ծոց-Բալտիկ ծով, Հյուսիսային կամ Գերմանական ծով — Լոնդոն (Անգլիա): Յույց ավելք Լենինգրադ Մոսկվա, Լենինգրադ — Մուրմանսկ, Լենինգրադ — Վոլոզգա յերկաթուղիները: Կարելի չէ Լենինգրադից Աստրախան գնալ նավով:


Լենինգրադը վոշ միայն խոշոր առևտրական, այլ և արդյունաբերական քաղաք է: Նրա հսկայական գործարաններում պատրաստվում են մեծ քանակությամբ մեքենաներ ու գործարանային մեքենաներ, վորոնք տարածվում են ամբողջ Խորհրդային Միության ճիւղերը,



Նկ. 48

մեջ: «Կրամնի Պուտիլովեց» գործարանը ներկայումս ավելի շատ վազոններ ու մեքենաներ է պատրաստում, քան ցարիզմի ժամանակ, իսկ Խորհրդ. իշխանության որով նա սկսել է արտադրել նաև արակտորներ»:

«Ռուսկի դիգել» գործարանն արտադրում է մեծ հզորութիւն ունեցող դիգել-շարժիչներ. «Սվետլանա» գործարանը պատրաստում է ելեկտրական լապտերներ ամբողջ Միութեան համար: Խոշոր գործարան է «Կրասնի տրեուզոնիկը», վորն արտադրում է մեծ քանակութեամբ կրկնակողիկներ, ուետինե խողովակներ, շիներ և այլն: Այդ գործարանում ներկայումս աշխատում է մոտ 17 հազար բանվոր: Բացի հիշած մեքենաներից Լենինգրադի գործարաններում պատրաստվում են տուրբիններ, զինամո-մեքենաներ, հեռախոսներ, ռադիո-ապարատներ շոգենավեր և այլն:



Նկ. 49

Այդքան գործարաններին եներգիտ տալու համար Խորհրդի իշխանութիւնը կառուցել է «Վոլխովստրոյ» և «Կրասնի Ուլաբը» ելեկտրակայանները: Ծրագրված է կառուցել ավելի մեծ հզորութիւն ունեցող ելեկտրակայաններ:

Փշատերև անտառներում ինչ ծառեր են աճում:

Այդ անտառներում բնակիչները գլխավորապէս ինչով են զբաղվում: Սեփական հացն ինչու չի բավականանում ապագայի բնակիչներին:

Փշատերև անտառների շրջանից ինչ են արտահանում:

Ինչով բացատրել այն, վոր Լենինգրադը դարձել է խոշոր առևտրական նավահանգիստ:

Լենինգրադն ինչ նշանակութիւն ունի ամբողջ Միութեան համար:

Խառն անտառների քոչանք

Վոր անտառն է կոչվում խառն անտառ:
Ինչու խառն անտառների կլիման ավելի տաք է:

Խառն անտառները գտնվում են փշատերև անտառներից դեպի հարավ: Երբ պատճառով խառն անտառների կլիման ավելի մեղմ է և ձմեռն այնպէս դաժան չէ, ինչպէս տալգայում: Այս անտառներում աճում են լայնատերև ծառեր՝ կաղնի, լորի, թխկի և այլն, վորոնց հետ խառն պատահում են նաև փշատերև ծառեր՝ շամի և լեղենի:

Մեզանից մոտ հազար տարի առաջ խառն անտառներն ընդարձակ տարածութիւն էլին բռնում, իսկ այժմ նրանց մեծ մասը կտրտված է և ծածկված վարելահողերով ու մարգագետիններով:

Բնակիչների մեծ մասը ուռաներ են, արևմտյան մասում ապրում են Բելոռուսներ, վորոնք կազմում են Բելոռուսիայի ՍՍՀ:

Գյուղացիների գլխավոր զբաղմունքը կազմում է լեռկադործութիւնը և անասնապահութիւնը:

Խառն անտառների շրջանի հողն արգավանդ չէ և առանց պարարտացնելու մեծ բերք չի տալիս: Ծիշտ է, այժմ կոլտընտեսութիւններն ավելի լավ են մշակում հողը, քան անասնագյուղացիները, բայց սեփական հացը շրջանին չի բավականանում: Ուկրաինայից, Միջին Վոլգայի շրջանից և Արևմտյան Միւրից ամեն տարի մեծ քանակութեամբ հաց է ներմուծվում:

Մեծ չափերի լե հասնում վուշի մշակութիւնը: Բազմաթիվ կոլխոզներ զբաղվում են հատկապէս վուշի մշակութեամբ և բերքն այնքան մեծ է լինում, վոր վուշի մի մասն այս շրջանից արտահանվում է:


Այս շրջանում գտնվում են բազմաթիվ խոշոր քաղաքներ, վորոնց շրջակայքում կաթնատեսութիւնը մեծ չափերի լե հասել, Պահում են ընտիր կաթնատու կովեր, վորոնց կերահարում են վոշ միայն խոտով, այլև քուսպով և արմատապտուկներով, դրա համար էլ նրանք մի կովից կարողանում են մոտ 4000 լիտր կաթ ստանալ: Կաթնատեսական կոլխոզները քաղաքի բանվորութեանը մատակարարում են թարմ կաթ և կաթաբլի:

Բայց վոշ լեռկադործութիւնը և վոշ էլ անասնապահութիւնը:

թյունն այնքան արդուունք չեն տալիս, վորքան արդյունաբերությունը: Այս շրջանում են գտնվում խոշոր արդյունաբերական քաղաքները՝ Մոսկվան, Նիժնի-Նովգորոդը, Իվանովո-Վոզնեսենկը և այլն, վորոնք մեծ քանակությամբ ապրանքներ են արտադրում ամբողջ Միության համար:

Մոսկովայի, Իվանովո-Վոզնեսենկի և Նիժնի-Նովգորոդի մարզերը միասին կազմում են մի արդյունաբերական շրջան, վորը կոչվում է կենտրոնական արդյունաբերական շրջան:

Կենտրոնական-արդյունաբերական շրջանը շատ հարմար աշխարհագրական դիրք ունի, այստեղից սկսվում են բազմամասիվ շրային և լեռնաթուղային ճանապարհներ գեպի Միության զանազան ծայրերը: Այս ճանապարհներով կենտրոնական



Նկ. 50


արդյունաբերական շրջանը տայգայից ստանում է գերաններ ու տախտակներ, սևահողային տափաստաններից՝ հաց, Ուրալից՝ լեռնաթի, Դոնբասից՝ քարածուխ, Կովկասից՝ նավթ, Միջին Ասիայից՝ բամբակ, Արևմտյան Ցեվրոպայից՝ զանազան մեքենաներ և հում նյութ (սետին): Դրա շնորհիվ էլ կենտրոնական արդյունաբերական շրջանը դարձել է խոշոր առևտրական և արդյունաբերական կենտրոն:

Արդյունաբերական ճյուղերի մեջ առաջին տեղը բռնում է տեքստիլ արդյունաբերությունը, վորի մեջ աշխատում են 500 հազարից ավելի բանվորներ: Ամբողջ Միության մեջ ստացվող

գործվածքների 80% -ը կենտրոնական արդյունաբերական շրջանն է տալիս:

Տեքստիլ արդյունաբերության կենտրոններն են Մոսկվան, Իվանովո-Վոզնեսենկը, Կասարաման և Յարոսլավլը:

Բացի տեքստիլային գործարաններից այս շրջանում գրանվում են բազմաթիվ մետաղագործական գործարաններ, վորտեղ պատրաստվում են զանազան մեքենաներ ամբողջ Խ. Միտեղ պատրաստվում են զանազան մեքենաներ ամբողջ Խ. Միտեղում կառուցվում է հսկայական ավտոմոբիլային գործարան, ռոդում կառուցվում է հսկայական ավտոմոբիլային գործարան, վորը պետք է տարեկան 140 հազար ավտոմոբիլ տա: Մոսկովայում շինվում են նավեր, վագոններ և շոգեկառքեր: Տուլայում շինում են ընտիր ինքնաշեններ և այլն:




Նկ. 51

Կենտրոնական արդյունաբերական շրջանի արդյունաբերությանը զարկ տալու համար Մոսկվայի իշխանությունը մեծ գրամագուլուն է հատկացրել: Այստեղ վերակառուցվում են լեզած գործարանները, բացի այդ կառուցվում են մի շարք այնպիսի գործարաններ, վորոնք համաշխարհային հռչակ են ունենալու: Կոստանովոյի կոմբինատը, Մոսկովայի «Փրեգեր» սրինակ, Բորբիկի քիմիական կոմբինատը, Մոսկովայի «Փրեգեր» և «Կալիբր» չափող գործիքների գործարանը, Դամացուլցի, կոն- շիկի մեքենաներ, բժշկական գործիքներ պատրաստող գործա-

րաններ: Կառուցվում են բամբակեղենի գործարաններ, ուլալի գործարաններ և այլն:

Գործարանների շատանալու հետ շատանում է նաև ելեկտրակայանների թիվը:

Միաժամանակ Խ. իշխանութիւնն ուշադրութիւն է դարձնում նաև գյուղատնտեսութեան զարգացման վրա: Հիմնվում են նոր վուշարուծական կաթնատնտեսական, անասնապահական բանջարաբուծական և այլ սովխոզներ: Վարելահողերը պարար-



Նկ. 53

տացնելու համար քիմիական կորիքատներն արտադրելու լեն մեծ քանակութեամբ պարարտանյութեր:

Կենտրոնական արդյունաբերական շրջանն ինչպիսի աշխարհագրական դիրք ունի:

Ինչհա այդ շրջանը կոչվում է արդյունաբերական շրջան:

Հիշեք այդ շրջանի գլխավոր քաղաքները:


Այդ շրջանում ինչ են արտադրում:

Մոսկվա: Մոսկվան ամբողջ Միութեան արդյունաբերութեան և քաղաքական կյանքի կենտրոնն է: Իր մեծութեամբ Մոսկվան առաջինն է Միութեան մեջ. բնակիչների թիվը ներկայումս 3 միլիոնից անց է: Նրա ծալրամասերում և շրջակայքերում գտնվում են բազմաթիվ գործարաններ (տեքստիլային

մետաղագործական, հագուստի, քիմիական և այլն), գլխավոր փողոցներում տեղավորվում են տրեստներ և սինդիկատներ, վորոնք ղեկավարում են ամբողջ Միութեան առևտուրն ու արդյունաբերութիւնը:

Մոսկվան միևնույն ժամանակ քաղաքական կյանքի կենտրոնն է. այստեղ են գտնվում ՀԱՄԿ (բ) և Կենտրոնական Կոմիտեն, ԽՍՀՄ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը: Կարմիր հրապարակում, Կրեմլի մոտ գտնվում է Վ. Ի. Լենինի մավզոլեյը և հեղափոխութեան ղեկավարների դամբարանները:

Մոսկվան հռչակված է իր բարձրագույն դպրոցներով, թանկարաններով, թատրոններով, գիտական հաստատութիւններով և այլն:



Նկ. 54

Նիժնի-Նովգորոդ: Մեր լերկերն ավտոմոբիլների մեծ կարիք ունի, վորովհետև նա ընդարձակ լերկեր է և լերկաթուղիներ քիչ ունի: Բեռնակիր ավտոմոբիլների կարիքը մեծ է մասնապես ներկայումս, լերբ կոլխոզներն ու սովխոզները մեծ քանակութեամբ ապրանքներ են արդադրում:

Պատերազմից առաջ մեզանում ավտոմոբիլներ համարյա

չեյին պատրաստում. ավտոմոբիլների արդյունաբերությունն սկսում է զարգանալ Սորհրդային իշխանության որով:

Մոսկվայի ԱՄՈ և Յարոսլավլի գործարանները 1928—29 թ. արտադրեցին մոտ 1500 ավտոմոբիլ. վերականգնումից հետո Ամո գործարանը կտա տարեկան հիսուն հազար ավտոմոբիլ:

Ավելի կարևոր նշանակություն ունի Նիժնի-Նովգորոդի ավտոմոբիլային գործարանը, վորը ներկայումս կառուցվում է. Շուտով բոլորովին պատրաստ կլինի և տարեկան 140 հազար ավտոմոբիլ կարտադրի: Այդ ավտոմոբիլներից 80 հազարը կլինի բեռնակիր, իսկ 60 հազարը թեթև:

1933 թ.-ից մեր բոլոր գործարանները տարեկան 250 հազար ավտոմոբիլ պետք է արտադրեն, վորի մեծ մասը կտա Նիժնի-Նովգորոդի գործարանը:

Նիժնի-Նովգորոդը վոչ միայն արդյունաբերական, այլ և խոշոր առևտրական քաղաք է. գտնվելով Վոլգայի վրա նա ջրային ճանապարհով կապվում է Կասպից ծովի և Ֆիննական ծոցի հետ: Մյուս կողմից Նիժնի-Նովգորոդը լեռկաթուղով միանում է Մոսկվայի, Վլադկայի և տափաստանային գոտու հետ:

Ուրալ

Քարտեզի վրա ցույց տվեք Ուրալյան լեռնաշղթան:

Նա ի՞նչ ուղղություն է ձգվում,

Գտնեք Սվերդլովսկ քաղաքը:

Ցույց տվեք այն ճանապարհը, վորով դուք կարող եք Սվերդլովսկ գնալ:

Ն. Միության համը քարտեզի վրա նշանակեցեք Սվերդլովսկի Մագնիտոգորսկ քաղաքների անունները:

Ուրալը Միության լեռկաթահանքով հարուստ շրջաններից մեկն է, այստեղ կան այնպիսի լեռներ, վորոնք համարյա ամբողջովին լեռկաթահանքից են կազմված, որինակ՝ Մագնիտնայա, Կաչկանար և Բլագոդատ սարերը:

Հազարավոր բանվորներ լեռնալանջերի հանքերի մեջ մեխանիկական բուրդուների միջոցով ծակեր են փորում և նրանց մեջ զինամիտի փամփուռներ անդավորում: Կեսորին բանվորների մեծ մասը հեռանում է, մնացողները վառում են փամփուռների պատրույգների ծայրը և նույնպես հեռանում, փո-

քը ինչ հետո փամփուռները պայթում են և փշրում լեռկաթահանքի ժայռերը:

Յերկաթահանքը սալերով անդամախառնում են գործարանները և այնտեղ բարձր հնոցներում քարածուխի միջոցով հալում. ստացվում է թուջ, վորից հատուկ վառարաններում լեռկաթ է պողպատ են պատրաստում:

Յերկաթը և պողպատը մեծ նշանակություն ունեն մեր անտեսության համար. նրանցից պատրաստելով մեծ քանակությամբ գյուղատնտեսական գործիքներ, արակտորներ, մեքենայներ, գնացքներ ու բեխեր, մենք վոչ միայն կհամենք արդյունաբերական կապիտալիստական լեռկրներին, այլև նրանցից առաջ կանցնենք: Ներկայումս Ուրալում կառուցվում է Մագնիտականցենք: Ներկայումս Ուրալում կառուցվում է Մագնիտականցենք գործարանը, վորը տարեկան պետք է տա 2.640.000 տոնն թուջ և իր մեծությամբ լեռկրորդն է ամբողջ աշխարհում: Այս տարի հունիսին Մագնիտոգորսկ №1 և №2 հնոցներն արդեն սկսեցին արտադրել թուջ:

Գործարանների կողքին բանվորների համար կառուցվում է մի նոր քաղաք, վորը կոչվում է Մագնիտոգորսկ: Նա բաղկացած կլինի կոմունա-աներից, վորոնցից ամեն մեկի մեջ պետք է ապրի 2—3 հազար մարդ: Բանվորները կապրեն առանձին նսենյակներում, բայց կունենան ընդհանուր սեղանատուն, դրա դարան, խոհանոց և այլն: Տները կլուսավորվեն ելեկտրական լույսով, լեռնանների համար կլինեն հատուկ այգիներ՝ բուրդ հարմարություններով:

Սակայն Ուրալը կոքսացող քարածուխ քիչ ունի: Դրա համար ել Մագնիտոգորսկի գործարանի համար քարածուխը բերվելու լե Կուզնեցկից (Կուզբասից), վորը գտնվում է Միբրում, Մագնիտոգորսկից մոտ 2000 կիլոմետր հեռու:

Կուզնեցկից քարածուխը գնացքներով կանդամախառնվե Մագնիտոգորսկ, իսկ Մագնիտոգորսկից դատարկ լեռ լեկող վազոնները կցվեն Մագնիտոգորսկի լեռկաթահանքով՝ Կուզնեցկի մետալուրգիական գործարանի համար:

Այսպիսով Ուրալի արդյունաբերությունը կբարձրանա Կուզնեցկի քարածուխով, իսկ Կուզնեցկի արդյունաբերությունը՝ Ուրալի լեռկաթահանքով:

Ուրաչը հարուստ է նաև վոսկով պլաստիկով և քանգա-
կին ֆաբրով:

1925 թ. Ուրաչյան լեռների արևմտյան լանջերում Սոլի-
կամակ քաղաքի շրջակայքում գտնվեց մեծ քանակությամբ կա-
լիումի աղ, վորը գործ է ածվում հողը պարարտացնելու հա-
մար: Մինչև հիմա կալիումի աղը ներմուծով էր Գերմանիա-
յից, իսկ այսուհետև այնքան կալիումի աղ կարգունահանենք,
վոր նրա մի մասը նույնիսկ կարող ենք արտահանել ուրիշ
լեռերին:

Վերջապես 1928 թ. Չուսովայա գետի մոտ գտնվեց նալթ,
վորն իր վորակով Բագվի նավթից հետ չի մնում: Ներկայումս
այդ նավթն արդյունահանվում է:

Հնգամյա պլանի համաձայն մեծ չափերի պետք է հասնի
վոչ միայն հանքերի արդյունահանումը, այլ և կառուցվելու լեն
բազմաթիվ գործարաններ՝ քիմիական գործարաններ (թթուներ
և աղեր սառնալու համար), մեքենաշինարարական գործարան-
ներ, վորոնցից աչքի լեն ընկնում Սվերդլովսկի, ներքին Տագե-
լի և Չելյաբինսկի գործարանները: Չելյաբինսկն արտադրելու
լե տրակտորներ՝ Սիբիրի և Կազակստանի գյուղատնտեսական
շրջանների համար:

Ուրալի արդյունաբերությանը զարկ տալու համար կա-
ռուցվում են նոր ելեկտրակայաններ:

Տափասանների գոտին: Տափաստանային գոտին տարած-
վում է անտառային շրջանից հարավ:

Տափաստանների հողն արգավանդ է. ընդարձակ տարա-
ծություններ բուսված են սեվահողով, վորը նույնիսկ մի քանի
տարի իրար վրա առանց պարարտացնելու առատ բերք է տա
լիս: Սեվահողային տափասանները Խորհ. Միության հացի
եսեմարանն են:

Սևահողային տափաստանների ազգաբնակչությունը բավա-
կան խիտ է և գյուղատնտեսությունն այդ ազգաբնակչության
համար կարևոր նշանակություն ունի:

Տափաստանային գոտու մի քանի շրջաններ այնքան հա-
ցահատիկ են ստանում, վոր վոչ միայն խոշոր պրոլետարական
կենտրոններին՝ Լենինգրադին և Մոսկվային են հաց մատակա-

րարում, այլ և մեծ քանակությամբ հաց արտահանում են Ա-
րևմտյան Յեվրոպա:

Ստորին Վոլգայի, Զավոլժայի և Կենտրոնական սևահո-
ղային շրջանի հացը փոխադրվում է դեպի անտառային շրջան-
ների խոշոր կենտրոնները, Լենինգրադ, Մոսկվա, Նիժնի-Նովոգո-
րոդ և այլն, իսկ Ուկրաինայի և Հյուսիսային Կովկասի հացն
արտահանվում է Սև ծովի գլխավոր նավահանգիստներով:

Ցուլց տվեք Ոդեսան, Նիկոլաևը, Խերսոնը և Նովորո-
սիյսկը:

Միութայն վոչ մի մասում կոլեկտիվացումն այնպիսի հըս-
կայական չափերի չի հասել, ինչպիսի տափաստանային գոտու-
հացահատիկային շրջանում: Կազմակերպվել են խոշոր սովխոզ-
հացահատիկային շրջանում են գյուղատնտեսական հումուլթներ
և սննդամթերք, հիմնվել են մեքենատրակտորային կայաններ
և այլն:

Հյուս. Կովկասում, Միջին և Ստորին Վոլգայի շրջաննե-
րում պատահում են այնպիսի տափաստաններ, վորոնք մինչև
խորհրդայնացումը գութանի լեռնա շելին տեսել: Այսոր այդ
տափաստաններում կազմվել են հացահատիկային և անասնա-
պահական սովխոզներ, վորոնցից ամենախոշորը «Գիգանտն» է
(գտնվում է Հյուսիսային Կովկասում, Թոսսովից դեպի հարավ-
արևելք, Սալսկ քաղաքի մոտ):

«Գիգանտի» մակարդակը 200 հազար հեկտար է: Բոլոր
աշխատանքները մեքենաներով են կատարվում: Բավական է
հիշել այն, վոր նա ունի 400 տրակտոր, 1930 թ. զարնանը
նա մեկ որում ցանեց 10 հազար հեկտար հող: 1930 թ-ից նրա
շաշտերում աշխատում են նաև կոմբայներ:

Բացի հացահատիկներից, տափաստանների շրջանում մշա-
կում են նաև շաքարի ձախդեղ, ծխախոտ, արևածաղիկ և այլն:
ձախդեղը մշակում են տափաստանների հարավ-արևմուտ-
յան անկյունում, Դնեպրից դեպի արևմուտք: Հենց այստեղ էլ
գտնվում են այն բազմաթիվ շաքարի գործարանները, վորոնք
շաքար են մատակարարում ամբողջ Միութայնը:

Արեվածաղիկը մեծ չափով տարածված է Հյուս. Կովկասում,
վորտեղ նրանից ստանում են ընտիր ձեթ:

Բայց տափաստանների շրջանը միայն գյուղատնտեսու-

թյամբ չէ, վոր խոշոր նշանակութիւն ունի Միութեան համար՝
 Նա կարևոր գեղ է կատարում նաև իր արդյունաբերութեամբ:


Տափաստանների գոտու վորոշ տեղերում առաջ են յեկել
 խոշոր արդյունաբերական կենտրոններ, վորոնք համամիութե-
 նական նշանակութիւն ունեն: Հիշենք Դոնբասը, Ստալինգրադը
 և այլն:

Ինքնուրույն Ուկրայինայի մեծադազորական գործարանները

Բարսեղի վրա ցույց տվեք Դոնեց գետը և Դոնբասը:

Դանք Սարկով, Դնեպրո-պետրովսկ, Ստալինո, Արտեմովսկ, Լու-
 գանսկ քաղաքները:

Դոնբասը գտնվում է Դոնեց գետի ավազանում: Նա կազ-
 մում է Միութեան քարածխային արդյունաբերութեան առա-
 ջին կենտրոնը: Ամբողջ Միութեան մեջ ստացվող քարածուխի
 մոտ 70% -ը Դոնբասն է տալիս:



Նկ. 57. Դոնբասի հանքանորում բանվորները քարածուխով
 բարձում են վազոնիկը:

1927 թ. Դոնբասը տվել է 27,3 միլիոն տոնն քարածուխ,
 առաջին հնգամյա պլանի վերջում այսինքն, 1933 թ. տալու լին-
 52,5 միլիոն տոնն, իսկ յերկրորդ հնգամյակի վերջում, այս-
 ինքն, 1937 թ. Դոնբասի քարածուխի արդյունահանումը հաս-
 նելու լին 120 միլիոն տոննի:


Քարածխի խափերը գտնվում են 100,200 և ավել մետր

խորութեան մեջ: Հազարավոր բանվորներ աշխատում են գետ-
 նի տակ, խոր հանվում, քանդում են քարածխի խափեր
 և մեքենաների միջոցով բարձրացնում վեր:

Այդ քարածուխը գործ է ածվում վոչ միայն տեղում, այ-
 փոխադրվում է Սարկով, Մոսկվա, Լենինգրադ, Դնեպրո—պետե-
 րովսկ, Ռոստով և այլն:

Դոնբասի քարածուխը բարձր վորակ ունի. նա գործ է
 ածվում յերկաթահանքից թուջ ստանալու համար:

Դոնբասից վոչ հեռու գտնվում են Կրիվոյ Րոգի և Կերչի
 թերակղզու հարուստ յերկաթահանքերը:



Նկ. 58. Գործարան Դոնբասում

Դոնբասը, Կրիվոյ Րոգը, Կերչի թերակղզին և դրանց միջ-
 գտնվող բազմաթիվ գործարանները կազմում են մի առանձն և
 արդյունաբերական շրջան, վորը կոչվում է Հուրապային առ-
 ցյունաբերական օջախ:

Հարավային արդյունաբերական շրջանում շինում են վա-
 գոններ, շոգենավեր, գուղաստանաական մեքենաներ, արակ-
 առններ, ընթեր, մեխեր, տանիքի յերկաթի թրիեղ, կամուր-
 ջների մասեր և այլն:

Սոցիալիստական Միություն Գ. և Գ. տարի—8

Ինքնակր — պետրովսկը, Նիկոլայնը, Ստալինոն, Լուգանսկը, Զապորոժյեն խոշոր արդյունաբերական կենտրոններ են:

Դոնբասում պատրաստում են նաև սողա, թթուներ, հալածապակե և ապակե ամաններ, վորոնք նույնպես համամիութենական նշանակություն ունեն:

Հնգամյա պլանի համաձայն 1933 թ. ստանալու լինք 17 միլիոն տոնն թուջ, վորի մեծ մասը Հարավային արդյունաբերական շրջանն է տալու: Խորհրդային Իշխանությունը ներկայումս վոչ միայն վերանորոգում է հին գործարանները, այլ և ստեղծում է նոր լեռնաթուղափործական գործարաններ, վստանցից Զապարոժյեի գործարանը ս.ալու լե 1 միլիոն տոնն թուջ, Մարիուպոլինը՝ 710 հազար տոնն, Կերչինը՝ 480 հազար տոնն:

Մեծ չափերի լին հասնելու վազոնների, շոգենավերի, անացքների, գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը:

Հարավային արդյունաբերական շրջանն ինչ հանքերով է հարուստ:

- Պոնտան ինչ է արդյունահանում:
- Հար. արդյունաբերական շրջանում ինչ գործարաններ կան:
- Անդալուսից ինչ ճանապարհներով կարելի յե Դոնբաս գնալ:

Ասալինգրադը srակսորհերի արտադրության կենտրոն. Գյուղատնտեսական բոլոր աշխատանքների կեսից ավելին կազմելի յե արակտորների միջոցով կատարել. այդ պատճառով արակտորները մեծ դեր են կատարում գյուղատնտեսություն արցիտիլիստական վերակառուցման գործում:

Միշտ է, Գուսարյովի գործարանը արակտորներ արտադրում է, բայց դա այնքան քիչ է, վոր մենք ստիպված ենք լինում Անգրիկայից տասնյակ հազար արակտորներ ևս ներմուծել:

Հորպեսզի ազատվենք արակտոր ներմուծելուց և մյուս պարից կարողանանք բավարարել լերկրի կարիքներին, մենք միայն Ասալինգրադում կառուցում ենք խոտո գործարան, վորը ստեղծամ սալու լե 50,000 srակսոր: Այդ բոլոր արակտորները պետք է լինեն մի տեսակի («Ինտերնացիոնալ») և իրարից անտարբերվեն միայն համարներով:

Մենք մի արակտոր բաղկացած է մոտ 5 հազար մասերից, այդ մասերը հավաքվում են բանվորների և մեքենաների մի-

շոցով այնքան արագ, վոր ամեն վեց բուլեից հետո Ստալինգրադի գործարանի ղուներովմեկ նոր արակտոր դուրս կգա:

Ստալինգրադը հարմար աշխարհագրական դիրք ունի. նրա միջոցով հյուսիսից հարավ հոսում է նավագնաց Վոլգան, իսկ արևելքից արևմուտք անցնում են լեռնաթուղիներ:

Նա մետաղը կատանա Ուրալից, իսկ քարածուխը Դոնբասից: Առաջին արակտորը պատրաստ լեղավ 1930 թ. հունիսի 16-ին և նվիրվեց Համ. Կոմ. Կուս-ի XVI համագումարին:

Բացի Ստալինգրադից արակտորներ պատրաստվում են նաև Ուրալում, Սարկովում և Լենինգրադում: Հնգամյակի վերջում մեր բոլոր արակտորի գործարանները կարտադրեն մոտ 200 հազար հատ արակտոր տարեկան:

Ստալինգրադից Յերևան արակտորներն ինչ ճանապարհներով կարելի յե ստանալ:

Ս Ի Բ Ի Բ

Քարտեզի վրա ցույց տվեք ամբողջ Սիբիրը: Գտեք Ուր, Յենիսեյ և Լենա գետերը, Բայկալ լիճը: Յերևանից Սիբիր կարելի յե գնալ հետևյալ ճանապարհներով՝ Յերևան-Քիմիկիս-Բագու-Կասպից ծով-Կրասնովոդսկ-Աշխաբադ-Ալմա-Աթա-Սեմիպալատինսկ-Բարնաուլ-Նովոսիբիրսկ: Վերջին յերկու քաղաքները գտնվում են Սիբիրում: Ցույց տվեք այդ ճանապարհը: Մասշտաբով չափեցեք այդ ճանապարհի յերկարությունը: Ուրալյան լեռներից մինչև Սազազ ովկիանոսը Սիբիրի յերկարությունը: Մասշտաբով չափեցեք այդ ճանապարհի յերկարությունը: Սիբիրը վեր գոտիներում է գտնվում: Ցույց տվեք Սիբիրի այն մասը, վոր գտնվում է ցուրտ գոտում:

Սիբիրի դիրքը, սահմանները յեվ մակերեվույթի մեծությունը: Սիբիրը բռնում է Ասիայի հյուսիսային մասը: Նա տարածվում է Ուրալյան լեռներից մինչև Սազազ ովկիանոսը և Հյուս. Բևեռային ծովից մինչև Չինաստանի սահմանները: Հյուսիսից նրա սահմանն է Բելոկոնային ծովը, արևմուտքից՝ Ուրալյան լեռները, հարավից՝ Ուրալ և Արալ-Կասպիական ավազանների ջրբաժան գիծը, ապա մի շարք լեռնաշղթաներ, վորոնցով Սիբիրը բաժանվում է Չինաստանից և Մոնղոլիայից:

Արևելքից Սիբիրի ավերը վողոգում են Բեբրինգյան, Ուստայան և Յապոնական ծովերը:

բնակիչների գլխավոր զբաղմունքը կազմում է ձկնորսութունը, վորսորդութունը և լեղջերապահութունը:

Սիբիրի սայգան: Տունդրաներից հարավ ձգվում է Սիբիրի սայգան: Յերկրագնդի վրա վոչ մի լեռնիկը այնպիսի ընդարձակ անտառներ չունի, ինչպես Սիբիրը:

Սիբիրի անտառները Խորհ. Միության գլխավոր հարստութուններից մեկն են: Բայց դժբախտաբար հարմար ճանապարհներ չլինելու պատճառով մենք Սիբիրից շատ փայտ դեռ չենք կարողանում արտահանել:

Անտառի անտեսությունը զարգացնելու համար Խորհ. Իշխանությունը ծրագրել է տալգայի շրջանում անցկացնել նոր լեռնաթուղիներ ու շրանցքներ և ավելի լայն չափերով ոգտագործել հյուսիսային ծովային ճանապարհը:

Անտառներում տպրում են ոսայակները, վոգուլները, յակուտները, տունգուսները և այլն, վորոնց գլխավոր զբաղմունքը կազմում է ձկնորսությունը, վորսորդությունը և լեղջերապահությունը: Սիբիրի անտառները հարուստ են աղվամաղ կենդանիներով, վորոնց մորթիները մեծ գին ունեն արտադրմանում:

Յարական իշխանության որով կուլակները շահագործում են ին վորսորդներին և այդ պատճառով վորսորդությունը հետադեպ է ընկնում եր: Այժմ Տայգան կենդանանում է. զարգանում են վորսորդությունը և ձկնորսությունը. կազմվում են ազգային խորհուրդներ, վորոնք հոգում են իրենց կարիքների մասին, հիմնվում են կուլտրազաներ, և այլն: Տունգուս աշխատավորը համոզվեց, վոր ուս գյուղացին իր թշնամին չէ, այլ ընդհակառակը՝ նրա բարեկամը, ընկերը:

Տեղացիների հետ առևտուր է անում վոչ թե վաղխառուն, այլ կոտպերատիվը:

Սիբիրի սափաստաններ. Տայգայից դեպի հարավ տարածվում են անտառատափաստանները, իսկ ավելի հարավ տափաստանը: Տափաստանները մեծ աեղ են բռնում մանավանդ Որի ավազանում, Արևմտյան Սիբիրում:

Արևմտյան Սիբիրի սևահողային տափաստանները Խորհ. Միության ցորենի ԵՏԵՄԱՐԱՆՆԵՐԻԿ մեկն են: Ընդարձակ տարածություններ ծածկված են ցորենի արտերով և բերքն այնքան

մեծ է, վոր ցորենի մի մասը փոխադրվում է Յեվրոպական մասը:

Բացի հացահատիկների մշակությունից կարևոր նշանակություն ունի նաև յուղը: Ամեն տարի Սիբիրից արտահանվում է մեծ քանակությամբ յուղ:

Արևմտյան Սիբիրի տափաստանների շրջանում գտնվում են մի շարք խոշոր քաղաքներ, վորոնց ազգաբնակչությունն աճում է շատ արագ: Այնտեղ, վորտեղ լեռնաթուղին կառուցվել է, Որ գետը, գտնվում է արևմտյան Սիբիրի կենտրոնական քաղաքը՝ Նովոսիբիրսկը: 1892 թ. այստեղ գտնվում էին 6 լոբոզաքը՝ Նովոսիբիրսկը: 1930 թ. քաղաքի բնակիչների թիվը կազմում էր 150 հազար հոգի: Հնգամյակի վերջը պետք է լինի 300 հազար: Տոմսկը և Ոմսկը վոչ միայն խոշոր առևտրական, արդյունաբերական, այլև կուլտուրական կենտրոններ են:

Որի ձախ ավին կառուցվում է Սիբիրյանց, վորը տարեկան 25 հազար կոմբայն է արտադրելու: Սիբիրյանցի բանվորների համար կառուցվում է կոմունա-քաղաք՝ 150 հազար հոգու համար:

Գյուղատնտեսական մթերքները վերամշակելու համար կառուցվում են մսի կոնսերվի գործարաններ, շրագացներ, կաթնամշակման գործարաններ և այլն:

ԱՐԵՎՏՏՅԱՆ ՍԻԲԻՐԸ ՑՈՐԵՆԻ ՅԵՎ ՄԹԵՐԱՏՈՒ ԱՆԱՆԱՊԱՀԱԹԵԱՆ ԲԱՅՈՒ Ե

Սիբիրի հանգային հարստություններ: Սիբիրը մեծ հանքային հարստություններ ունի. այստեղ գտնվում են քարածուխ, վոսկի, պլատին, նավթ, լեռնաթ, գրաֆիտ, Թանգալի, քարեր և այլն:

Յարական իշխանության որով Սիբիրը հետամնաց գյուղատնտեսական լեռնիկ էր. հսկայական պաշարով հանքային հարստությունները մնում էին անձեռմխելի: Խորհրդային տարից հետո Սիբիրը կենտրոնանում է: Առաջ են գալիս նոր արդյունաբերական կենտրոններ՝ Կուլբաս, Վասսիլբուգալ և այլն:

Քարածուխի հսկայական պաշար գտնվում է Կուլգենցի քաղաքում:

զաքի շրջանում: Խորհրդ. Միության քարածուխի ամբողջ պաշարի 70%-ը գտնվում է Կուզնեցկի ավազանում, վոր կոչվում է Կուզբաս:

Կուզբասում մոտ 7 անգամ ավելի քարածուխ կա, քան Դոնբասում: Կուզբասի քարածուխը աչքի չե ընկնում վոչ միայն իր պաշարով, այլ և վորակով:

Ուրալը հարուստ է լեռկաթահանքերով, բայց չունի կոքսացող քարածուխ: Կուզբասն, ընդհակառակը, հարուստ է քարածուխով, բայց աղքատ լեռկաթահանքով: Իրա համար ինչպես տեսանք, Խորհրդ. Իշխանութունը ծրագրել է այդ լեռկու շրջանները կապել իրար հետ: Կուզբասի քարածուխը պետք է տեղափոխվի Ուրալ, իսկ Ուրալի լեռկաթահանքը՝ Կուզբաս:

1932 թ. Կուզբասը պետք է տա 24 միլիոն տոնն քարածուխ, իսկ 1937 թ. մոտ 50 միլիոն տոնն:

Շատ քարածուխ կա Միևուսինսկ քաղաքի շրջակայքում (Կուզբասից դեպի արևելք), Չեմբուվո քաղաքի շրջակայքում (Բալիալ լճից արևմուտք), Սախալինում և այլն:

Բալիալ լճից դեպի հյուսիս-արևելք, Լենա գետի ավազանում Բոդայբո քաղաքի շրջակայքում ստացվում վոսկի:

Սիբիրի զանազան տեղերում տարածված են գրաճիս, արծաթ, կապար, պղինձ, վոլֆրամ, մոլիբդեն և այլն:

Այս հսկայական հարստություններն ոգտագործելու համար հատկացվել են հսկայական դրամական միջոցներ:

Կառուցվում են ելեկտրոկայաններ, նոր լեռկաթուղիներ, իճուղիներ, ջրանցքներ, գործարաններ:

Սիբիրի լեռկաքուղիները. Սիբիրը շատ մեծ լեռկիր է, բայց հարմար ճանապարհներ քիչ ունի: Գլխավոր լեռկաթուղին անվանում է Ուրալում և հասնում է մինչև Խաղաղ ովկիանոսի թերթը՝ Վլադիվաստոկ:

Նովո-Սիբիրսկ քաղաքից դեպի հարավ անցնում է մի կտրևոր գիծ, վորով Արևմտյան Սիբիրը միանում է Կազակստանի և Քուրբեստանի հետ: Մի ուրիշ գծով Սիբիրի գլխավոր լեռկաթուղային գիծը միանում է Կուզնեցկի հետ:

Յուլյ ավեր Լենինգրադից դեպի Վլադիվաստոկ անցնող լեռկաթուղային գիծը:

ՈՒԿՐԱՅԻՆԱՅԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ ի քարտեզի վրա գտեք Ուկրայինան: Նրա հարավային ասփերն ինչ ծով է վորոգում:

Գտեք Խարկով, Կիև, Ուգեսա, Նիկոլաև, Դնեպրո-պետրովսկ քաղաքները:

Յուլյ ավեր Դնեպր գետը:

Կարելիք չե ծովով Ուկրայինա գնալ. ցուլյց ավեր Բաթում—Ուգեսա ծովային ճանապարհները:

Ուկրայինայի Սև զանվում է Խորհրդային Միության հարավ-արևմտյան անկյունում: Նրա սահմաններն են՝ հյուսիսից Բելուռուսիան և ՌՍՖՍՀ, հարավից՝ Ազովի ծովը, Դրիմի սոց. հանրապետությունը և Սև ծովը, արևմուտքից Ռումինիան և Լեհաստանը, իսկ արևելքից՝ ՌՍՖՍՀ (Հյուսիսային Կովկասը):

Ուկրայինայի մոտ ինչ ոտար պետություններ կան:

Ուկրայինայի մակերևույթի մեծությունն է մոտ 452 հազար քառակուսի կիլոմետր, իսկ բնակիչները թիվը՝ մոտ 30 միլիոն: Միջին հաշվով մի քառ. կիլոմետրի վրա ապրում է 70 մարդ:

Ուկրայինան Խորհրդային Միության հացի բեմադրան է: Ընդարձակ տարածություններ ծածկված են սևահողով, կլիման չափավոր խոնավ է և լեռկրագործության համար շատ նպաստավոր: Այդ պատճառով լեռկրագործությունն այստեղ հսկայական չափերի չե հասնում: Ամբողջ Միության հացի 1/3-ը Ուկրայինայից է ստացվում: բերքն անքան շատ է, վոր հացի մի մասը Սև ծովի վրայով աղտահանվում է:

Մեծ չափերով մշակվում են նաև տեխնիկական բույսեր— բամբակ, ցիտրուսային, կանեփ, արեվածադիկ և այլն:

Ճակնդեղից գործարաններում պատրաստում են բամբակ, վորը ցրվում է ամբողջ Միության մեջ. Խորհրդային Միության մեջ ստացվող շաքարի 80%-ը տալիս է Ուկրայինան:

Շաքարի գործարաններում մուում են ճակնդեղի մնացորդներ, վորոնք հրաշալի մուունգ են անասունների, մանավանդ խոզերի համար:

Ուկրալինայի խոշոր լեզվաբանական անասուններն աչքի են ընկնում իրենց քաշով:

Ուկրալինան մեծ քանակությամբ շուկա չե հանում սիս, բուրդ, խոզի մազ, ձու, և ալյու:

Ուկրալինան վոյ միայն գյուղատնտեսական, այլ և արդյունաբերական յերկիր է:

Ամբողջ Միութիան մեջ ստացվող աղի կեսը, քարածուխի 80%-ը, թուղի 75%-ը Ուկրալինան է տալիս:

Քարածուխը գտնվում է Ուկրալինայի հարավ-արևմտյան անկյունում, Դոնեց գետի ավազանում (Դոնբաս), նա բարձր վորակ ունի և գործ է ածվում յերկաթահանք հալելու, թուղ ստանալու համար:

Յերկաթահանքը գտնվում է Կրիվոյ Բոգուս (Դնեպրի աջ ափին) և Կերչի թերակղզում:

Յերկաթահանքերի և քարածխի հանքերի շրջանում, որին նաև Դնեպրո-պետրովսկում, Արտեմովսկում հիմնվել են խոշոր ձործարաններ, վորտեղ յերկաթահանքը հալում են և ստանում թուղ, յերկաթ կամ պողպատ:

Այլ հալող գործարանների կողքին գտնվում են մի շարք սւրիշ գործարաններ, վորտեղ պատրաստվում են գյուղատնտեսական մեքենաներ, շոգենավեր, վագոններ և այլն:

Այլ, Նիկոլաեվը, Լուգանսկը, Դնեպրո-պետրովսկը խոշոր մետաղագործական կենտրոններ են:

Ուկրալինայի արգյունաբերությունը զարգացնելու համար Խորհրդային Իշխանությունը հսկայական դրամագլուխ է հատկացրել կառուցվում են նոր ածխահորեր, թուղ հալող գործարաններ, մեծ չափերի կհասնի զանազան մեքենաների, շոգենաօջանների, վագոնների, գյուղատնտեսական գործիքների, արակատրոնների, ելեկտրական մեքենաների արտադրությունը: Կբարձրանա շաքարի արտադրությունը:

Արգյունաբերության զարգացմանը կնպաստեն խոշոր ելեկտրակայանները, վորոնցից ամենամեծը կլինի Դնեպրոստրոլը (600 հազար կիլովատ):

Կբարձրանա հացահատիկների բերքատվությունը, նոր կոլխոզների և սովխոզների շնորհիվ մեծ չափերի կհասնի գյուղատնտեսության ապրանքայնությունը:

Առխառնակ.— ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասի համար քարտեզի վրա ներկեցեք Ուկրալինայի բոնած տեղը: Նշանակեցեք Խարկով, Դնեպրո-պետրովսկ և Կիև քաղաքները ներկեցեք Սև և Ազովի ծովերը:

ԲԵԼՈՒՌՈՒՄԻԱՅԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Բելոռուսիան գտնվում է Խորհրդային Միության արևմտյան սահմանի մոտ: Իր մակերևութի մեծությամբ նա միութենական հանրապետությունների մեջ ամենափոքրն է: Գլխավոր քաղաքը Մինսկն է:

ԽՍՀՄ-ի քարտեզի վրա գտեք Բելոռուսիան: Տույց տվեք նրա սահմանները: Բելոռուսիային ի՞նչ ոտար պետություն և սահմանակից:

Բելոռուսիան յերկրագործական յերկիր է: Ցանում է զբլխավորապես հանար, վարաակ է գարի: Սեփական հացը չի բավականանում, պակասորդն ստացվում է Ուկրալինայից:

Հացահատիկներից հետո մեծ նշանակություն ունեն կարտոֆիլը, վուեը և կանեփը, վորոնցով Բելոռուսիան աչքի յերկնկնում ամբողջ Միության մեջ: Կարտոֆիլից գործարաններում պատրաստում են սպիրտ և ուլա, վուշից թեղ են մանում: վուշի և կանեփի մեծ մասն արտահանվում է ոտար յերկրներ:

Կարտոֆիլի, ցանովի յոտերի և բնական արոտատեղերի պատճառով անասնապահությունը մեծ նշանակություն ունի ժողովրդական անասնության մեջ: անասուններից աչքի յերկնկնում մանավանդ յոզերը, վորոնցից մեծ քանակությամբ յոզի մազ է ստացվում: Խոզի մազից սեղական գործարաններում պատրաստվում են յոզազանակներ, վորոնք տարածվում են ամբողջ Միության մեջ: Խոզի մազի մի մասն էլ արտահանվում է:

Բելոռուսիայի համար կարևոր է նաև անսառային ցնեստուրյունը: Փայտից պատրաստում են լուցկու կոթեր, տախտակներ ու գերաններ, թուղթ և այլն:

Այսպիսով Բելոռուսիան արտահանում է ոտար յերկրներ

խոզի մագ, վուռ և կանեփ, իսկ *ԽՍՀՄ* տարբեր շրջաններին տալիս է փայտ (Ուկրաինա), լուցկի, միս և այլն:

Ասխատանք. — Ներկեցեք Բելուուսիայի տեղը, նշանակեցեք Մինսկ քաղաքը:

ԹՅՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ, ՈՒՋԲԵԿՍՏԱՆ ՅԵՎ ՏԱՋԻԿՍՏԱՆ

ԽՍՀՄ-ի քարտեզի վրա ցույց տվեք Թյուրքմենստանը, Ուզբեկստանը և Տաջիկստանը: Նրանք *ԽՍՀՄ*-ի վեր մասումն են գտնվում: Ցույց տվեք Յերևան-Թիֆլիս-Բագու-Կասպից ծով-Կրասնովոդսկ-Աշխաբադ-Սամարղանդ ճանապարհը:

Թուրքեստանի համր քարտեզի վրա ներկեցեք այդ հանրապետությունների տեղը: Նշանակեցեք Աշխաբադ, Սամարղանդ, Դյուշամբ (Ստալինաբադ) քաղաքները, Ամու-Դարիա, Սիր-Դարիա գետերը:

Թուրքմենստանը, Ուզբեկստանը և Տաջիկստանը գտնվում են Կասպից ծովից արևելք և միասին կոչվում են Թուրքեստան կամ Միջին Ասիա:

Թուրքեստանի մեծ մասը հարթություն է. լեռները գրանվում են նրա արևելյան և հարավային սահմաններում և շատերը նրանցից ծածկված են հավերժական ձյունով: Այդ լեռներից սկիզբ են առնում Ամու-Դարիա և Սիր-Դարիա գետերը, վորոնք թափվում են Արալյան լիճը:

Թուրքեստանի կլիման շատ չոր է. անձրևները գալիս են փետրվարին և մարտին, վորից հետո սկսում են լերկարատե շոգեր ու լերաշտներ: Արևն այրում է անխնա կերպով, դաշտերի խոտը խանձվում է. մանր գետերն ու լճերը ցամաքում են և ողբ լցվում է փոշով: Ամառվա շոգերին սգի բարեխառնությունը 40°-ից անցնում է, իսկ գետինը տաքանում է նույնիսկ մինչ 70°: Չմեռն ընդհակառակը ցուրտ է լինում և սառնամանիքները լերբեմն հասնում են մինչև—30°:

Կլիմայի չորությունը պատճառով անապատներն այստեղ ընդարձակ տարածություն են բռնում: Բնակիչներն ապրում են գլխավորապես գետերի և գետակների ափերին, վորտեղ նրանք անց են կացրել բազմաթիվ աբիեսսական ջրանցկներ:

Ամու-Դարիա, Սիր-Դարիա, Զարեշան և այլ գետերի լերկարությունը կանաչ լերիզի պես ձգվում են բանջարանոցները

այդինները, բամբակի և բրինձի ցանքսերը և կազմում կատարյալ ոռոգիս է:

Թուրքեստանը գյուղատնտեսական լերկիր է: Ջրովի տեղերում մշակում են բամբակ, բրինձ, շաքարի ձախնդեղ, ծխախոտ, խաղող, զանազան մրգեր (դեղձ, ծիրան) և այլն: Անշրջողի տեղերում տարածված են ցորենի և գարու ցանքսերը: Անասնապահությունը կարևոր նշանակություն ունի միայն քոչվորների համար: Մեծ քանակությամբ անասուններ պահում են մանավանդ թուրքմեններն ու տաջիկները: Բայց գյուղատնտեսության ճյուղերից վոչ մեկն այնքան արդյունք չի տալիս, վորքան բամբակագործությունը: Ամբողջ գյուղատնտեսական արդյունքի $\frac{3}{4}$ -ը բամբակագործությունն է տալիս:

Թուրքեստանը Խորհրդային Միության առաջին բամբակագործական օրջանն է: Նա Մոսկվայի, Իվանովո-Վոզնեսեն-



Նկ. 50. Ուզբեկի Խրճեթն ոռոգիսում

ակի և այլ քաղաքների տեքստիլ գործարաններին տալիս է բամբակ, վորից այդ գործարաններում պատրաստում են չիթ և այլ գործվածքներ ամբողջ Միության համար: Սրա համար բամբակի գնով Թուրքեստանը ձեռք է բերում զանազան գործարանային ապրանքներ և հաց:

Բամբակի ցանքսերն ընդարձակելու նպատակով Խորհրդային Իշխանությունն անց է կացնում նոր ջրանցքներ: Ջրովի տեղերում կրճատվելու լին հացահատիկների ցանքսերը

և ազատված հողերը հատկացվելու չեն բամբակի մշակութային 1927-28 թվականից մինչև 1932-33 թվականը բամբակի ցանքսերը 718 հազար հեկտարից պետք է հասցնել մինչև 1106 հազար հեկտարի: Բամբակի բերքատվությունը բարձրացնելու համար Տաշկենտ քաղաքի մոտ կառուցվում է մի գործարան, փորտեղ պետք է պատրաստվեն պարարտանյութեր:

Գյուղատնտեսական հումուսը վերամշակելու համար հընգամյակի ընթացքում պետք է հիմնվեն մի շարք գործարաններ — բամբակազտիչ, ձիթհան, կաշվի, կոնսերվի և այլն: Ուղբեկ ստանում և թուրքմենստանում կառուցվում են բամբակի գործարաններ պատրաստելու համար մեկական գործարան:

Թուրքեստանը հարուստ է նաև հանքերով:



Նկ. 51. Լեռնային տաշկենտ

Թուրքեստանի հանքային հարստությունները: Նավթն ըստացվում է Ուզբեկստանում (Ֆերգանա քաղաքի մոտ) և Թուրքմենստանում: Ծծմբի, պղնձի, կապարի հանքերը շահագործելու համար հիմնվում են գործարաններ:

Թուրքեստանի հաղորդակցության միջոցները: Թուրքեստանի գլխավոր ճանապարհներն են Անգրեկասայան և Տաշկենտի լեռնաթուղիները: Առաջինն սկսվում է Կասպից ծովի ափից — Կրասնավոդսկից և Աշխաբադի, Մերվի, Սամարղանդի վայրով հասնում մինչև Պալավ-Արսոյ: Տաշկենտի գիծն սկսվում է Անգրեկասայան գծից և Տաշկենտի, Որենբուրգի վրայով հաս-

նում է մինչև Սամարա (Վոլգա): Այսպիսով Տաշկենտի գիծը Միջին Ասիան միացնում է Յեվրոպական մասի հետ:

Մոսկվայի տեքստիլային գործարաններն ինչ ճանապարհով կարող են բամբակ ստանալ Միջին Ասիայից:

Միջին Ասիայի տնտեսական կյանքի համար շատ մեծ նշանակություն ունի Թուրք-Սիբ լեռնաթուղին, վորը բացվեց 1930 թ. մայիսի 1-ին: Միջին Ասիան Սիբիրից ալժմ եժան գնով հաց է ստանում, դրա փոխարեն ջրովի տեղերում կրճատում է ցորենի ցանքսերը և բամբակ մշակում:

Ուզբեկստանի գլխավոր քաղաքը Տաշկենտն է, վորտեղ գտնվում են բամբակազտիչ գործարաններ, կաշվի, մրգի կոնսերվների, ծխախոտի գործարաններ, սպանդանոցներ, ելեկտրակայան և այլն: Սամարղանդը, Կոկանդը, Անգիժանը և Նամանգանը բամբակագործական կենտրոններ են:

Թուրքեստանում նշանավոր են Ալխաբադը (վարչական կենտրոն, բամբակազտիչ գործարաններ), Մերվը (բամբակագործություն), Կրասնավոդսկը — նավահանգիստ և Կասպից ծովի ափին:

Տաշկենտանի գլխավոր քաղաքն է Ստալինաբադ (Դյուշամբե):

Միջին Ասիան ինչ նշանակություն ունի ամբողջ Միություն համար:

ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Պորերդային Միությունն ուրիշ լեռկրները հետ գշխավորապես ծովով է առևտուր անում, վորովհետև ապրանքները ծովով ավելի եժան կարելի լե փոխադրել: Մովերից ամենակարևորը Սև և Բալտիկ ծովերն են: Բալտիկ ծովով մենք կարող ենք անցնել Արևմտյան Յեվրոպայի լեռկրները — Գերմանիա, Անգլիա, Շվեդիա, Դանիա և այլն:

Յեվրոպայի քարտեղի վրա ցույց տվեք այդ պետությունները և նրանց գլխավոր նավահանգիստները:

Լենինգրադի վրայով մենք արտահանում ենք փայտ, լուղ, ձու և այլն:

Այս ապրանքները վորտեղից են բերվում Լենինգրադ:

Բալտիկ ծովի վրայով մենք ներմուծում ենք բամբակ, կաուչուկ և մեքենաներ:

Բացի Լենինգրադից շատ մեծ նշանակություն ունի և Մուրմանսկը, վորի վրայով մենք առևտուր ենք անում վոչ միայն Արևմտյան Յեվրոպայի, այլ և Ամերիկայի հետ:

Հիշեցեք Սև ծովի գլխավոր նավահանգիստները:

Ցուլց տվեք այն պետությունները, վորոնք գտնվում են Սև ծովի յեզերքին:

Սև ծովով մենք կարող ենք անցնել այն յերկրները, վորոնք գտնվում են Միջերկրական ծովի և Ատլանտյան օվկիանոսի յեզերքին:

Մեր նավերն Ատլանտյան օվկիանոս դուրս գալու համար ի՞նչ նեղուցներով պետք է անցնեն:

Միջերկրական ծովի յեզերքին ի՞նչ պետություններ կան: □

Սև ծովի միութենական նավահանգիստներից մենք արտահանում ենք նավթ, բենզին, մանգան, հացահատիկներ, շաքար և այլն:

Այդ ապրանքները Միության վճար մասերից են բերվում Սև ծովի նավահանգիստները և ի՞նչ ճանապարհներով:

Արտասահմանից Սև ծովի վրայով մենք ուրիշ յերկրներից ներմուծում ենք ավտոմոբիլներ, տրակտորներ, զանազան մեքենաներ. մենք ներկայումս արտասահմանյան մեքենաների կազմակերպում ենք, վորովհետև յերկիրն ինդուստրացման է լինթարկվում և մեր սեփական գործարանները չեն կարողանում բավականաչափ մեքենաներ արտադրել: Յերբ նոր կառուցվող գործարանները կսկսեն գործել, մենք այլևս ուրիշ յերկրներից տրակտորներ ու ավտոմոբիլներ չենք ստանա՝ ընդհակառակը ինքներս կարտահանենք:

Կասպից ծովով մենք կապվում ենք մեր հարևան Ասիական պետության հետ (վո՞րն է այդ պետությունը):

Կասպից ծովի նավահանգիստների վրայով մենք արտահանում ենք շիթ, ամանսեր, լուցկի, շաքար, նավթ. ներմուծում ենք բրինձ, չոր միրգ, բամբակ:

Ցուլց տվեք Կասպից ծովի գլխավոր նավահանգիստները: Կասպից ծովը ի՞նչ անհարմարություններ ունի, համեմատած Սև ծովի հետ:

Խաղաղ օվկիանոսի ափերին գտնվում է Վլադիվոստոկը, վորի վրայով մենք առևտուր ենք անում գլխավորապես Յեվրոպայի հետ, արտահանում ենք փայտ, ձուկ, իսկ ներմուծում ենք գործվածքներ, ցանցեր և այլ պարագաներ:

Հիշեցեք Բևեռային ծովի անհարմարություններն առևտրի մասին: Ցուլց տվեք այն պետերը, վորոնք թափվում են Հյուս. Բևեռային ծովը:

Հյուսիսային Բևեռային ծովը մեր առևտրի համար շատ մեծ նշանակություն չունի (ինչո՞ւ). նավերը կարողանում են այցելել Միբիլի ափերը տարեկան մեկ անգամ, այն ել մեծ զժվարություններով: Այդ նավերն Որի և Յենիսեյի գետաբերաններին են փոխադրում զանազան մեքենաներ, իսկ դրա փոխարեն Միբիլից ստանում են հացահատիկ, մորթի, փայտ, կաշի և այլ ապրանքներ՝ Արևմտյան Յեվրոպայի համար:

Ինչո՞ւ Հյուս. Բևեռային ծովի արևմտյան մասն ավելի մատչելի չէ նավագնացության համար, քան թե արևելյանը: Բևեռային ծովի այս մասում ի՞նչ նավահանգիստներ կան:

Ցամաքային սահմաններից կարևոր է արևմտյանը:

Ցուլց տվեք մեր սահմանակից պետությունները Յեվրոպայում: Գտեք այն յերկաթուղիները, վորոնք ՌՍՖՍՀ, Ուկրայինայի և Բելուսիայի խոշոր քաղաքները միացնում են Արևմտյան Յեվրոպայի հետ:

Այդ յերկաթուղիներով մենք Արևմտյան Յեվրոպա յենք փոխադրում լուղ, վուշ, կաշի, փայտ և կրկնակոշիկներ:

Այդ ապրանքները Միության վճար մասերից են ստացվում:

Միության հարավային սահմանների վրայով մենք կապ-

վում ենք Պարսկաստանի, Թյուրքիայի, Ավղանստանի և Մոն-
ղոլիայի հետ: Այդ լեռկրներին մենք ապրիս ենք գործարանա-
յին ապրանքներ — գործվածքներ, ամաններ, լուցկի և այլն:
Իսկ ստանում ենք կաշի, անասուններ և զանազան հում նյու-
թեր:

Մեր արտաքին առևտուրը պետութան ձեռքին է: Արտա-
սահմանում մենք ունենք ներկայացուցիչներ, վորոնք գնում
են արտասահմանյան ապրանքներ և վաճառում մերը:

III. ԳԼԽԱԼՈՐ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՅԵՎՐՈՊԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ցույց տվեք Յեվրոպա աշխարհամասը:
Գտեք Սև ծովը, Բոսֆորի կամ Կոստանդնուպոլսի և Դարդանելի
նեղուցները, Միջերկրական ծովը, Ջիբրալտարի նեղուցը, Ատանտյան
ովկիանոսը, Լաժանշի ջրանցքը, Հյուսիսային կամ Գերմանական ծովը,
Չուսկ նեղուցը, Բալտիկ ծովը և Ֆիննական ծոցը:
Ցույց տվեք այն ծովային ճանապարհները, վորով կարելի է Բա-
թումից անցնել Լենինգրադ:

Յեվրոպայում, բացի Սորբրգային Միութան Յեվրոպական
մասից, գտնվում են 32 պետություն: Դրանք գտնվում են Սոր-
հրըդ: Միութանից դեպի արևմուտք, Արևմտյան Յեվրոպայում:
Այդ պետություններից 14-ը սահմանադրական պետությու-
ներ են (ունեն թագավոր), 18-ը՝ բուրժուական հանրապետու-
թյուններ են և մեկը սոցիալիստական խորհրդային հանրապե-
տություն է (ԽՍՀՄ):

Յեվրոպայի քաղաքական քարտեզի վրա ցույց տվեք հե-
տևյալ պետությունները և նրանց գլխավոր քաղաքները՝
Ֆինլանդիա (գլխավոր քաղաքն է Հելսինգֆորս), Եստոնիա
(գլխավոր քաղաքն է Իեվի), Լատվիա (Լիբա), Լեհաստան
(վարշավա), Ռումինիա (Բուխարեստ), Գերմանիա (Բեռլին),
Ֆրանսիա (Փարիզ), Անգլիա (Լոնդոն), Իտալիա (Հռոմ) և այլն:

Աշխատանք. — Յեվրոպայի համը քարտեզի վրա ծովերը ներկե-
ցեք կապույտ գույնով և անունները գրեցեք: Տարբեր գույներով ել
ներկեցեք առանձին պետությունները և ապա գրեցեք այդ պետու-
թյունների անունները և գլխավոր քաղաքները:
Նույն քարտեզի վրա նշանակեցեք Արևմտագերմանի, Մուրմանսկ, Լե-
նինգրադ, Ուլան, Նիկոլաև, Սվետոպոլք քաղաքները: Վեր պետության
մեջ են գտնվում այդ քաղաքները:

Ա. Ա. Ղ. Ի. Խ

Յուշյ տվեք Անգլիան: Գոտեք Լոնդոն, Բիրմինհամ, Շիֆիլդ, Մանչեստեր քաղաքները:

Յուշյ տվեք այն ծովային ճանապարհները, վորով կարելի լի Լեւինգրադից կամ Բաթումից Լոնդոն գնալ:

Անգլիան ի՞նչ ծովերով ե շրջապատված:

Անգլիան ի՞նչ գոտում ե գտնվում:

Անգլիան գտնվում ե Յեվրոպայի հյուսիս-արևմտյան կողմում և բազկացած ե լերկու մեծ պետություններից — Մեծ Բրիտանիայից, Իռլանդիայից և մի շարք մանր կղզիներից:

Անգլիայի դիրքը շատ հարմար ե առևտրի համար: Նրա մի կողմը գտնվում են Յեվրոպայի կուլտուրական լերկները — Ֆրանսիան, Գերմանիան, Բելգիան և այլն, իս մյուս կողմը՝ Ատլանտյան օվկիանոսը, վորով նա կապվում ե հարուստ Ամերիկայի հետ: Իր այս դիրքի շնորհիվ Անգլիան գարձել ե առաջին առևտրական լերկիրը: Բազմաթիվ առևտրական նավեր լերթեկում են բոլոր օվկիանոսներում և աշխարհի գանազան ծայրերից բերում հում նյութ՝ գործարանների համար և աննդամթերք ազգաբնակչության համար:

Անգլիան հարուստ ե քարածուխով և լերկաթով: Այդ հանքերի շրջանում գոյացել են բազմաթիվ գործարաններ ու ֆաբրիկաններ, վորտեղ պատրաստվում են լերկաթի և պողպատի բազմաթիվ գործիքներ ու մեքենաներ — ասեղից սկսած մինչև շոգեկառքը: Մետաղի արդյունաբերության կենտրոններն են Բիււմինհամ և շեֆիլդը:


Սակայն Անգլիայի արդյունաբերության մեջ առաջին տեղը բռնում ե վոշ թե մետաղի, այլ տեքստիլ արդյունաբերությունը: Դրոից ներմուծում ե բամբակ և բուրդ, վորից Անգլիայի գործարաններում պատրաստվում են հսկայական քանակությամբ գործվածքներ և ցրում աշխարհի գանազան ծայրերը: Գործվածքների արդյունաբերության կենտրոնը Մանչեստեր և Լիդս քաղաքներն են:

Այսպիսով Անգլիան կարծա մի մեծ գործարան ե, ուր աշխարհի գանազան ծայրերից բերում են գանազան հում նյութ:

Թեր, դրանից գանազան իրեր շինում և ցրում լերկրագնդի բոլոր ծայրերը:

Անգլիայի ազգայինախորքում: Ներկայումս Անգլիայում հաշվում են մոտ 45,5 միլիոն մարդ, վորի մեծ մասն ապրում ե քաղաքներում, իսկ վորը մասը՝ գյուղերում: Քաղաքի բնակչությունն զբաղվում ե արդյունաբերությամբ՝ առևտրի և արանապորտի մեջ:

Անգլիան հարուսների և աղխսների լերկիր ե: Համարիա ամբողջ հողը պատկանում ե կալվածատերերին, վորոնք հողի մեծ մասը ապրիս են ֆերմերներին կապալով: Ֆերմերը հողը մշակում ե բասրակների աղխսանով, բայց այդ բատրակներն այնքան ծանր վիճակում են ապրում, վոր շուտով փախչում են գյուղից:



Նկ. 52. Անգլիայի գաղութներն Ասիայում

Ծանր ե և բանվորների վիճակը: Գործազուրկների թիվը 2 միլիոնից անց ե: Ըզնաժամների պատճառով հաճախ փախվում են գործարանները և բանվորները փողոց նեալում:

Այսպիսով հարուստ կալվածատերերի զիմաց գտնվում ե անհող բատրակը՝ իսկ հսկայական հարստության ունեցող գործարանատերերի զիմաց՝ բանվորը:


Անգլիայի գաղութները: Անգլիան իր գործարաններին

հում նյութ հասցնելու համար և մյուս կողմից՝ վորպեսզի գործարաններում պարաստած իրերը կարողանա հեշտությամբ վաճառել, բռնի կերպով զրավել և գանազան լերկրներ և դարձրել և իր գաղութները նրանք ցրված են ամբողջ լերկրագնդի վրա:

Ասիայում Անգլիային պատկանում են Պալեստինը, Միջագետքը, Հնդկաստանը և այլն:

Դրանցից ամենամեծը Հնդկաստանն է, վորը գտնվում է Ասիայի հարավային մասում և շրջապատված է Հնդկական օվկիանոսով: Հնդկաստանի մակարդակը հավասար է մոտ 4,9 միլիոն քառ. կիլոմետրի, իսկ բնակիչների թիվը՝ 325 միլիոնի:

Հնդկաստանի կլիման տաք է, այդ պատճառով այնտեղ աճում են թեյ, բրինձ, բամբակ, բանան և այլն: Հնդկաստանից



Նկ. 53. Անգլիայի և գաղութ հանադայի մեծության համեմատությունը

հարավ գտնվում է Յեյուն կղզին, վոր հռչակված է իր թեյով: Հնդկաստանի գլխավոր քաղաքներն են Կալկաթան և Բոմբեյը: Յերկուսն էլ խոշոր առևտրական կենտրոններ են:

Յույց ավելք Հնդկաստանը: Գտեք Լոնդոն և Գանգես գետերը, Բոմբեյ և Կալկաթա քաղաքները, Յեյուն կղզին:


Յեյունի թեյը Լոնդոն և հասնում հետևյալ ճանապարհով Կոլոմբո Բարել Մանգերի նեղուց:

Կարմիր ծով—Սուեզի ջրանցք—Միջերկրական ծով—Ջիբրալտարի նեղուց—Ատլանտյան օվկիանոս—Լոնդոն: Յույց ավելք այդ ճանապարհը: Գտեք Բաթում—Կալկաթա ծովային ճանապարհները:

Ամերիկայում Անգլիային պատկանում են ամբողջ Կանադան, Նյու Ֆունդլենդ կղզին և այլն, իսկ Աֆրիկայում—Հարավային Աֆրիկան և այլն: Բացի այդ Անգլիային պատկանում է նաև ամբողջ Ավստրալիան:

Վոչ մի պետություն այնքան զաղութ չունի, վորքան Անգլիան:

Անգլիան բնում է 244.000 քառ. կիլոմետր տարածություն, իսկ գաղութները՝ մոտ 36 միլիոն քառ. կիլոմետր: Անգլիայում ապրում է 45,5 միլիոն մարդ, իսկ գաղութներում մոտ 430 միլիոն մարդ:



Նկ. 56. Բրնձի դառերը Հնդկաստանում

Այսքան գաղութներն իր ձեռքում պահելու, տեղական ազգաբնակչությանը շահագործելու համար Անգլիան պահում է խոշոր ուղղակական նավատորմ: Անգլիական ռազմածովային ուժերն տեղն են բռնում թե քանակով և թե արագ ընթացքով: Անգլիան Կանադայից ներմուծում է ցորեն, կաթնամթերք, փայտ, մորթի: Կենտրոնական Աֆրիկայից—կակաո, սուրճ, կաուչուկ հարավ: Աֆրիկայից—բուրդ, վոսկի, ադամանակ: Հնդկաստանից—ցորեն, բրինձ, բամբակ, թեյ, Ավստրալիայից՝ միս, բուրդ, վոսկի և այլն: Անգլիական սալիչի բեռնավորված այդ ապրանքներով, ուղևորվում են Անտիպո:

նալահանգիստները — Լոնդոն, Լիվերպուլ և այլն, ախտեղ դատարկում և փոխարենը վերցնում գործարանային ապրանքներ և տարածում աշխարհի հեռավոր կոյմերում:

Յուլյց տվեք Լոնդոն — Կվերիկ (Կանադայում ծովային ճանապարհը):
Յուլյց տվեք Լոնդոն — Սիդնեյ (Ավստրալիայում) ծով. ճանապարհը:

Քր ա ն ս ի ա

Յեվրոպայի քարտեղի վրա ցույց տվեք Ֆրանսիան:

Գտեք նրա ծովային և ցամաքային սահմանները:

Յուլյց տվեք Ֆրանսիայի զլխավոր քաղաքները՝ — Փարիզ (մայրաքաղաք), Մարսել և Լիոն:

Յուլյց տվեք Բաթումից-Մարսել տանող ծովային ճանապարհը:

Ֆրանսիան գտնվում է Արևմտյան Յեվրոպայում: Նրա սահմաններն են արևելքից Բելգիան, Գերմանիան, Շվեյցարիան և Իտալիան, հարավից Միջերկրական ծովը և Ի. պանիան. հյուսիսից և արևմուտքից՝ Ատլանտյան օվկիանոսը (Լամանշի հետ):

Ֆրանսիայի աշխարհագրական դիրքը առևտրի համար հարմար է թե վոչ:

Միջերկրական ծովով նա վեր աշխարհամասերի հետ կարող է կապվել:

Քրանսիան գյուղատնտեսական-արդյունարեական յերկիր է: Նրա բնակիչները մեծ արդյունք ստանում են թե գյուղատնտեսությունից և թե արդյունաբերությունից:

Ֆրանսիան վեր գտնում է գտնվում:

Ինչո՞ւ նրա կլիման ավելի տաք է, քան Անգլիայի կլիման:

Ֆրանսիայի կլիման տաք է և գյուղատնտեսություն համար նպաստավոր: Տաքություն սիրող բույսերից խաղողը, ձիթենին, կիտրոնը, թթենին, և այլն մեծ արդյունք են տալիս:

Հաջող տարիներին ախճառն ցորեն և ստացվում վոր ծածկում է յերկրի կարիքը: Մեծ չափերով մշակում են նաև ճակնդեղ, վորից պատրաստում են շաքար:

Ֆրանսիան հարուստ է յերկարով, ունի և քարածուխ: Գործարաններում պատրաստում են զանազան մեքենաներ և արտահանում: Ավելի կարևոր նշանակություն ունի տեքստիլ

արդյունաբերությունը: Մրտահանվում են միսսսսս գործվածքներ, պատրաստի հագուստ և սպիտակեղեն:

Ֆրանսիան ԽՍՀՄ-ից գնում է նավթ, փայտ, մորթի, մանգանի հանք և մասամբ զանազան մանրամթերքներ: Դրանց փոխարեն Խ Միությունը Ֆրանսիայից ներմուծում է բուրդ, գունավոր մետաղներ, գյուղատնտեսական մեքենաներ և այլն:

Քրանսիական իմպերիալիզմը և գաղութները: Ֆրանսիան ուժեղ իմպերիալիստական պետություն է: Համաշխարհային պատերազմից հետո նա աշխատում է իր դիրքն ուժեղացնել Յեվրոպայում: Լեհաստանը և Ռումինիան նրա ազենաներն են: Ֆրանսիան մեծ ազդեցություն ունի նաև Բելգիայի, Չեխո Սլովակիայի և Յուգո-Սլավիայի վրա: Ֆրանսիան ամենախն իրավամար այժմ համարվում է Յեվրոպայի ժանդարմը:

Նա վոչ միայն աշխատում է իր ազդեցություն տակ առնել Յեվրոպան, այլև զրավումներ անել մուս աշխարհամասերում: Սրի միջոցով նա զրավել է Աֆրիկայի 1/3 մասը, Հնդկաչինի մի մասն (Ասիայում) և այլն: Նա մեծ ջանքեր է թափում հակահեղափոխական պատերազմ սկսելու ԽՍՀՄ դեմ:

Նրա գաղութները մակարդակի մեծությունը մոտ 12 միլիոն քառ. կիլոմետր է, մինչդեռ ինքը Ֆրանսիան բռնում է միայն 551 հազար քառ. կիլոմետր տարածություն: Ֆրանսիայի բնակիչների թիվը է մոտ 41 միլիոն, իսկ գաղութներինը՝ 102 միլիոն:

Այդ գաղութներում նա պահում է մեծ քանակությամբ զորքեր, վորոնք ամենակատարի միջոցներով խեղդում են անզական ժողովուրդները ազատագրական շարժումը: Շատ մեծ արյունահեղություններ են ընդհանրվում (Աֆրիկայում) և Հնդկաչինի տեղացիներին:

Յուլյց տվեք Ֆրանսիայի Աֆրիկական գաղութները՝ — Մարոկկոն, Ալժիրը և Տունիսը:

Յուլյց տվեք Մարսել-Ալժիր ծովային ճանապարհը:

Հյուս. Ամերիկայի Միացյալ Նահանգները
Յուլյց տվեք ամբողջ Ամերիկան:
Հյուսիսային Ամերիկան միացած է Հարավային Ամերիկայի հետ Պանամայի պարանոցով: Այդ պարանոցով անցնում է մի ջրանցք, վոր

բով Մտանայան ուկլիանոսը միանում է խաղաղ ուկլիանոսի հետ:

Յուշց ավեր ար շրանցքը:

Յուշց ավեր Ամե, իկալի հետեյալ պետութունները—Հյուս. Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Մեքսիկա, Արգենտինա և Բրազիլիա: Հյուս. Ամերիկայի Միաց. Նահանգների ամենամեծ նավահանգիստը Նյու-Յորքն է: Յուշց ավեր Բաթումից Նյու-Յորք տանող ծովային ճանապարհը:

Ամերիկայի բոլոր պետութունները բուրժուական հանրապետութուններ են: Դրանցից աչքի լին լինկուս Հյուս. Ամերիկայի Միացյալ Նահանգներ (մայրաքաղաքն է Վաշինգտոն), Մեքսիկան (մայրաքաղաքը՝ Մեքսիկո), Բրազիլիան (մայրաքաղաքը՝ Րիո-դե-Փանեյրո) և Արգենտինան (մայրաքաղաքը՝ Բուենոս-Այրես):

Դրանց մեջ ամենաուժեղը և ամենահարուստը Միացյալ Նահանգներն են, վորոնք աշխատում են վոչ միայն ամբողջ Ամերիկան իր ազդեցության տակ առնել, այլ և ամբողջ աշխարհը:

Միացյալ Նահանգները նույնպես իմպերիալիստական լինելիք է Միացյալ Նահանգների սահմաններն են՝ հյուսիսից Կանադան, հարավից՝ Մեքսիկան, արևելքից՝ Ատլանտյան, իսկ արևմուտքից խաղաղ ուկլիանոսները: Գտնվելով լերկու ուկլիանոսների մեջ նրանք հեշտութամբ կապվում են թե Յեվրոպայի և Աֆրիկայի հետ, թե Ասիայի և Ավստրալիայի հետ:

Միացյալ Նահանգների մակերևութի մեծութունն է մոտ 9, 4 միլիոն քառ. կիլոմետր, այսինքն համարյա ամբողջ Յեվրոպային և հավասար, իսկ բնակիչները թիվը՝ մոտ 120 միլիոն է:

Միացյալ Նահանգների բնական հարստութուններն անչափ են: Լեռները հարուստ են բարածուխով, լեկաքով, վոսկով, պղնձով, ածախով և այլն:

Քարածուխի, լեկաթի և նավթի արդյունահանութամբ Միաց Նահանգները ներկայումս առաջին տեղն են բռնում:

Յերբրագործութունը հսկայական չափերի լե հասնում: Բամբակի և ծխախոտի բերքով Միացյալ Նահանգները մրցակից չունեն: Ծխախոտի, բամբակի, լեզիպտացորենի բերքն այնքան մեծ է, վոր զրանց մի մասն արտահանվում է Արևմտյան Յեվրոպա:

Մեծ չափերի լե հասնում նաև անասնապահություները Արտահանվում է սառցրած միս, խոզի ճարպ և այլն:

Մինչև համաշխարհային պատերազմը Միացյալ Նահանգները գործարանային ապրանքների արտահանությամբ հետ ելին մնում թե Անգլիա ից և թե Գերմանիայից, իսկ այժմ գերազանցում են: Միաց. Նահանգները մոտ լերկու անգամ ավելի բամբակի գործվածքներ են արտադրում, քան Անգլիան: Մեծ չափերի լե հասնում մետաքսի գործվածքների արտադրութունը:

Խ. Միութունը Միացյալ Նահանգներից մուծում է բամբակ, մեքենաներ և գունավոր մետաղներ:

Միացյալ Նահանգների իմպերիալիզմը և գաղութները Միացյալ Նահանգներն իրենց ուշադրութունը դարձրին նախ անց մանր հանրապետութունների վրա, վորոնք գտնվում են Միջին Ամերիկայում: Նրանք սեփականավորության տակ առան Հալիթի և Կուբա կղզիների հանրապետութունները, դրամով գնեցին Պանամա հանրապետության մի մասը և այնտեղով անցկացրին ջրանցք:

Ունենալով խոշոր գրամական միջոցներ, Միացյալ Նահանգները փոխառութուն են տալիս վոչ միայն Ամերիկայի, այլ և Յեվրոպայի պետութուններին: Այդ փոխառութունների շնորհիվ հիմա Միացյալ Նահանգները նույնպե միջամտում են լեվրոպական գործերին:

Միացյալ Նահանգները գրավել է մի շարք կղզիներ Ասիայում, վորոնցից նշանավոր են Փիլիպյան կղզիները:

Յ ա պ ո ն ի ա

Ասիայի քաղաքական քարտեզի վրա ցույց տվեք Թուրքիան (զբլ-խավոր քաղաքն է Անգորա) Պարսկաստանը (Պեհլան) Ավստրալիան (Քարոլ), Չինաստանը (Նանկին), Յապոնիան (Տոկիո) և ԽՍՀ-ի ասիական մասը:

Ասիայի համը քարտեզի վրա ներկեցեք այդ լերկրները և նշանակեցեք զլխավոր քաղաքները:

Յապոնիան գտնվում է Հեռավոր Արևելքում: Նա բաղկացած է բազմաթիվ կղզիներից, վորոնցից նշանավոր են Հոնկոնգը, Սիկոկուոն, Կիուսիուոն և Յեսուոն:

Այսպիսով Յապոնիան ծովային պետությունն է։ Նա Ասիայի Անգլիան է։

Առանց գաղութների նրա մակերևույթի մեծությունն է մոտ 385 հազար քառ. կիլոմետր, իսկ բնակիչները թիվը՝ 60 միլիոն։

Գաղութների մակերևույթի մեծությունը հաշվում են 300 հազար քառ. կիլոմետր, իսկ բնակիչները թիվը՝ մոտ 20 միլիոն։

Յապոնիան խիտ ազդաբնակություն ունի։ Միջին հաշվով մեկ քառ. կիլոմետրի վրա ապրում է 145 մարդ։



Յի 56. Յապոնիան և Չինաստանը

Յապոնիան լեռնոտ լեռկիր է։ հարմար հողեր շատ քիչ կան։ Ամեն մի ընտանիքին հաղիված հեկտար հող է ընկնում։ Բայց Յապոնացին իր փոքրիկ հողը շատ խնամքով է մշակում և այդ պատճառով բավական բերք է վերցնում։

Յապոնիայի գլխավոր բույսը բրինձն է։ Ամբողջ ազդաբնակությունը կերակրվում է բրնձով։ Թե ինչ նշանակություն

ունի բրինձը լապոնացու համար, այդ լեռնում է նրանից, վոր փոխանակ ճախաճաշ, ճաշ, լնթրիք» ասելու լապոնացին ասում է՝ «առաջվա լապոնացի բրինձ, կետրվա բրինձ, լեռեկոյան բրինձ»։ Չնայելով, վոր Յապոնիան բրնձի մեծ բերք է վերցնում, բայց և այնպես այդ բրինձը չի բավականանում և ստիպված է լինում վորոշ շափով բրինձ ներմուծել ուրիշ տեղերից։ Բացի բրնձից ցանում են ցորեն, գարի և լեզիպտացորեն։

Յուրաքանչյուր լապոնացի իր փոքրիկ վարելահողի կողքին մի փոքրիկ այգի ունի, վորտեղ թեյ և թթենի լեն մշակում։ Թեյի բերքով Յապոնիան ետ է Չինաստանից և Հնդկաստանից, բայց մետաքսի բերքով ամբողջ լեզիպոնացի վրա առաջին տեղն է բռնում։


Չափազանց տարածված է և ձկնորսությունը։ Շրջապատող ծովերը լիքն են թանկարժեք ձկներով և լապոնացիներն այնքան ձուկ են ստանում, վոր լեռեմն չեն հասցնում աղելու և վորպեսզի չփշանա, նրանցից բրնձի դաշաբեր պարարտացնող նյութեր են պատրաստում։

Բրինձը և ձուկը լապոնացու համար նույնն են, ինչ վոր մեզ համար հացը և միսը։ Կաթնեղեն չեն գործածում։ Յե՛վ դա բնական է։ Յապոնիան խիտ բնակված լեռկիր է և, ինչպես տեսանք, մեկ քառ. կիր մետր տարածություն վրա ապրում են մշակել բոլոր պետական հողերը, իսկ այս պայմաններում ազատ արոտատեղ չի մնում։

Յապոնացիները մեծ մասամբ գյուղերում են ապրում։ Գյուղերն այգի լեն ընկնում իրենց մաքրությունը։ Այստեղ դուք գոնե ինքն թափած աղբ չեք տեսնի։ ամեն ինչ գործ են անում հողի վրա պարարտացնելու համար։ Աղբ թափողին այստեղ չեն վարձատրում, ընդհակառակը, աղբ թափողն է տանտիրոջ փող սայիս, վորպեսզի նրա բակի աղբը հավաքի և տանի իր վարելահողը։

Յապոնիայի արդյունազորությունը վերջերս բավական զարգացել է։ Այդ արդյունազորության մեջ առաջին տեղը բռնում է գործվածքներ պատրաստելը։ Բամբակի գործարանները կենտրոնը Ուսական է։ Ես Յապոնիայի համար նույնն է, ինչ վոր Մանչեստերը Անգլիայի համար։

Ինչպես տեսանք, Յապոնիան խիտ բնակված չերկիր է և իր հացը չի բավականանում (Հնդկաչինից ներմուծում է բրինձ, իսկ Մանջուրիայից՝ ցորեն ու բակլա) նա չունի նաև բավականաչափ հում նյութեր իր գործարանների համար: Յապոնիան զբոսից պետք է ներմուծի բամբակ, ջուր, կաշի, լերկաթ և այլն: Այս բոլորը կան հարևան չերկրներում, բայց աջանդերա հետ մրցում են լեզբուպացիները: Ուժեղացնելով իր նավատորմիդն ու զորքը, նա գաղութներ է փնտռում իրեն համար, վոր պետքի կարողանա աջանդից հում նյութեր ստանալ և միևնույն



Նկ. 57. Յապոնիան և Չինաստանը (Մանջուրիայի դրավումը):

ժամանակ վաճառել աջանդ իր գործարանային ապրանքները: Ռուս-յապոնական պատերազմից հետո Յապոնիան գրավեց Մալային կղզու կեսը, Կորեան, և Մանջուրիայի մի մասը—Պորս Արսուր նավահանգստով Յապոնական կառավարութունն առանձնապես ուշադրութուն է դարձնում մանավանդ Չինաստանի վրա, վորտեղ յապոնական կապիտալիստներն առանձին թույլ-

տվութուն են ստացել հանքեր մշակելու համար և աջանդ վաճառում են իրենց գործարանային ապրանքները:

Միաժամանակ նա իր ուշադրութունը դարձնում է նաև դեպի Խաղաղ ովկիանոսի կողմը, վորտեղ բազմաթիվ կղզիներ կան: Պատերազմից հետո Յապոնիան ստացավ գերմանական գաղութները—Մարինյան, Կարոլինյան և Մարեայյան կղզիները: Այստեղ ել նրան խոչնդոտ են հանդիսանում Միացյալ Նահանգները:

Այսպիսով չերեք խոշոր իմպերիալիստական պետութունները Յապոնիան, Անգլիան և Միացյալ Նահանգները մրցում են իրար հետ նրանցից ամեն մեկն աշխատում է ապահովել իր առևտուրը և արդյունաբերութունը: Յեվ զրա համար նրանցից ամեն մեկն աշխատում է զինվել, ուժեղացնել իր նավատորմը:

Յապոնիան իր արտաքին առևտրով կարևոր տեղ է բռնում նրա նավերն այժմ չերթ եկում են բոլոր ովկիանոսների վրա: Յապոնիան միապետութուն է: Պետութան գլուխն է կայսրը (միկադո), վորի իրավունքները սահմանափակված են պարլամենտով:

Մարաքաղաքն է Տոկիոն (մոտ 2 միլիոն բնակիչով), վորը Յապոնիայի առևտրական գլխավոր կենտրոններից մեկն է: Մյուս քաղաքներից նշանավոր են Ոսական (մոտ 2,000,000 բնակիչ), արդյունագործութան խոշոր կենտրոն է Յոկոհաման—թեյի և մետաքսի առևտրի կենտրոն: Նագասակին—նավահանգիստ: Կիսոն Կորեան և այլն:

ԽՍՀՄ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԸ

Իշխանութունը բոլոր չերկրներում, բացի Խորհրդային Միութունից, պատկանում է կապիտալիստներին և կալվածատերերին:

Անգլիան, Իտալիան, Յապոնիան միապետություններ են, վորոնց գլուխ են կանգնած թագավորները: Թագավորների իշխանութունը ժառանգական է:

Գերմանիան, Ֆրանսիան, ամերիկայի Միացյալ Նահանգները, Լեհաստանը բուրժուական հանրապետութուններ են,

վորոնց գլուխ են կանգնած նախագահները (պրեզիդենտները)՝ սրանք ընտրվում են մի քանի տարով:

Միութան մեջ իշխանութունն թւմ է պատկանում:

Ինչո՞ւ մեր չ'ըկիրը կոչվում է Սորերգային Սոցիալիստական Հանրապետութունների Միութուն:

Գործարանները և հողը բոլոր կապիտալիստական լերկըրներում պատկանում են մասնավոր մարդկանց (կապիտալիստներին և կալվածատերերին): Կալվածատերերը շահագործում են բանվոր դասակարգի և աշխատում պակասեցնել աշխատավարձը, լերկարացնել բանվորական որը: Կուսուկիստական կուսակցութունների ղեկավարութիւմը բոլոր լերկըրներում բանվորները պայքարում են կապիտալիստների դեմ, կազմակերպելով գործադուլներ և միախնդներ:

Կապիտալիստական լերկըրներ և նրանց գաղութներ: Մի քանի կապիտալիստական լերկըրներ ունեն ընդարձակ գաղութներ ուրիշ աշխարհամասերում: ալպես որինակ, Անգլիան գրավել է Հնդկաստան թերակղզին (Սախալում), ամբողջ Ավստրալիան, համարյա Աֆրիկայի կեսը և այլն: Անգլիան կարողանում է այդ լերկըրները իր իշխանութան տակ պահել ռազմական և տնտեսական խոշոր նավատորմի միջոցով: Յեւրոպայից Հնդկաստան տանող ամենակարճ ծովային ճանապարհն անցնում է Սուեզի ջրանցքով, վերը նույնպես Անգլիային է պատկանում:


Անգլիան շահագործելով իր գաղութները, մեծ ոգուտներ է վերցնում: Անգլիական կապիտալիստները տեղացիներից առնում են հում նյութ և վաճառում Անգլիայում պատրաստած գործարանային ապրանքները: Անգլիական կալվածատերերը գաղութներում մշակում են սուրճ, կակաո, թեյ, շաքարեղեգ և այլն: Այդ պլանտացիաներում աշխատում են տեղացիները, ստանալով շատ վտորմելի վարձատրութուն: Անգլիական աստիճանավորները գաղութներում ծառայելով, շատ մեծ ոռճիկներ են վերցնում:

Հնդկաստանը Անգլիայի տիրապետութունից առաջ շատ հարուստ լերկիր էր: Գրավելով այդ հարուստ լերկիրը, անգլիացիներն սկսեցին բերել գործարանային ապրանքներ և վա-

ճառել տեղացիներին, զրկելով միլիոնավոր արհեստավորներին ապրուստի միջոցից: մյուս կողմից նրանք ծանր հարկեր դրին հնդիկ գյուղացիների վրին, վտրպեսզի նրանք ստիպված լինեն վաճառել բամբակ և բրինձ:

Այս բոլորի հետևանքն այն լեղամ, վոր լերկիրն աղքատացավ և ծանր որեր է ապրում:

Շատ գաղութներ ունեննաե Միացյալ Նահանգները, Յապոնիան, Փրանսիան:



Նկ. 57. Ինդերիալիստական պետութունները և Չինաստանը:

Ազատագրուկան շարժումները գաղութներում: Բոլոր գաղութներում շարունակ գյուղացիական, ժողովրդական և բանվորական շարժումներ և ապստամբութուններ են ծագում իմպերիալիստական պետութունների դեմ: Գաղութների ժողովուրդներն աշխատում են ազատվել կապիտալիստների շահագործումներից և կեղեքումներից ու ազատ կյանք վարել:

1930 թ, հեղափոխական շարժումը մեծ չափերի հասավ Հնդկաստանում: միլիոնավոր հնդիկ գյուղացիներ մասնակցում

ելին այդ շարժման: Անդլիացիները հեղափոխութիւնը ճնշելու համար գործ դրին տերուպաններ, զրահակիրներ, խեղդիչ գազեր և այլն. բայց հեղափոխութիւնը բոլորովին խեղդել նրանք չկարողացան:

Այսպիսի հեղափոխական բռնկումները կվերջանան միայն այն դեպքում, յերբ կատարվի բուրժուազիայի իշխանութիւնը և կհաստատվի պրոլետարիատի զիկատաւորան:

Կապիտալիստական յերկրներ և Չինաստանը: Կապիտալիստական յերկրները յեղած գաղութներն աշխատում են ընդարձակել: Նրանք գենքի ուժով ձեռք են բերում նոր գաղութներ և հաստատում իրենց իշխանութիւնը: Ոգտվելով Չինաստանի ներքին, քաղաքացիական պատերազմից, Յապոնիան գրավեց Չինաստանի մի քանի շրջանները և ներկայումս այնտեղ գործեր և պահում:

Վերստին Զինաստանը չկարողացավ դիմադրել Յապոնիային, ուստի այդ հանդամանքից ոգտվեցին նաև Միացյալ Նահանգները, Անդլիան և Փրանսիան, սրանք Չինաստանի փոխադրեցին սպառազինված խոշոր զորամասեր և նպատակ ունեն գրավել վերջ շրջաններ և պահել իրենց իշխանութիւն տակը:

Խորհրդային Միութիւնը բանվորա-գյուղացիական յերկիր է և զրա համար ել չի ձգտում գրավել զանազան յերկրներ և շահագործել ուրիշ ժողովուրդներ, ընդհակառակը՝ նա աշխատում է սգնել ճնշված ժողովուրդներին:



Առաջարան 3

Գ. ԽՈՒՄԲ

I Լորդոնի կողմերը 6

Կողմացույց: Պլան: Մասշտաբ: Քարտեզ 11

II Շրջանի աշխարհագրությունը 13

III Խորհրդային Հայաստան

Խ. Հայաստանի սահմանները: Մակերևութի կազմութիւնը: Գետերը և լճերը: Կլիման: Բնակիչները: Ռ՝վ և կառավարում: Լողը: Զբոսայգիները: 20—38

V Անդրկովկաս

Անդրկովկասյան ֆեդերացիան: Սահմանները: Մակերևութի կազմութիւնը: Կլիման և բուսականութիւնը: Գետերը և լճերը: Բնակիչները: Տեխնիկական բույսեր: Հացահատիկների մշակութիւնը: Գյուղատնտ. հումուքների մշակութիւնը: Հանքային հարստութիւնները: Իրանց վերամշակութիւնը: Ելեկարիֆիկացիա: Անդրկովկասի գլխավոր քաղաքները: 39—66

Գ. ԽՈՒՄԲ

Յերկարգու և

VI ԽՈՂՄ

ԽՈՂՄ-ի գերքը և մակարդակի մեծութիւնը: Սահմանները: Խորհ. Միութիւնն ազգութիւնների միութիւն է: ԽՈՂՄ-ի Տեխնոլոգիական մասը: Միջեր: Ուղիքայինայի ՍԽՀ. Բեռուտարայի ՍԽՀ: Թուրքմենստան, Ուզբեկստան և Տաջիկստան: Միութիւն արտաքին առևտուրը 67—146

VII Գլխավոր կապիտալիստական պետութիւնները: ԽՈՂՄ և կապիտալիստական յերկրները: 147—163

Պետերսոնի տպարան
Քառույթ N 2639
Պատկ-7601 (բ)
Էքզեմ. 2323
տիրույթ 20000

Արքայազն (գլ. մամուլից) Լ. Ստոնիյան
Ե. Հարսիսյան

Հանձնված է տպագրության 8 սպեցիմենտով 1882 թ.
Ստորագրված է տպագրության 20 հոկտեմբերի 1882 թ.

Հայաստանի Ազգային գրադարան



NL0429591

20618

5~
ԳԻՆԸ 'n. 50 Կ (10^{1/4} մ.)

Կազմը 30 կոպ.



ГЕОГРАФИЯ
III—IV годы обучения
Сост. А. Элибемян.

Госиздат ССР Армении
Эривань—1932